

ISSN 1829-1155

Հիմնադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրական  
խորհուրդ

Գագիկ Նարոյթյունյան  
Արմեն Նարոյթյունյան  
Վահե Սյրեխանյան  
Վարդյա Նովհաննիսյան  
Վաղերի Դուրոսյան  
Ռաֆայել Դադարյան  
Անուշան Նախրյան

Գլխավոր խմբագիր՝  
Գոհար Աշտունի

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1(46)  
2008

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I. ՀԱՂՈՐԳՈՒՄ

* ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2007Թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	5
--	---

## II. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (704-716)

* ՍԳՈ-704 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԹԻՎ 36 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԵԾԱՍՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 36 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 18-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	41
* ՍԳՈ-705 ԶԱՂԱՔԱՅԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱԿՈՔԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 313 ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	55
* ՍԳՈ-706 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-ԻՆ ՄԵԴԻՐԵՈՒՄ՝ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՎՐԱ ՀԻԴՐՈՒԷԼԵԿԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ....	61
* ՍԳՈ-707 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ԿԱՀԻՐԵՈՒՄ՝ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍԱՔՍԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	64
* ՍԳՈ-708 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	67
* ՍԳՈ-709 ԶԱՂԱՔԱՅԻ ՌՈՒՋԱՆՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 407 ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 414.2. ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԿԵՏԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	71
* ՍԳՈ-710 ԶԱՂԱՔԱՅԻ ԳԵՎՈՐԳ ԳՋՐԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 311 ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ, 414.2. ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	78
* ՍԳՈ-711 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՂԵՏԻ ՄԵՂՍԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿԱՅԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՐԱՍՊՈՐՏԱՆ ՄԱՍԻՆ» ՏԱՊԵՐԵԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	89
* ՍԳՈ-712 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ԿԱՀԻՐԵՈՒՄ՝ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	93
* ՍԳՈ-713 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ԿԱՀԻՐԵՈՒՄ՝ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՆՁՆԱՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	96

* ՍԳՈ-714 «ԽԱՐԻՍԽ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՍԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 17.12.1997Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ (ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ) ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 13 ՀՈԳՎԱԾԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	99
* ՍԳՈ-715 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ՝ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՀԱԲԵԿԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	105
* ՍԳՈ-716 ՔԱՂԱՔԱՅԻ ԱԼԲԵՐՏ ՄՈՎՍԵՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՍԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 57 ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	109
* ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ .....	115
 <b>III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ</b>	
* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ .....	118

**ՀԱՂՈՐԴՈՒՄ**  
**2007 թ.**  
**ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ**  
**ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ**  
**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՍՏԱՏՎԵԼ Է**  
**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**  
**21 ՀՈՒՆՎԱՐԻ 2008Թ. ՍԳԱՌ-4**  
**ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՄԲ**

**ԳԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
2007 ԹՎԱԿԱՆԻՆ**

2007 թվականին սահմանադրական դատարանում մուտքագրվել են սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների 336 դիմում, ինչպես նաև այդպիսի իրավասություն չունեցող անձանց 655 դիմում:

Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների կողմից փաստացի դիմումների պատկերն այսպիսին է.

1. ՀՀ Նախագահ – 39 դիմում,
2. ՀՀ Ազգային ժողով – 0 դիմում,
3. պատգամավորների առնվազն մեկ հինգերորդ - 1 դիմում,
4. ՀՀ կառավարություն – 0 դիմում,
5. տեղական ինքնակառավարման մարմիններ – 0 դիմում,
6. ֆիզիկական անձինք – 89 դիմում,
7. իրավաբանական անձինք – 9 դիմում,
8. դատարաններ – 0 դիմում,
9. գլխավոր դատախազ - 0 դիմում,
10. մարդու իրավունքների պաշտպան – 2 դիմում,
11. Հանրապետության Նախագահի թեկնածուներ – 0 դիմում,
12. կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) և պատգամավորության թեկնածուներ – 7 դիմում:

Դատական կազմերի կողմից քննության է առնվել 95 անձանց անհատական դիմում:

Դրանցից քննության է ընդունվել 66 դիմում, մերժվել՝ 18 դիմում:

Սահմանադրական դատարանի լիազումար նիստի քննարկմանն է ներկայացվել 9 դիմում: Սահմանադրական դատարանի լիազումար նիստում աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունվել 6 անհատական դիմում, մերժվել՝ 3 դիմում: 2 դիմում գտնվում է դատական կազմերում, 3-ը՝ դիմողներն հետ են վերցրել:

Ամբողջ տարվա ընթացքում ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների և գլխավոր դատախազի կողմից նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցերով ոչ մի դիմում չի մուտքագրվել սահմանադրական դատարան: Դա այն դեպքում, երբ առանձին երկրներում միայն դատարանների դիմումների հիման վրա սահմանադրական դատարանների կողմից քննության առնված գործերը կազմում են տարվա ընթացքում քննված

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

գործերի կեսից ավելին: Գործերի քննության ընթացքում, մասնավորապես, դատական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ հատկապես ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրված նորմ-սկզբունքը, համաձայն որի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք», շարունակում է վերացական բնույթ կրել:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ամբողջ տարվա ընթացքում Ազգային ժողովի պատգամավորների 1/5-ը միայն մեկ անգամ է փորձ արել դիմել սահմանադրական դատարան, սակայն մինչև գործի քննությունն սկսելը նրանցից մեկի կողմից դիմումը հետ վերցնելու պատճառով չի ապահովվել դիմող սուբյեկտի՝ օրենքով նախատեսված կարգավիճակ, և սահմանադրական դատարանը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 3-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 2-րդ մասով, 33 հոդվածի 1-ին մասով, 60 հոդվածի 1-ին մասով, գործի վարույթը կարճել է:

Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը դիմող սուբյեկտների համար ոչ միայն հայեցողական լիազորություն է, այլև ենթադրում է նաև որոշակի պարտավորություն՝ երկրում սահմանադրական օրինականություն հաստատելու և Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու հարցում: Առավել ևս այն իրավիճակում, երբ սահմանադրական փոփոխությունների արդյունքում դեռևս բազմաթիվ իրավական ակտեր չեն համապատասխանեցվել այդ փոփոխություններին: Իրավական ժողովրդավարության ամրապնդման առանցքային խնդիրը սահմանադրական նպատակների, սկզբունքների ու կոնկրետ նորմերի երաշխավորումն է իրավական համակարգում և իրավակիրառական պրակտիկայում: Միայն այդ ճանապարհով է հնարավոր ապահովել երկրի դիմամիկ ու կայուն զարգացումը: Պետական իշխանության մարմինները չեն կարող ամենօրյա առնչություն չունենալ Սահմանադրության հետ: Ու եթե այդ առնչությունը խորքային է, ապա կենսական ու առաջնային է դառնում ամենօրյա ուշադրությունը Սահմանադրության գերակայության ապահովմանը: Իսկ Սահմանադրական բոլոր ինստիտուտները նաև սահմանադրական վերահսկողության կամ հսկողության առաքելություն ունեն:

Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ միջազգային պրակտիկայում սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ակտիվությունը դիտարկվում է որպես իրավական պետության կայացման, սահմանադրական ժողովրդավարության ամրապնդման և սահմանադրական մշակույթի ձևավորման կարևոր չափանիշներից մեկը: Այս հանգամանքին անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնեն սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող բոլոր սուբյեկտները:

**ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՅ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

**ՀՀ Նախագահի դիմումների հիման վրա ընդունված ՍԳ որոշումները  
և դրանց կատարումը**

ՀՀ Նախագահի կողմից ներկայացված բոլոր 39 դիմումները սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության: Դրանք վերաբերել են միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը:

ՀՀ Նախագահի 39 դիմումներից 9-ը դեռևս չեն քննվել: Մնացած 30-ով սահմանադրական դատարանն ըստ էության որոշումներ է կայացրել, որոնցով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Նշված 37 միջազգային պայմանագրերի թվում են 10 բազմակողմ (3 ունիվերսալ և 7 տարածաշրջանային) և 27 երկկողմ (16 օտարերկրյա պետությունների և 11 միջազգային կազմակերպությունների հետ) համաձայնագրեր: Քննության առարկա դարձած պայմանագրերից 24-ը՝ միջպետական և 13-ը միջկառավարական են:

Քննության առնված 30 պայմանագրերից 25-ը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից, մնացած պայմանագրերը դեռ չեն ներկայացվել ՀՀ Ազգային ժողով՝ ՀՀ Սահմանադրության 81 հոդվածի երկրորդ կետին համապատասխան կամ դրանց վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Սահմանադրության 62 հոդվածի առաջին մասի համաձայն, դեռևս որոշում չի կայացրել:

Անցած տարվա ընթացքում քննության առնված միջազգային պայմանագրերի առնչությամբ իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման վիճակի վերաբերյալ ներպետական հստակ մոնիտորինգի մեխանիզմն անցած մեկ տարվա ընթացքում այդպես էլ չի ձևավորվել՝ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. հունվարի 25-ի ՍԳԱՈ-3 աշխատակարգային որոշմամբ հաստատված՝ «2006թ. ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ» հաղորդման մեջ նշվել էր նման մոնիտորինգի մեխանիզմի բացակայության մասին:

2007թ. ընթացքում սահմանադրական դատարան ներկայացված առնվազն երեք միջազգային պայմանագրերի հայերեն պաշտոնական

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ**

տարբերակներն էական բովանդակային շեղումներ են ունեցել բնագրերից: Սահմանադրական դատարանի պահանջով այդ թերացումները շտկվել են: Սակայն նման փաստերը վկայում են միջազգային պայմանագրերի, հատկապես վարկային համաձայնագրերի, վավերացման նախապատրաստման որակի բարձրացման անհրաժեշտության մասին:

Մտահոգիչ պետք է համարել նաև ՀՀ սահմանադրական դատարանի քննությանը ներկայացված միջազգային պայմանագրերի կապակցությամբ ՀՀ կատարած վերապահումների կամ առարկությունների բովանդակության նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը: Անհրաժեշտ է նշել, որ միջազգային բազմակողմ պայմանագրերի կապակցությամբ արված վերապահումներն ու առարկություններն ունեն դրանք կատարած պետությունների համար այն նույն իրավաբանական ուժն ու նշանակությունը և առաջացնում են այն նույն իրավաբանական հետևանքները, ինչը համապատասխան միջազգային համաձայնագրի դրույթները: Սակայն առանձին դեպքերում հստակ բովանդակային տարբերակում չի դրվում միջազգային պայմանագրերի առնչությամբ ՀՀ կատարված հայտարարությունների և վերապահումների միջև, ինչի արդյունքում վերապահման բովանդակությունն ունեցող փաստաթուղթն ստանում է հայտարարություն անվանումը, և՛ հակառակը:

Նպատակահարմար ենք համարում մատնանշել ՀՀ-ի կողմից մի շարք միջազգային պայմանագրերի չվավերացման կամ դրանց չմիանալու հարցը, այն պարագայում, երբ դրանց վերաբերյալ տարբեր առիթներով հղումներ են կատարվում և վերջիններիս դրույթներն առանձին հարաբերությունների կարգավորման բնագավառներում դարձել են Հայաստանի Հանրապետության համար պարտադիր: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1947թ. նոյեմբերի 21-ին ընդունված՝ ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների արտոնությունների ու անձեռնմխելիության մասին կոնվենցիային, որի մի շարք դրույթների պարտադիր լինելը Հայաստանի Հանրապետության համար ամրագրվել է ՀՀ մասնակցությամբ բազում միջազգային պայմանագրերում, մասնավորապես, «Ադետի մեղմացման և օգնության ցուցաբերման նպատակով հեռահաղորդակցական ռեսուրսների տրամադրման մասին» Տամպերեի 1998 թվականի հունիսի 18-ի կոնվենցիայում, Հայաստանի Հանրապետության կառավարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջև 2005 թվականի փետրվարի 24-ին ստորագրված՝ «2005-2009 թվականների համագործակցության ծրագրի գործողությունների պլանում (այսուհետ՝ Գործողությունների պլան)» և այլն:

Մասնավորապես, վերը հիշատակված Գործողությունների պլանով (օր., մաս 9.1.) Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է կիրառել ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների արտոնությունների և անձեռնմխելիության մասին կոնվենցիայի դրույթները Միավորված ազ-

գերի կազմակերպության Ջարգացման ծրագրի սեփականության, միջոցների և գույքի, ինչպես նաև պաշտոնյաների և խորհրդատուների նկատմամբ: Մինչդեռ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանը, 2003 թվականի նոյեմբերի 18-ին քննության առնելով 1946թ. փետրվարի 13-ին Նյու Յորքում ստորագրված՝ Միավորված ազգերի կազմակերպության արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը, իր ՄԳՈ-456 որոշմամբ դրանք ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ ամրագրելով, սակայն, որ տվյալ Կոնվենցիայի 18-րդ բաժնի գ) կետի դրույթների նկատմամբ («Միավորված ազգերի պաշտոնատար անձինք... ազատվում են պետական ծառայողական պարտականություններից») Հայաստանի Հանրապետությունը հանդես է եկել վերապահմամբ, ըստ որի՝ այդ դրույթները չեն տարածվում ՀՀ քաղաքացիների վրա: Դրանով իսկ վերացել է Կոնվենցիայի տվյալ դրույթի և ՀՀ Սահմանադրության հոդված 46-ի միջև հնարավոր հակասությունը:

ՄԱԿ-ի Մասնագիտացված գործակալությունների արտոնությունների և անձեռնմխելիության մասին 1947թ. կոնվենցիայի բաժին 20-ը ևս պարունակում է համանման դրույթ, համաձայն որի՝ «Մասնագիտացված հաստատությունների պաշտոնատար անձինք ազատվում են պետական պարտականություններից, պայմանով, որ այն պետությունների նկատմամբ, որոնց քաղաքացիներ են նրանք հանդիսանում, նման անձեռնմխելիություններից օգտվում են միայն մասնագիտացված հաստատությունների այն պաշտոնատար անձինք, որոնց ազգանունները, ելնելով նրանց պարտականություններից, ներառված են համապատասխան մասնագիտացված հաստատությունների գլխավոր ադմինիստրատորների կազմած և համապատասխան կառավարությունների կողմից հաստատված ցուցակներում:

Մասնագիտացված հաստատությունների այլ պաշտոնատար անձանց պետական պարտականությունների կատարման գործում ներգրավելու դեպքում երկրի կառավարությունը համապատասխան մասնագիտացված հաստատության խնդրանքով այդ պաշտոնատար անձանց ներգրավման կապակցությամբ տրամադրում է այնպիսի ժամանակավոր տարկետում, որը կարող է անհրաժեշտ լինել հաստատության հիմնական աշխատանքում ընդմիջումից խուսափելու համար»: Նշված բաժնի դրույթը, համապատասխան վերապահման բացակայության պարագայում, կարող է կիրառվել նաև ՀՀ քաղաքացիների նկատմամբ՝ առաջացնելով հակասահմանադրական իրավիճակ:

Միաժամանակ, անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել ՀՀ Սահմանադրության հոդված 43-ի մաս 2-ի այն պահանջին, որ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափա-

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

կումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»: Մասնավորապես, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի երկրորդ նախադասությունում ամրագրված նորմի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» 2007թ. հունվարի 16-ի ՍԳՈ-673 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «իրավական համակարգում առկա միմյանց հակասող նորմերը ոչ միայն չեն սպահովում հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորում, այլև սահմանափակում են ՀՀ Սահմանադրությամբ (18, 19 հոդվածներ) երաշխավորված անձի իրավունքների պաշտպանության իրավական հնարավորությունները, այդ թվում՝ դատական կարգով, արդյունքում չեն բխում ՀՀ միջազգային պարտավորություններից, հետևաբար՝ նաև ՀՀ Սահմանադրության 43 հոդվածի (2-րդ մաս) պահանջներից»:

2007 թվականին ՀՀ Նախագահի կողմից Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի հիման վրա որևէ դիմում չի ներկայացվել սահմանադրական դատարան: Մինչև ժամանակ, ՀՀ Նախագահի կողմից 28.12.2006թ. սահմանադրական դատարան ներկայացված մեկ դիմումի հիման վրա քննության ընդունված գործով սահմանադրական դատարանը որոշում է կայացրել 16.02.2007 թվականին: Նշված դիմումը վերաբերում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի վերջին նախադասությունների, 49 հոդվածի «ե» կետի, 112 հոդվածի 2-րդ կետի, 4-րդ կետի վերջին նախադասության և 5-րդ կետի դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելուն:

««Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի վերջին նախադասությունների, 49 հոդվածի «ե» կետի, 112 հոդվածի 2-րդ կետի, 4-րդ կետի վերջին նախադասության և 5-րդ կետի դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 16.02.2007թ. ՍԳՈ-678 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին հակասող և անվավեր ճանաչել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 35 հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի վերջին նախադասություններում, 112 հոդվածի 2-րդ կետով, 4-րդ կետի վերջին նախադասությամբ և 5-րդ կետով նախատեսված դրույթները:

2. ՀՀ Սահմանադրության 62 հոդվածին հակասող և անվավեր ճանաչել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 49 հոդվածի «ե» կետով նախատեսված դրույթը»:

Քննության առնվող հարցի առնչությամբ սահմանադրական դատարանը միաժամանակ փաստել է, որ ՀՀ Սահմանադրության 27 հոդվածը, մի կողմից, երաշխավորում է յուրաքանչյուրի համար կարծիքի ազատ արտահայտման, խոսքի ազատության (ներառյալ տեղեկատվության ցանկացած միջոցով տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատության) իրավունքը, մյուս կողմից՝ կարևորում է լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը՝ որպես հիշյալ իրավունքների ապահովման երաշխիք: Այս ենթատեքստում առանձնակի շեշտվում է, որ «Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը»:

Չանգվածային լրատվամիջոցի անկախությունը, մասնավորապես, ենթադրում է ծրագրային քաղաքականության, հաղորդագանկի կազմման, հաղորդումների ուղղվածության որոշման գործընթացներում ինքնուրույնություն ու ազատություն, այդ գործընթացների վրա իշխանությունների որևէ ազդեցության բացառում: Այդ նկատառումներից ելնելով էր նաև, որ հեռարձակվող լրատվամիջոցների գործունեության կարգավորումը՝ ՀՀ միջազգային պարտավորությունների շրջանակներում, ՀՀ սահմանադրական փոփոխություններով ճանաչվեց որպես սահմանադրաիրավական գործառույթ և Սահմանադրության 83.2. հոդվածով նախատեսվեց. «Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին...»:

Ինչպես ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի դրույթները, այնպես էլ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Հանրային հեռարձակման անկախության երաշխիքների վերաբերյալ թիվ R (96) 10 հանձնարարականը տեղեկատվության ազատության և հանրային հեռարձակման անկախության ապահովման խնդիրների լուծումը տեսնում են օրգանական կապի մեջ: Եվրախորհրդի Նախարարների կոմիտեն հիշյալ փաստաթղթում, մասնավորապես, շեշտելով մամուլի ազատության հիմնարար սկզբունքի կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում, առաջարկում է Եվրախորհրդի անդամ երկրներին օրենսդրությամբ երաշխավորել հանրային հեռարձակումների անկախությունը, որը ենթադրում է ծրագրային, խմբագրական ու կառուցակարգային ինքնուրույնություն: Միաժամանակ, Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականի բացատրական հուշագրի նախաբանի 3-րդ մասում շեշտվում է, որ հանրային հեռարձակման կազմակերպումը տարբերվում է պետական նախատիպերից հենց նրանով, որ այն իրականացվում է անկախ և առանց իշխանության մարմինների որևէ միջամտության: Այդ հաղորդում-

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

ները կազմակերպող մարմինների անկախության երաշխավորումը դիտարկվում է որպես հիմնարար սկզբունք: Շեշտվում է նաև, որ նույնիսկ պետական ֆինանսավորումը չի կարող միջոց դառնալ այդ մարմինների խմբագրական անկախության կամ կառուցակարգային ինքնուրույնության վրա ուղղակի կամ անուղղակի ճնշում գործադրելու համար (Հանձնարարականի 5-րդ մաս): Հանրային հեռարձակման անկախությունը նշված Հանձնարարականով ճանաչելով որպես հիմնարար սկզբունք՝ պահանջ է առաջադրվում, որ այն պետք է գերծ լինի տնտեսական, քաղաքական կամ վարչական ներազդեցությունից և ծառայի ողջ հանրությանը:

Տվյալ ոլորտի իրավական կանոնակարգման համար սկզբունքային նշանակություն ունի Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1641 (2004) 1 հանձնարարականում ամրագրված այն դիրքորոշումը, համաձայն որի՝ հանրային լրատվության հեռարձակումը պետք է տարբերել առևտրային կամ քաղաքական նպատակներ հետապնդող լրատվության հեռարձակումից, քանի որ հանրային լրատվության գլխավոր նպատակը գաղափարներ և տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության անկողմնակալ ապահովումն է ողջ հանրության համար, որով և պայմանավորված է նման լրատվության անկախության անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետությունը, 2000թ. դեկտեմբերին վավերացնելով Եվրախորհրդի կանոնադրությունը, պարտավորվել է առաջնորդվել վերջինիս դրույթներով, հաշվի առնել Նախարարների կոմիտեի և Խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականները և անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել դրանց իրականացման համար:

ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրել է նաև, որ օրենսդիր մարմինն առանձնահատուկ դեր ունի յուրաքանչյուր երկրի ժողովրդավարական զարգացման համար: Պառլամենտարիզմի մշակույթը քաղաքակիրթ բազմակարծության և երկխոսության մշակույթ է: Այն առաջին հերթին դրսևորվում է ժողովրդի կողմից իր իշխանությունը ներկայացուցչական մարմինների միջոցով իրականացնելիս: Հասարակական հարաբերությունների կանոնակարգման նկատմամբ դրսևորվող մոտեցումները և օրենսդիր մարմնի վերահսկողական լիազորությունների թափանցիկ ու հրապարակային իրականացումը քաղաքացիական հասարակության ձևավորման կարևորագույն երաշխիքներից են: Մյուս կողմից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր տարբեր վճիռներում բազմիցս ընդգծել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ ժողովրդավարական համակարգերում իշխանությունների գործունեությունը պետք է ենթարկվի նաև հասարակական կարծիքի ուշադիր վերահսկողությանը: Հայաստանի Հանրապետությունում վերջին 15 տարիների ընթացքում ձևավորվել է նաև այնպիսի կայուն ավանդույթ, որ օրենսդիր մարմնի գործունեությունը եղել է առավել թափանցիկ ու հասու հանրության բոլոր

շերտերին: Իր հերթին, Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականը կարևորելով հանրային հեռարձակման անկախությունը, միաժամանակ բացատրական հուշագրի թիվ 21 ուղղորդիչ ցուցումով նախատեսում է, որ հանրային հեռարձակման խնդիրն է նաև ապահովել քաղաքական բազմակարծությունը՝ խորհրդարանական փոքրամասնությանը, տարբեր քաղաքական ուժերին իրենց տեսակետը ներկայացնելու համար տրամադրելով եթերաժամ:

ՀՀ Ազգային ժողովի, նրա մարմինների ու առանձին պատգամավորների գործունեության լայն հրապարակայնության երաշխավորումը, այդ թվում ներկայումս գոյություն ունեցող և ավանդույթ դարձած ձևերի շրջանակներում, բխում է իրավական, ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքներից և պետք է ապահովված լինի օրենսդրական ու կազմակերպչական անհրաժեշտ հիմքերով: Միաժամանակ, այդ հիմքերը պետք է լինեն իրավաչափ, բխեն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադրական սկզբունքի պահանջներից, չխախտեն սահմանադրական ինստիտուտների գործառնական ու կառուցակարգային անկախության պահանջները: Այդ հարցի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումն արտահայտել է 11.01.2001թ. ՄԴՈ-278 որոշմամբ: Դրա հետ մեկտեղ, ՀՀ սահմանադրական փոփոխությունները նոր պահանջներ առաջադրեցին լրատվամիջոցների ազատության ու անկախ գործունեության երաշխավորման համար: Սահմանադրական դատարանը հատուկ շեշտել է, որ վերջինիս ապահովումը ՀՀ Ազգային ժողովի առջև մասնավորապես խնդիր է դնում փոխկապվածության մեջ վերանայել և Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնել 2000թ. հոկտեմբերի 9-ին ընդունված՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», 2003թ. դեկտեմբերի 13-ին ընդունված՝ «Զանգվածային լրատվության մասին» օրենքների, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի, ինչպես նաև տվյալ խնդրին առնչվող այլ օրենքների համապատասխան դրույթները: Հիշյալ օրենքների դրույթների համեմատական վերլուծությունը վկայում է, որ ՀՀ միջազգային պարտավորություններին համապատասխան Հանրային հեռուստառադիոընկերություն ստեղծելու իրավական երաշխիքները դեռևս լիարժեք ու ամբողջական չեն: Խնդիրը շտապ համակարգային լուծում է պահանջում, և հիմնախնդրին առնչվող որևէ օրենքի այս կամ այն դրույթի սահմանադրականության գնահատմամբ հարցն ամբողջությամբ չի սպառվում: Մասնավորապես, քննության առարկայի առնչությամբ միջազգային պրակտիկան վկայում է, որ հարցի սկզբունքային լուծման բանաձևն օրենսդիր մարմնի գործունեության առավելագույն հրապարակայնության ապահովումն է՝ լրատվամիջոցների, այդ թվում հանրային, գործառնական ու կառուցակարգային անկախության երաշխավորման պայմաններում: Ինչ վերաբերում է իրավաչափ ձևի ընտ-

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

րությանը, ապա դա օրենսդիր մարմնի խնդիրն է: Բոլոր դեպքերում, միջազգային պրակտիկայում առկա ցանկացած ձևի ընտրության պարագայում, պետք է իրավական երաշխիքներ ստեղծվեն, որպեսզի հանրային հեռարձակման պրակտիկայում օրենսդիր մարմնի գործունեության լայն հրապարակայնության և քաղաքական բազմակարծության ապահովումը չվտանգվեն: Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել, որ տվյալ խնդրի լուծման ժամանակ, ելնելով նաև ՀՀ միջազգային պարտավորություններից, ՀՀ Ազգային ժողովն առաջին հերթին պետք է առաջնորդվի ՀՀ Սահմանադրության 27, 83.2. հոդվածների, ինչպես նաև Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականի, դրա բացատրական հուշագրի, Խորհրդարանական վեհաժողովի՝ Հանրային հեռարձակում թիվ 1641 (2004) 1 հանձնարարականի դրույթներով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ որոշման շրջանակներում ամրագրված իրավական դիրքորոշումները դեռևս համարժեք օրենսդրական իրացում չեն գտել:

**ՀՀ ԱԺ պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումներն ու դրանց կատարումը**

Ինչպես նշվեց, սահմանադրական դատարանում մուտքագրված՝ պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի կողմից ներկայացված միակ դիմումը սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ ընդունվել էր քննության և գործի քննությունը նշանակվել էր 04.05.2007 թվականին: Նշված դիմումը վերաբերում էր «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 6, 7 և 8 հոդվածների, 18 հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելուն: Սակայն մեկ պատգամավորի կողմից դիմումը հետ վերցնելու կապակցությամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 26 պատգամավորները չեն կազմում ՀՀ ԱԺ պատգամավորների մեկ հինգերորդը, սահմանադրական դատարանն իր 27.04.2007 թվականի աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը կարճեց:

Պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի կողմից 10.10.2006 թվականին սահմանադրական դատարան ներկայացված դիմումի հիման վրա սահմանադրական դատարանը գործով որոշում է կայացրել 16.01.2007 թվականին, ինչի վերաբերյալ տեղեկատվությունն արդեն իսկ ներկայացված է սահմանադրական դատարանի 2006 թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ: Քննության առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի երկրորդ նախադասությունում ամրագրված նորմի՝ ՀՀ Սահ-

մանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, սահմանադրական դատարանը, մասնավորապես, որոշել էր. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 2-րդ նախադասությունում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ հանձնաժողովի սահմանած սակագների մեծությունները դատական կարգով բողոքարկման ենթակա չեն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) և 43 (2-րդ մաս) հոդվածներին հակասող և անվավեր: Սույն որոշման կատարումն ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովը 2007թ. փետրվարի 21-ին ՀՕ-89-Ն օրենքով համապատասխան փոփոխություն է կատարել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածում:

### **Անհատական (ֆիզիկական և իրավաբանական անձանց) դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումներն ու դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում մուտքագրված անհատական դիմումների մոտ 91 տոկոսը չի ընդունվել սահմանադրական դատարանի կողմից, քանի որ դրանք չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 21 և 22 հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին, և աշխատակազմի կողմից վերադարձվել են դիմողներին: Անհատական դիմումների ընդհանուր վիճակագրության վերլուծությունը վկայում է, որ դրանց շուրջ 9 տոկոսն է օրենքի նորմի սահմանադրականության հարցերին առնչվում: Հիմնական դիմումները վերաբերում են օրենքների կիրառմանն առնչվող հարցերին կամ ընդհանուր իրավասության ու մասնագիտացված դատարանների իրավագործությանը վերաբերող տարբեր այլ հարցերի: Չգալի թիվ են կազմում նաև այն դիմումները, որոնք վերաբերում են մարդկանց սահմանադրական այս կամ այն իրավունքի խախտմանը, սակայն որը չի առնչվում օրենքի նորմի սահմանադրականությանը և սահմանադրական դատարանի ներկա լիազորությունների շրջանակներում հնարավոր չէ այն ինքնուրույն դատաքնության առարկա դարձնել: Ակնհայտ է նաև, որ դիմողների իրավական պատրաստվածության մակարդակի ցածր լինելու պայմաններում, բավարար չէ նաև նրանց ցուցաբերվող փաստաբանական օգնությունը: Այսուհանդերձ, սահմանադրական և օրենսդրական ներկա փոփոխություններն ստեղծել են որոշակի հնարավորություններ անձանց սահմանադրական արդարադատության իրավունքը երաշխավորելու ու պաշտպանելու համար:

Սահմանադրական դատարանում մուտքագրված 60 դիմումներ /52-ը՝ ֆիզիկական անձանց, 8-ը՝ իրավաբանական անձանց կողմից ներկայացված/ ընդունվել են սահմանադրական դատարանի կողմից և ներկայացվել

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ**

դատական կազմերին՝ դրանց հիման վրա գործը քննության ընդունելու հարցը լուծելու համար:

Այդ դիմումներից 43-ն ընդունվել է քննության, ընդ որում, դրանցից 42-ը՝ դատական կազմերի որոշումներով, իսկ 1-ը՝ սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ՝ հաշվի առնելով, որ համապատասխան դատական կազմում որոշման ընդունման համար չի ապահովվել միաձայնություն: 16 դիմումների քննության ընդունումը մերժվել է՝ հիմնականում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի հիմքերով, ինչպես նաև նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանը տվյալ հարցով արդեն իսկ որոշում ընդունել է: Ընդ որում, նշված 16 դիմումներից 14-ի քննությունը մերժվել է դատական կազմերի կողմից, իսկ 2-ինը՝ սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ՝ հաշվի առնելով, որ դատական կազմերում որոշման ընդունման համար չի ապահովվել միաձայնություն: Մեկ դիմումի հիման վրա գործը քննության ընդունելու հարցը դեռևս գտնվում է ընթացքի մեջ:

Քննության ընդունված 43 դիմումներից 5-ով դեռևս գործով որոշում չի կայացվել: 38 դիմումներով, որոնցից քսանչորսը միավորված են եղել համանման պահանջներով դեռևս 2006 թվականին ներկայացված երեք այլ դիմումների հետ մեկ գործում, երկուսը՝ մեկ այլ գործում, սահմանադրական դատարանն ըստ էության որոշումներ է կայացրել: Դրանցից 27 դիմումի հիման վրա (3 գործով) իրավական ակտերի վիճարկվող դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող, իսկ 11 գործով՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

2007 թվականի ընթացքում քննության առնված 27 անհատական դիմումները, որոնցով օրենքների վիճարկվող դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, վերաբերում են հետևյալներին.

1. «Քաղաքացիներ Հակոբ Դանիելյանի, Վաչագան Խաչատրյանի, Լենա Հախնազարյանի, Թամարա Մկրտչյանի, «Կարեն Ղազարյան» ԱԶ-ի, Արտակ Բաղայանի, Մարիետա Հախվերդյանի և Սամվել Ղարիբյանի, Մայիս Վահրադյանի, Սպարտակ Զաքարյանի, Ռոզա Մինասյանի, Բորիս Վանյանի, Վերսանդիկ Հակոբյանի և Հեղինե Ամիրխանյանի, Շամիր Մարդանյանի, «Վարդան Սերգո» ՍՊԸ-ի, Շողիկ Հովհաննիսյանի, Գեղեցիկ Առաքելյանի, Միսակ Պողիկյանի, Խաչիկ Հաջյանի, Մուսաննա Ղարամյանի, Ժենյա Համբարձումյանի, Արուսյակ Փայտյանի, Բալզիզար Մահմեդովայի, Մանվել և Սվետլանա Հովհաննիսյանների, Դավիթ, Նորայր, Կարինե և Արթուր Հովհաննիսյանների, Մայրանուշ Ստեփանյանի, Արտո Ալավերդյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի, 231.1., 231.2. հոդվածների դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության

հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 09.04.2007թ. ՄԴՈ-690 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 1-ին և 3-րդ կետերի դրույթները (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ).

ա) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու ժամկետ սահմանելու առումով, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը,

բ) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետևաբար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին և 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

Սահմանադրական դատարանի տվյալ որոշման կատարման ապահովմանն են կոչված «ՀՀ դատական օրենսգրքի» 50 և 53 հոդվածների դրույթները՝ նախատեսելով բողոքը վերադարձնելու մասին որոշման հիմնավորված ու պատճառաբանված լինելու պահանջ: Դրա հետ մեկտեղ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մեծ թիվ են կազմում քաղաքացիների այն դիմումները, որոնք վերաբերում են վճռաբեկության կարգով բողոքների ներկայացման տարաբնույթ դժվարություններին:

2. «ՀՀ գլխավոր դատախազի, քաղաքացի Տ. Սահակյանի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1. հոդվածի 2-րդ մասի, 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 11. 04. 2007 թվականի ՄԴՈ-691 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության դիմումի մասով գործի վարույթը կարճել:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 414.1. հոդվածի 2-րդ մասը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ).

ա) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու ժամկետ սահմանելու առումով, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը,

բ) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետևաբար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չսպառնալու առումով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին և 2-րդ մասեր), 18 (1-ին մաս), 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի դրույթները (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

ՀՀ սահմանադրական դատարանի այս որոշման կատարմանը նույնպես կոչված են «ՀՀ դատական օրենսգրքի» 50 և 53 հոդվածների դրույթները՝ նախատեսելով բողոքը վերադարձնելու մասին որոշման հիմնավորված ու պատճառաբանված լինելու պահանջ:

Սակայն անհատական դիմումների հիման վրա դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանների կողմից բողոքը վերադարձնելու մասին որոշման ոչ բավարար հիմնավորումը պատճառ է դառնում, որ քաղաքացիները չեն համոզվում իրենց բողոքի ոչ իրավաչափ լինելու հարցում: Ավելին, քիչ չեն դեպքերը, երբ դիմումը պարզապես անուշադրության է մատնվում, և դիմողն արդյունավետ միջոց չունի բողոքարկելու նաև դատարանի ու դրա պաշտոնատար անձանց անգործությունը: Մասնավորապես, «Քաղաքացի Արտակ Ձեյնալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով սահմանադրական դատարանն արձանագրեց, որ չնայած դատական իշխանության համակարգում արդարադատական գործընթացի բոլոր փուլերն օրենքով կանոնակարգված են, որոշակիացված են բողոքարկման ընթացակարգերը, նախատեսված են դատական իշխանության բնականոն գործունեության որոշակի երաշխիքներ, այսուհանդերձ, դատական իշխանության պաշտոնատար անձանց անգործության վերացման արդյունավետ ձևերի հարցն օրենսդրական լրացուցիչ կանոնակարգման խնդիր ունի:

ՀՀ դատական օրենսգրքի 89, 90 հոդվածներով սահմանված են դատավորի պաշտոն զբաղեցնող անձանց պարտադիր վարքագծի կանոնները:

Նույն օրենսգրքի մի շարք այլ հոդվածների համաձայն ընդհանուր իրավասության, քաղաքացիական, քրեական, վարչական, վերաքննիչ դատարանների նախագահների, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի անմիջական պարտականությունն այդ դատարանների բնականոն գործունեությունն ապահովելը և դատավորի կողմից նրա անմիջական պարտականությունների կատարմանը հետևելն է (25, 30, 34, 38, 49 և 61 հոդվածներ), ընդ որում, դատարանների նախագահների այդ պարտականության ոչ պատշաճ իրականացումը նույն օրենսգրքի 165 հոդվածի 1-ին մասի համաձայն նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսդրական վերջին զարգացումները մասնակիորեն են լուծում քննության առարկա խնդիրը (հանձին նաև կարգապահական վարույթի ինստիտուտի (համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 155 հոդվածի)): Բացի դրանից, դատարանի բնականոն գործունեության ապահովման տեսակետից օրենքը որոշակի պարտավորություններ է դնում նաև դատարանների նախագահների խորհրդի վրա (մասնավորապես, ՀՀ դատական օրենսգիրք, հոդվ. 72): Այսուհանդերձ, հաշվի առնելով նաև ձևավորված իրավակիրառական պրակտիկան, ելնելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի 91 հոդվածի 2-րդ կետի իմպերատիվ պահանջից՝ հայցադիմումն ստանալու պահից դրա մերժման վերաբերյալ եռօրյա ժամկետում որոշում կայացնելու վերաբերյալ, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատական իշխանության մարմիններում անգործության պարագան անձի արդարադատության մատչելիության իրավունքի սահմանափակման պատճառ է դառնում, սահմանադրական դատարանը գտել է, որ, նախ. ՀՀ վճռաբեկ դատարանը կարող էր, օրենսդրության տարակերպ ընկալման ու մեկնաբանման պայմաններում, երաշխավորել մարդու արդարադատության մատչելիության իրավունքը՝ օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու միջոցով: Սակայն խնդիրը միայն օրենքի մեկնաբանման ճանապարհով արդյունավետ չի կարող լուծվել: ՀՀ Ազգային ժողովն առավել հստակ պետք է սահմանի դատարանների, նրանց պաշտոնատար անձանց անգործության հետևանքով անձի խախտված իրավունքները դատավարական ողջամիտ ժամկետում վերականգնելու և պատճառված վնասը փոխհատուցելու արդյունավետ ընթացակարգեր, որոնց բացակայության պայմաններում լիարժեք չի կարող երաշխավորվել նաև արդարադատության մատչելիության՝ անձի իրավունքն այն բովանդակությամբ, որն անմիջականորեն բխում է ինչպես ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածների, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի իմաստից: Իսկ այդ խնդիրը դուրս է ՀՀ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխի գործող նորմերի իրավակարգավորման շրջանակներից:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

ՀՀ Ազգային ժողովը դեռևս սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման իրացման ուղղությամբ գործնական քայլեր չի ձեռնարկել և իր նկատառումների մասին, թեկուզ սահմանադրական դատարանում իր ներկայացուցչի միջոցով, որևէ տեղեկատվություն չի տրամադրել:

3. «Քաղաքացի Գևորգ Գզրարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի, 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 24.07.2007 թվականի ՄԴՈ-710 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի վերաբերյալ Գ. Գզրարյանի դիմումի մասով գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի դրույթները ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածին (1-ին մաս) հակասող և անվավեր:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՀՀ Սահմանադրության 19 հոդվածին (1-ին մաս) հակասող և անվավեր ճանաչել նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև 292 հոդվածի 5-րդ կետի, 297 հոդվածի, 363 հոդվածի 2-րդ մասի, 394 հոդվածի 5-րդ մասի, 398 հոդվածի 6-րդ մասի, 421 հոդվածի 3-րդ մասի դրույթները և 419 հոդվածի 2-րդ կետի լրացուցիչ նախաքննություն նախատեսող դրույթը»:

Սույն գործն առավելապես կարևորվում է այն հանգամանքով, որ վերջ դրեց խորհրդային ժառանգություն հանդիսացող մի համակարգի, որը կոռուպցիոն մեծ ռիսկ էր պարունակում և աղավաղում էր մրցակցային դատավարության էությունը: Իր իրավական դիրքորոշումների մեջ սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրեց, որ ՀՀ քր.դատ. օր.-ով նախատեսված կարգով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դատարանը դուրս է գալիս դատավարությունում անկողմնակալ իր դերի շրջանակներից և ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ: Դատարանը նաև կողմերի միջև հավասարության նժարը խախտում է ի շահ մեղադրանքի կողմի, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ անձի դատական և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը: Քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի մնաց ձևով կիրառումը պարունակում է նաև արդար դատաքննու-

թյան տարրերից մեկի՝ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վտանգ: Քրեական գործի լուծման ձգձգումն ընդհանրապես բացասաբար է անդրադառնում մեղադրյալի, ինչպես նաև տուժողի վրա: Սակայն մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից ավելի վտանգավոր է գործի քննության ողջամիտ ժամկետի խախտումն այն դեպքում, երբ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը: Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ Սահմանադրության 21 հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի կարևոր բաղադրատարրերից է չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջը: Նշված պահանջի կատարումը և քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելը գործնականում անհամատեղելի են միմյանց հետ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտն ավելի շատ բնորոշ է եղել խորհրդային իրավակարգին, և տասնամյակներ շարունակ նման ձևով այն կիրառած երկրներում առկա է դրանից հրաժարվելու միտում: Նշված կարգի մերժման անհրաժեշտությունը հիմնականում բացատրվում է քրեական դատավարության այնպիսի կարևորագույն սկզբունքների հետ անհամատեղելիությամբ, ինչպիսիք են դատարանի անկողմնակալությունը, դատավարության կողմերի հավասարությունն ու մրցակցությունը:

Սահմանադրական դատարանի այդ որոշումը միարժեք չընդունվեց գործադիր իշխանության, դատախազության, դատարանների կողմից, քանի որ մերժվում էր տասնամյակներ գործած մի համակարգ: Այսուհանդերձ, ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ ըստ սահմանադրական դատարանում ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցչի հավաստման, լուրջ նախապատրաստական աշխատանքներ են տարվում ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը համակարգային առումով վերափոխելու և, մասնավորապես, սահմանադրական դատարանի սույն որոշման կատարումն ապահովելու ուղղությամբ:

Սահմանադրական դատարանի 2006 թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ նշվել էր, որ «Քննության ընդունված 17 դիմումներից 7-ով դեռևս ըստ էության որոշում չի կայացվել»: Այդ դիմումների վերաբերյալ որոշումները կայացվել են 2007 թվականին, ընդ որում, դրանցից երեքը միավորվել են վերոհիշյալ 24 դիմումների հետ մեկ գործում, երկուսը՝ մեկ այլ գործում, իսկ մնացած երկուսը քննվել են որպես առանձին գործեր:

Առաջին երեք դիմումները վերաբերում են «Քաղաքացիներ Հակոբ Դանիելյանի, Վաչագան Խաչատրյանի, Լենա Հախնազարյանի, Թամարա

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

Սկրոչյանի, «Կարեն Ղազարյան» ԱԶ-ի, Արտակ Բաղալյանի, Մարիետա Հախվերդյանի և Սամվել Ղարիբյանի, Մայիս Վահրադյանի, Սպարտակ Զաքարյանի, Ռոզա Մինասյանի, Բորիս Վանյանի, Վերսանդիկ Հակոբյանի և Հեղինե Ամիրխանյանի, Շամիր Մարդանյանի, «Վարդան Մերգո» ՍՊԸ-ի, Շողիկ Հովհաննիսյանի, Գեղեցիկ Առաքելյանի, Միսակ Պողիկյանի, Խաչիկ Հաջյանի, Սուսաննա Ղարամյանի, Ժենյա Համբարձումյանի, Արուսյակ Փայտյանի, Բալգիզար Մահմեդովայի, Մանվել և Սվետլանա Հովհաննիսյանների, Դավիթ, Նորայր, Կարինե և Արթուր Հովհաննիսյանների, Մայրանուշ Ստեփանյանի, Արտո Ալավերդյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի, 231.1., 231.2. հոդվածների դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործին, որով ընդունված որոշման մասին արդեն իսկ վերը նշվել է:

Մյուս երկու դիմումներով, որոնք միավորվել են մեկ գործում, որոշվել է, որ օրենքի վիճարկվող դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Վերջին երկու դիմումներից մեկով կայացվել է աշխատակարգային որոշում գործի վարույթը կարճելու մասին, իսկ մյուսով, որը վերաբերում է «Քաղաքացիներ Հ. Խառատյանի, Ա. Աբրահամյանի և Ա. Ղուկասյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածի և 75 հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործին, ՀՀ սահմանադրական դատարանն իր 07.02.2007թ. ՍԳՌ-677 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասին և 43 հոդվածին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածում և 75 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթները՝ այնքանով, որքանով գործադուլի իրավունքը պայմանավորում են միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու հանգամանքով և արգելափակում են գործադուլի իրավունքը նոր հանգամանքներում՝ նաև «...այն պարտավորություններին ենթարկվելու պայմանով, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից»:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասին և 43 հոդվածին հակասող և անվավեր ճանաչել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի 60 հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության՝ «...իսկ գործադուլ կազմակերպելն արգելվում է» դրույթը»:

Այս գործն առավել կարևորություն է ստանում հասարակական հարաբերությունների ժողովրդավարացման և շուկայական տնտեսական առողջ հարաբերությունների արմատավորման տեսանկյունից: Ուստի ակնկալվում էր, որ ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանություններն արագ կարձագանքեն սահմանադրական դատարանի որոշմանը և համապատասխան փոփոխություններ կկատարվեն գործող օրենսդրության մեջ: Առավել ևս, երբ սահմանադրական դատարանն արձանագրել էր, որ մի շարք միջազգային պայմանագրերով, մասնավորապես՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով (6 հոդվածի 4-րդ կետ) և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով (8 հոդված), Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է պարտավորություններ՝ երաշխավորելու մարդկանց գործադուլի իրավունքը և այդ իրավունքի հնարավոր սահմանափակումների հիմքում դնել միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը:

Սահմանադրական դատարանը շեշտել էր նաև, որ գործադուլի իրավունքը, որպես կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման միջոց, որպես իրավական ինստիտուտ, ունի հանրային-իրավական բնույթ, քանի որ առնչվում է ոչ միայն «աշխատողներ - գործատու» իրավահարաբերություններին, այլև «աշխատողներ - երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ - պետական մարմիններ», «գործատու - պետական մարմիններ» փոխհարաբերություններին: Միջազգային իրավական փաստաթղթերով այդ իրավունքի երաշխավորումն անմիջականորեն պայմանավորվում է աշխատավորական կոլեկտիվների ընդհանուր շահերի իրացումով: Մասնավորապես, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (16.12.1966թ.) 8 հոդվածում գործադուլի իրավունքի իրականացումը կապվում է արհեստակցական միությունների կազմավորման ու գործունեության երաշխավորման հետ: Հայաստանի Հանրապետության համար 2004թ. մարտի 1-ից ուժի մեջ մտած՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 2-րդ մասի 6 հոդվածը, որը վերնագրված է «Կոլեկտիվ գործարքների կնքման իրավունքը», սահմանում է, որ Կողմերը, կոլեկտիվ գործարքների կնքման իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով, շահերի բախման դեպքում ճանաչում են **աշխատողների և գործատուների համատեղ գործողությունների անցկացման իրավունքը՝ ներառյալ գործադուլների իրավունքը**: Միաժամանակ, նույն հոդվածում շեշտվում է, որ այդ իրավունքը ճանաչվում է այնպիսի պայմանով, երբ կողմերը կենթարկվեն նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից բխող պարտավորություններին:

Հայաստանի Հանրապետությունն ստանձնելով նման պարտավորություն և նկատի ունենալով Խարտիայի հավելվածում տվյալ նորմի վերաբերյալ արված պարզաբանումը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

43 հոդվածի 2-րդ մասի պահանջը, գործադուլի իրավունքի ապահովման օրենսդրական կարգավորման ժամանակ հաշվի պետք է առնի, որ.

ա) գործադուլի իրավունքի իրականացումը դիտարկվում է աշխատողների և գործատուների համատեղ գործողությունների անցկացման իրավունքի շրջանակներում և անմիջականորեն առնչվում է կոլեկտիվ աշխատանքային վեճերի առաջացման և դրանք կոլեկտիվ պայմանագրերի միջոցով լուծելու անհնարինության խնդրին,

բ) գործադուլի իրավունքը ճանաչվում է «...այն պարտավորություններին ենթարկվելու պայմանով, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից»,

գ) բացի բ) կետում նշված պայմանից և օրենքով նախատեսված այնպիսի սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության և հասարակական շահերի, ազգային անվտանգության, հասարակության առողջության և բարոյականության պաշտպանության համար (Խարտիայի 5-րդ մաս, հոդված «Է»), գործադուլի իրավունքի այլ սահմանափակումներ չեն կարող լինել, առավել ևս, եթե դրանք անհնարին են դարձնում նման պայմանի ու սահմանափակումների պայմաններում գործադուլի իրավունքի իրականացումը:

Այս տեսանկյունից, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածը ոչ թե բացահայտում է գործադուլի հասկացության իրավական բովանդակությունը՝ այն կապելով գործադուլի սահմանադրական իրավունքի ապահովման հետ, այլ առաջին պլան է մղում և շեշտադրում կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու հանգամանքը: Օրենսգրքի 73 հոդվածի տրամաբանությամբ՝ գործադուլը կարող է օրինական համարվել միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու, այսինքն՝ նախապայմանագրային վեճը չլուծվելու դեպքում: Իսկ կոլեկտիվ պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում գործադուլն արգելվում է, եթե նույնիսկ նոր վեճի առարկան դուրս է արդեն իսկ կնքված կոլեկտիվ պայմանագրի շրջանակներից: Նման ձևակերպումն է, որ հիմք է հանդիսացել օրենսգրքի 60 հոդվածի 2-րդ մասով և 75 հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործադուլի իրավունքի սահմանափակումների համար:

Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 60 և 75 հոդվածների՝ կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամանակամիջոցում գործադուլ հայտարարելն արգելվում է: Դրան հակառակ, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 2-րդ մասի 6 հոդվածով Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել շահերի բախման դեպքում առանց վերապահության ճանաչել գործադուլի իրավունքը՝ «...այն պարտավորություններին ենթարկվելու պայմանով, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկ-

տիվ համաձայնագրերից»: Այս առումով սահմանադրականության խնդիր է առաջանում օրենսգրքի 60 հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության՝ «...իսկ գործադուր կազմակերպելն արգելվում է» դրույթի և 75 հոդվածի 3-րդ մասի առնչությամբ: Այդ նորմերը չեն կարող արգելափակել գործադուրի իրավունքը, եթե նախօրոք կնքված կոլեկտիվ պայմանագրի պարտավորությունները հարգվում են, իսկ վեճն առաջացել է ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված կոլեկտիվ պայմանագրի կարգավորման առարկայի շրջանակներում, սակայն այդ մասով այն նախապես երկկողմ համաձայնությամբ չի կարգավորվել:

Սահմանադրական դատարանի որոշումը և տվյալ գործով արտահայտված իրավական դիրքորոշումները հիմք պետք է հանդիսանային ՀՀ աշխատանքային օրենսգրքի անվավեր ճանաչված նորմերի փոխարեն ՀՀ միջազգային պարտավորություններին համարժեք նոր դրույթներ ամրագրելու համար: Սակայն ՀՀ Ազգային ժողովը դեռևս այդ ուղղությամբ գործնական քայլեր չի ձեռնարկել և հիշյալ օրենսգրքում փոփոխություններ չեն կատարվել:

4. Մի շարք անհատական դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանն օրենքների վիճարկվող նորմերը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Սակայն դատարանն իր որոշումների պատճառաբանական մասում արձանագրել է նաև իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը: Սահմանադրական դատարանը կարևոր է համարում, որ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններն անհրաժեշտ ուշադրություն դարձնեն նաև այդ հանգամանքին:

**ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները և դրանց կատարումը**

2007 թվականին ՀՀ գլխավոր դատախազի կողմից որևէ դիմում չի ներկայացվել սահմանադրական դատարան: Մինևույն ժամանակ, ՀՀ գլխավոր դատախազի կողմից 29.12. 2006 թվականին սահմանադրական դատարան ներկայացված միակ դիմումը միավորվել է համանման պահանջներով երկու այլ դիմումների հետ 1 գործում, որով սահմանադրական դատարանը որոշում է կայացրել 11.04.2007 թվականին: Նշված դիմումը վերաբերում է «ՀՀ գլխավոր դատախազի, քաղաքացի Տ. Սահակյանի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

օրենսգրքի 414.1. հոդվածի 2-րդ մասի, 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործին, որով ընդունված որոշման մասին արդեն իսկ վերը նշվել է:

**Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները և դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում մուտքագրված՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված 2 դիմումներն էլ սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության և գործերի քննությունը նշանակվել է 2008 թվականի հունվարի 15-ին:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ միջազգային առումով թե՛ սահմանադրական դատարանները և թե՛ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը ժողովրդավարության զարգացման նոր փուլի ծնունդ են և մեծ դերակատարություն ունեն նոր հազարամյակում մարդկային հանրության ներդաշնակ զարգացումն ապահովելու, անխտրականության, բազմակարծության, հանդուրժողականության և համերաշխության սկզբունքների վրա կառուցված հասարակության մեջ իրավունքի գերակայությունը երաշխավորելու գործում:

Ակներև է նաև, որ անցումային հասարակություններում այս ինստիտուտներն իրենց ուղին հարթում են հնի ու նորի անգիջում պայքարում, կարծրացած մտայնության ու գործելակերպի հաղթահարման ոչ դյուրին ճանապարհով: Լինելով առաջադիմական, լիբերալ իրավական արժեքային համակարգի կրողներ, սահմանադրական դատարանների և մարդու իրավունքների պաշտպանի համար կա մեկ գլխավոր խնդիր՝ հասնել նրան, որպեսզի իրական կյանքում մարդու իրավունքները ճանաչվեն, երաշխավորվեն ու ապահովվեն որպես բարձրագույն արժեք, որպես անմիջական գործող իրավունք, որպես իշխանության սահմանափակիչ: Այս խնդրի իրականացումը գրեթե անհնարին է շեշտը միայն խախտված իրավունքների պաշտպանության վրա դնելով: Առավել կարևոր է իրավունքների խախտման պատճառների բացահայտումը և հաղթահարումը, որով այդ իրավունքների ապահովման երաշխիքներ կստեղծվեն: Այս առումով էական է, թե երկիրն անհատական սահմանադրական դիմումների քննության ինչ մոդել է ընտրել և ինչ հարցերով է օմբուդսմենը դիմում սահմանադրական դատարան:

Հայաստանում սահմանադրական արդարադատության պրակտիկայում անհատական դիմումների ինստիտուտը գործում է շուրջ մեկ և կես տարի: Յուրաքանչյուր ոք սահմանադրական դատարան կարող է դիմել

կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: Մարդու իրավունքների պաշտպանը կարող է սահմանադրական դատարան դիմել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի, կառավարության նորմատիվ ակտերի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցերով, որոնք առնչվում են Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին: Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածն ամրագրել է, որ «Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը»:

Այնհայտ է, որ Հայաստանը ներդրել է անհատական դիմումների ոչ ամբողջական, սահմանափակ համակարգ: Մինչդեռ մարդու սահմանադրական արդարադատության իրավունքը ենթադրում է սահմանադրորեն անմիջական գործող ճանաչված իրավունքների ամբողջական երաշխավորում, ապահովում ու պաշտպանություն: Տարբեր երկրների փորձը, մեր երկրի մեկուկես տարվա պրակտիկան վկայում են, որ Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը լիարժեք երաշխավորելու համար անհրաժեշտ է, որպեսզի ցանկացած իրավական ակտ, որով ոտնահարվել են անձի սահմանադրական իրավունքները, նրա դիմումի համաձայն դառնա սահմանադրական արդարադատության օբյեկտ: Դա վերաբերում է նաև դատական ակտերին: Այսօր Հայաստանում դատաիրավական բարեփոխումների ներկա վիճակը վկայում է, որ մարդու իրավունքների ապահովման ու արդյունավետ պաշտպանության առումով առկա է զգալի պոտենցիալ վտանգ: Մասնավորապես, դա վերաբերում է Սահմանադրության 18 և 19 հոդվածներով ամրագրված իրավունքների երաշխավորմանը:

Նման պայմաններում որակապես նոր բնույթ պետք է կրի մարդու իրավունքների պաշտպանի և սահմանադրական դատարանի գործակցությունը: Շուրջ մեկ և կես տարում ընդամենը չորս անգամ սահմանադրական դատարան դիմելն արդարացված չէ այնպիսի մի իրավական միջավայրում, երբ Սահմանադրությունը 2005թ. նոյեմբերին փոփոխվեց շուրջ 90 տոկոսով, իսկ իրավական ակտերի 80 տոկոսից ավելին սահմանադրական նոր լուծումներին ներդաշնակելու անհրաժեշտություն ունի:

Ամբողջական սահմանադրական լուծումների պարագայում մարդու իրավունքների պաշտպանը պետք է իրավունք ունենար սահմանադրական դատարան դիմել ոչ միայն նորմատիվ իրավական ակտերի, այլև

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

ցանկացած իրավական ակտի սահմանադրականության հարցով, եթե այն առնչվում է մարդու սահմանադրական իրավունքներին:

Մարդու իրավունքների պաշտպանը շեշտը պետք է դնի ոչ միայն խախտված իրավունքները պաշտպանելու, այլև խախտումը կանխելու, իրավունքների ապահովման ու երաշխավորման հուսալի նախադրյալներ ստեղծելու վրա: Այդ առումով լավագույն ճանապարհը սահմանադրական դատարան դիմելու իրավունքից առավել ակտիվ օգտվելն է: Այդ հանգամանքները կարևորվեցին նաև ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի կողմից 2007թ. հոկտեմբերին Երևանում հրավիրված միջազգային խորհրդաժողովում:

**Պատգամավորության թեկնածուների դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները և դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում մուտքագրված՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) և պատգամավորության թեկնածուների կողմից ներկայացված 7 դիմումներն էլ սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության: Դրանցից 4-ը միավորվել են մեկ գործում: Նշված դիմումները վերաբերում են հետևյալներին.

1. ««Իմպիչմենտ» դաշինքի, «Նոր ժամանակներ», «Օրինաց երկիր» և «Հանրապետություն» կուսակցությունների դիմումների հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» թիվ 149-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 10.06.2007թ. ՄԳՈ-703 որոշմամբ որոշել է.

«1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 19-ի թիվ 149-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Թիվ 18/43, 20/36, 20/47, 23/39, 23/41, 41/14 տեղամասային ընտրական հանձնաժողովների ամփոփիչ արձանագրություններում փոփոխությունների և այլ նյութերի օրինականությունը պարզելու նպատակով դրանք տրամադրել ՀՀ դատախազությանը՝ օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար»:

Նշված որոշման պատճառաբանական մասում սահմանադրական դատարանն արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ՝ կապված ՀՀ ընտրական օրենսգրքի բարեփոխումների անհրաժեշտության հետ:

Սահմանադրական դատարանի որոշումը հիմք ընդունելով՝ ՀՀ Ազգային ժողովը 16.11.2007թ. ընդունած՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-219-Ն օրենքով փոփոխություններ և լրացումներ է կատարել ՀՀ ընտրական օրենսգրքում, որոնք, սակայն, ամբողջությամբ չէ, որ արտացոլել են սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, փոփոխվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 7-րդ կետը, օրենսգրքի 401 հոդվածը լրացվել է 51 կետով, փոփոխվել է օրենսգրքի 63 հոդվածի 1-ին կետը, որոնք առնչվում են համապատասխանաբար՝ սահմանադրական դատարանի 10.06.2007թ. ՄԴՈ-703 որոշման պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումներից հետևյալներին.

- դատարանը գտել էր, որ վերանայման կարիք ունի ՀՀ ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 7-րդ կետը, որը պետք է վերաբերի ոչ միայն նախընտրական քարոզչությանը, այլ ընդհանրապես կուսակցություններին արգելվի անօրինական ցանկացած գործողության կատարումը (ՄԴՈ-703 որոշման 25-րդ կետի վերջին պարբերություն),

- սահմանադրական դատարանն ընդգծել էր, որ ՀՀ ընտրական օրենսգրքում անկատար է նաև ընտրական հանձնաժողովներում դիմումների (բողոքների) և առաջարկությունների քննարկման կարգը սահմանող 401 հոդվածը, որն առավելապես պարունակում է այդ փաստաթղթերին ներկայացվող ձևական պահանջներ: Մինչդեռ, ընտրական գործընթացներն արդյունավետ վերահսկելու, ընտրությունների նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու առումով անհրաժեշտ է, որպեսզի օրենսդրական փոփոխությունների արդյունքում հստակ նորմատիվ պահանջ ներկայացվի հատկապես ընտրական հանձնաժողովներում դիմումների (բողոքների) և առաջարկությունների ընթացակարգային քննարկմանն ու դրա արդյունքում պատճառաբանված որոշումների կայացնելուն (ՄԴՈ-703 որոշման 18-րդ կետ),

- շեշտվել էր, որ ՀՀ ընտրական օրենսգրքում «արձանագրությունների ելակետային տվյալներ» հասկացության պարզաբանման բացակայության պայմաններում, ընտրական հանձնաժողովները որոշ դեպքերում կամայականորեն են այն մեկնաբանել (ՄԴՈ-703 որոշման 16-րդ կետ):

Հիշյալ և մի շարք այլ իրավական դիրքորոշումներ զգալի չափով հաշվի են առնվել ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ հատկապես «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 16.11.07. ՀՕ-219-Ն օրենքով: Միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության նոր օրենսգրքով նախատեսված է ընտրական իրավունքի դատական պաշտպանության բոլորովին նոր համակարգ, որը գործում է 2008թ. հունվարի մեկից: Վերջինս հնարավորություն կտա հաղթահարել օրենսդրական

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

առանձին հակասություններ, որոնց վրա ուշադրություն էր հրավիրել սահմանադրական դատարանը: Սակայն օրենսդիր մարմինը հետևողական չի գտնվել ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետով նախատեսված փոփոխությունն օրենսդրության մեջ ամրագրելու և ապահովելու առումով: Օրինակ, այն դեպքում, երբ ընտրական օրենսգրքի 40 հոդվածի 9-րդ մասը սահմանադրական փոփոխությունների պահանջներին համապատասխան ամրագրում է, որ **ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված**, բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների, լուծում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, ապա, օրինակ, նույն օրենսգրքի 83 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հանրապետության Նախագահի **ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով** սահմանադրական դատարան կարելի է դիմել արդյունքների պաշտոնական հրապարակման պահից յոթնօրյա ժամկետում: Ակնհայտ է, որ վերջին ձևակերպումը չի բխում Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետի իրավական բովանդակությունից (համաձայն որի սահմանադրական դատարանը լուծում է Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը) և չեն կարող նույնացվել **«ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճեր»** և **«ընտրությունների արդյունքների հետ կապված վեճեր»** հասկացությունները, որն իրավակիրառական պրակտիկայում կարող է լուրջ շփոթ առաջացնել: Դրա վրա վերոհիշյալ որոշման մեջ ուշադրություն էր հրավիրել սահմանադրական դատարանը:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրել էր, որ օրենսդրական ոչ բավարար կարգավորման են ենթարկված քվեարկությանը նախորդող գործընթացների հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես, հստակ և միակերպ ընկալելի սահմանման կարիք ունի «նախընտրական քարոզչություն» արտահայտությունը, որը, ինչպես վկայում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների 2007թ. գործընթացների հետ կապված պրակտիկան, հաճախ նույնացվել է «քաղաքական գործընթացներ», «քարոզչությանը նախորդող ու դրա անցկացման ժամանակաշրջան» և այլ արտահայտությունների հետ: Դրան նպաստել է նախընտրական քարոզչության՝ որպես սահմանադրորեն երաշխավորված ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման ինստիտուտի, միաժամանակ և իրարամերժ կարգավորումը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածում և ՀՀ ընտրական օրենսգրքի 18 հոդվածում: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 16.11.07թ. ՀՕ-221-Ն օրենքով համապատասխան փոփոխություն է կատարվել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածում:

Սահմանադրական դատարանն արձանագրել էր նաև, որ «ընտրական

իրավունքի պաշտպանությունը, հատկապես սահմանադրական արդարադատության շրջանակներում, չի ենթադրում ձևական մոտեցում՝ թե որքանով են խախտվել մարդկանց ակտիվ կամ պասիվ ընտրական իրավունքները: Հարցն ունի ընդգրկման ավելի լայն շրջանակ և վերաբերում է ընտրությունների հանրային գործառույթին՝ թե ինչ կերպ և ինչպիսի վստահությամբ է ձևավորվում ներկայացուցչական կառավարման համակարգը, ինչպես են ներդաշնակվում կառավարմանը մասնակցելու ազատությունը և ներկայացուցչական մարմիններ կազմավորելու պարտականությունը, ինչպիսին է անհատների հասարակական վարքագիծն այս գործընթացում: Ուստի ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու հնարավորության ապահովումը պետության պարտավորությունն է և ոչ թե առանձին քաղաքական միավորումների կամ անհատների: Դրանից և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից է բխում նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ «Պետությունը, օրենսդրությամբ վերապահված իրենց լիազորությունների շրջանակում՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և կենտրոնական ընտրական հանձնաժողով կազմավորող մարմիններն ու պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման օրինականության համար»: Ուստի պետությունը պարտավոր է այնպիսի երաշխիքներ ապահովել, որպեսզի.

- ա) ընտրական օրենսդրությունը գերծ լինի ընտրական իրավունքի արդյունավետ իրացումը խոչընդոտող թերություններից,
- բ) քաղաքական ընթացիկ գործունեությունը հստակ տարանջատվի նախընտրական քարոզչությունից,
- գ) բացառվի քաղաքական ու բարեգործական գործունեության միատեղումը,
- դ) ընտրական գործընթացի բոլոր փուլերում կանխվի քաղաքական ու գործարար շահերի միահյուսման հնարավորությունը:

ՀՀ Սահմանադրության 2 և 4 հոդվածներում ամրագրված հիմնարար սկզբունքների համաձայն՝ իրավական պետության համար ելակետայինն ընտրական գործընթացներում հասարակության քաղաքական շահերի գերակայության օրենսդրական ու կառուցակարգային այնպիսի երաշխիքների ապահովումն է, որը կբացառի առաջնային մանդատով օժտված իշխանության ներկայացուցչական մարմինների ձևավորման գործում քաղաքական և գործարար շահերի անմիջական միահյուսման որևէ հնարավորություն»: Այս իրավական դիրքորոշման օրենսդրական ու կառուցակարգային ապահովման ուղղությամբ անելիքները դեռևս զգալի են:

Սահմանադրական դատարանը գտել էր նաև, որ կազմված արձանագրությունների հետագա փոփոխություններն անվստահություն են առա-

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

ջացնում ընտրական գործընթացի նկատմամբ և ՀՀ ընտրական օրենսգրքի 63 հոդվածի 1-ին մասում պետք է հստակ ու կոնկրետ նշվեն արձանագրության այն ելակետային տվյալները, որոնք ոչ մի դեպքում փոփոխության ենթակա չեն: ՀՀ Ազգային ժողովը 16.11.07թ. ՀՕ-219-Ն օրենքով լրացում է կատարել ընտրական օրենսգրքի 63 հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ «ելակետային են համարվում տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից հաշվարկի արդյունքում ստացված տվյալները»:

Սահմանադրական դատարանը շեշտել էր նաև, որ «...վերանայման կարիք ունի ՀՀ ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 7-րդ կետը, որը պետք է վերաբերի ոչ միայն նախընտրական քարոզչությանը, այլ ընդհանրապես կուսակցություններին արգելվի անօրինական ցանկացած գործողության կատարումը: Միջազգային պրակտիկան վկայում է, որ թափանցիկ և արդյունավետ վերահսկողության միջոցը կուսակցությունների ֆինանսական գործունեության պարբերական ու անկախ հաշվեքննության կազմակերպումն է: Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է ակտիվ քայլեր ձեռնարկել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003թ. ապրիլի 8-ին ընդունած՝ «Քաղաքական կուսակցությունների և ընտրական գործընթացների ֆինանսավորման ընթացքում կոռուպցիայի դեմ միասնական կանոնների մասին» հանձնարարականի դրույթները ներպետական օրենսդրության մեջ համակարգային ձևով ամրագրելու ու երաշխավորելու ուղղությամբ»: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ՀՀ Ազգային ժողովը, մասնավորապես, 16.11.07թ. ՀՕ-219-Ն օրենքով փոփոխություն է կատարել ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածում, որը, սակայն, դեռևս բավարար չէ խնդրին ամբողջական լուծում տալու համար: Այդ առումով լուրջ վերանայման անհրաժեշտություն ունի նաև «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը:

**2.** Պատգամավորության թեկնածուներից երկուսն օրենքով սահմանված կարգով հետ են վերցրել իրենց դիմումները: ««Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին թիվ 36 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 17-ի թիվ 18-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 29.06.2007թ. ՍԳ-Ո-704 որոշմամբ որոշել է. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին թիվ 36 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 17-ի թիվ 18-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

**ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ  
ԸՆԳՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ  
2007 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Սահմանադրական դատարանի 2006 թվականին ընդունած որոշումների՝ 2006 թվականի ընթացքում կատարման վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է սահմանադրական դատարանի 2006թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ:

2007 թվականի ընթացքում ևս շարունակվել են ՀՀ իրավական դաշտի քարեփոխումները, որոնցով հաշվի են առնվել նաև սահմանադրական դատարանի՝ 2006 թվականի ընթացքում ընդունված որոշումները: Մասնավորապես.

1. «Քաղ. Մ. Քոչարյանի և քաղ. Հ. Դավթյանի դիմումների հիման վրա՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացված որոշման առնչությամբ սահմանադրական դատարանի 2006թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ նշվել է, որ. «ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման առնչությամբ ո՛չ ՀՀ կառավարությունը (օրենսդրական նախաձեռնության կարգով) և ո՛չ էլ Ազգային ժողովը որևէ օրենքի փոփոխության կամ լրացման վերաբերյալ նախագիծ շրջանառության մեջ չեն դրել, սահմանադրական դատարանն այդ մասին չի տեղեկացվել»:

2007 թվականի ընթացքում նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներ հաշվի առնելով՝ ՀՀ կառավարությունը 01.03.2007թ. ընդունել է թիվ 369-Ն որոշումը:

2. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 104, 106 և 108 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002 թվականի օգոստոսի 1-ին ընդունված՝ «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացված որոշման առնչությամբ սահմանադրական դատարանի 2006թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ նշվել է, որ. «... ՀՀ կառավարությունը 2006թ. հոկտեմբերի 26-ին ընդունել է հետևյալ երկու որոշումները.

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

ա) «Պետության կարիքների համար անշարժ գույքի իրացման գործընթացում քաղաքացիների օգտագործման իրավունքի դադարեցման դիմաց վճարված գումարներից պահված եկամտահարկի վերադարձման առանձնահատկություններ սահմանելու մասին» թիվ 1505-Ն որոշումը,

բ) «ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի եկամուտների և ծախսերի գումարներն ավելացնելու, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2162-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, պետության կարիքների համար անշարժ գույքի իրացման գործընթացում քաղաքացիների սեփականության իրավունքի դադարեցման դիմաց դրամական օգնության տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ պետական բյուջեից գումար հատկացնելու մասին» թիվ 1605-Ն որոշումը:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 26.11.2006թ. ընդունվեց օրենք «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին», որն ստորագրվել է ՀՀ Նախագահի կողմից 12.12.2006թ. և ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրատարակվել 20.12.2006թ ...»:

Ի լրումն արդեն իսկ նշված իրավական ակտերի՝ 2007 թվականի ընթացքում նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները հաշվի առնելով, ՀՀ կառավարությունը 17.05.2007թ. ընդունել է թիվ 611-Ն որոշումը: Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետը 12.02.2007 թվականին ընդունել է «Բացառիկ՝ գերակա հանրային շահերի հիմքով հասարակության և պետության կարիքների համար օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման մասին» թիվ 4 պաշտոնական պարզաբանումը, որի ուսումնասիրությունից երևում է, որ ի խախտումն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 104, 106 և 108 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002 թվականի օգոստոսի 1-ին ընդունված՝ «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների, ոչ միայն փոփոխություններ չեն կատարվել «Ավելացված արժեքի հարկի մասին», «Շահութահարկի մասին», «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքներում, ավելին, նշված պարզաբանմամբ ավելի է ամրապնդվել իրավական համակարգում առկա այն դրույթը, որ բացառիկ՝ գերակա հանրային շահերի հիմքով հասարակության և պետության կարիքների համար օտարվող սեփականության դիմաց տրված փոխհատուցումը հարկվող եկամուտ է:

3. «Քաղաքացի Հենրիկ Դանիելյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հան-

րապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 18.10.2006թ. ՍԴՈ-652 որոշմամբ որոշել է, որ. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

Տվյալ որոշման մեջ սահմանադրական դատարանը նաև արձանագրել է որոշակի փաստեր՝ կապված տվյալ գործով իրավակիրառողների կողմից մի դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի, մյուս դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ մասի կիրառման հետ: Նշված երկու հոդվածների կիրառման հստակեցման նպատակով ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը 10.07.2007թ. ընդունել է թիվ 01 որոշումը:

4. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի երկրորդ նախադասությունում ամրագրված դրույթի, 4-րդ ենթակետի, 36 հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացված որոշման առնչությամբ սահմանադրական դատարանի 2006թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ նշվել է, որ. «Սահմանադրական դատարանի որոշումը հիմք ընդունելով՝ ՀՀ Ազգային ժողովը փոփոխություններ է կատարել ՀՀ ընտրական օրենսգրքում»:

Ի լրումն ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունների՝ 2007 թվականի ընթացքում նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները հաշվի առնելով, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 01.02.2007թ. ընդունել է թիվ 2 և թիվ 4 որոշումները, որոնք վերաբերում են ընտրական հանձնաժողովներում դատավորների ընդգրկման արգելքին:

## ԸՆԳՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատական սահմանադրական վերահսկողության բնագավառում տարվա արդյունքների ամփոփումից հետևում է.

I. Սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու համար դատարանը հարկ է համարում կրկին շեշտել, որ անհրաժեշտ է օրենսդրորեն ապահովել, որպեսզի.

ա) սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ**

մեկ ամսվա ընթացքում հակասահմանադրական ճանաչված ակտն ընդունած պետական մարմինը հատուկ քննության առարկա դարձնի իր կողմից ընդունված ակտը՝ փոխկապակցված դրույթներով հանդերձ, Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնելու հարցը և ապահովի, որպեսզի իրավական վակուում չառաջանա: Սակայն շարունակում է ձևական բնույթ կրել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46 հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության պաշտոնական ներկայացուցիչների դերը ՀՀ սահմանադրական դատարանում: Առկա է նաև այն իրողությունը, երբ բավարար նախադրյալներ չեն ստեղծվում առանձին օրենքների կիրարկումն ապահովելու համար: Օրինակ, «Քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 40.1. հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից» դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով սահմանադրական դատարանն արձանագրել է, որ չնայած «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի գործողությունը պետական իշխանության առանձին մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում կրում է հայեցողական բնույթ, այնուամենայնիվ, այդ օրենքի դրույթների կիրառումն ապահովող անհրաժեշտ պայմանների ստեղծումը (մասնավորապես, էլեկտրոնային փաստաթղթերի ու էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման հստակ համակարգ նախատեսելու, և հավաստագրման գործընթացի պատշաճ կազմակերպման բնագավառներում) կնպաստեր անձանց և հանրային իշխանության մարմինների միջև ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված նորմով պայմանավորված հարաբերությունների (այդ թվում՝ ընտրական գործընթացների հետ կապված) առավել արդյունավետ կարգավորմանը: ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից տվյալ գործով ներկայացված տեղեկատվությունը, «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում են, որ բացի ՀՀ բանկային համակարգից և մասամբ մի քանի այլ ոլորտներից, էլեկտրոնային թվային ստորագրության համակարգը Հայաստանում հիմնականում չի գործում:

Սահմանադրական դատարանը միաժամանակ իրավական դիրքորոշում է արտահայտել, որ մարդու իրավունքների իրականացումը չպետք է խաթարվի վարչակազմակերպչական բնույթի խոչընդոտների պատճառով: «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր

ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը...»,

բ) պետական մարմինները և պաշտոնատար անձինք սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն՝ հատկապես հաշվի առնելով դատարանի իրավական դիրքորոշումները, որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են և իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն: Միջազգային սահմանադրական արդարադատության պրակտիկան միարժեքորեն վկայում է, որ սահմանադրական դատարանն իր որոշման մեջ Սահմանադրության նորմի իրավական բովանդակության բացահայտման կամ օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով ձևակերպում է իր իրավական դիրքորոշումը, որը պարտադիր բնույթ ունի ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար: Այս հանգամանքը մեզանում, թերևս, կարիք ունի նաև օրենսդրական առավել հստակեցման,

գ) հաղթահարվեն աղճատված և իրավական պետության սկզբունքներին անհարիր պատկերացումները երկրում սահմանադրական արդարադատության բովանդակության, էության և նշանակության վերաբերյալ: ՀՀ Սահմանադրության 93 հոդվածը միանշանակ ամրագրում է, որ «Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը»: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով ամրագրված է, որ «Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը»: Այսքանով հանդերձ, 2007թ. նոյեմբերի 28-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքի 135 հոդվածը սահմանում է, որ վարչական դատարանին ընդդատյա են «...գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը»: Դա այն դեպքում, երբ առկա են նաև ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի պահանջները: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ խնդիրը պարզապես մեխանիկական բացթողմանը կամ սահմանադրական արդարադատության էությանն անտեղյակ լինելուն չի վերաբերում: Սա այն փաստն է, որը վկայում է դատական իշխանությանն առնչվող համակարգային սխալի մասին, որն անհապաղ շտկման անհրաժեշտություն ունի: Հայաստանի Հանրապետությունը չի կարող լուրջ շեղում գրանցել սահմանադրական արդարադատության միջազգային զարգացման ընդ-

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ**

հանուր միտումներից, որոնք երկրում ժողովրդավարական զարգացումների և անկախ արդարադատական համակարգի արմատավորման կարևոր նախադրյալներից են:

**II.** Ինչպես նշվել է նախորդ հաղորդման մեջ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 40 հոդվածը սահմանում է, որ.

«1. Սահմանադրական դատարանը, իսկ գործը դատաքննության նախապատրաստելու կապակցությամբ նաև սահմանադրական դատարանի կողմից որպես տվյալ գործով զեկուցող նշանակված սահմանադրական դատարանի անդամը (անդամները) սահմանադրական դատարանի նախագահի գիտությամբ իրավասու է (են) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու փաստաթղթեր, եզրակացություններ և այլ նյութեր, հանձնարարելու կատարել ստուգումներ, ուսումնասիրություններ, փորձաքննություններ, հետազոտություններ, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ պահանջելու նրանց տրամադրության տակ գտնվող նյութեր:

2. Սահմանադրական դատարանի և զեկուցողի պահանջները և հանձնարարականները (այսուհետ՝ պահանջ) պետք է կատարվեն սահմանադրական դատարանի կամ զեկուցողի սահմանած ժամկետում:

Եթե այդ ժամկետում սահմանադրական դատարանի կամ զեկուցողի պահանջների կատարումն անհնարին է, ապա պահանջի հասցեատերը պարտավոր է պահանջի կատարման ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան երեք օր առաջ սահմանադրական դատարանին կամ զեկուցողին գրավոր իրազեկել ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության մասին: Սահմանադրական դատարանը և զեկուցողը կարող են երկարաձգել պահանջի կատարման ժամկետը կամ պահանջները վերահասցեագրել մեկ այլ մարմնի (անձի): Հակառակ դեպքում ուժի մեջ է մնում սահմանադրական դատարանի կամ զեկուցողի արդեն իսկ սահմանած ժամկետը:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանադրական դատարանի պահանջները չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու, դրանց կատարումից խուսափելու կամ կատարման ժամկետները խախտելու դեպքում սահմանադրական դատարանն այդ մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ կարող է նշանակել օրենքով սահմանված պատասխանատվության միջոց:

Պատասխանատվության միջոցի նշանակումը չի ազատում սահմանադրական դատարանի պահանջների կատարումից:

Մույն մասում նշված գործողությունների կամ անգործության համար ֆիզիկական անձինք կամ իրավաբանական անձի ղեկավարը կարող են տուգանվել՝ օրենքով սահմանված չափով:

4. Պատասխանատվության միջոց նշանակվելուց հետո սահմանադրա-

կան դատարանի պահանջները վերստին չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ դրանց կատարումից խուսափելը կամ կատարման ժամկետները խախտելն առաջացնում է քրեական պատասխանատվություն»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն հոդվածի պահանջների կատարումը շարունակում է ձևական բնույթ կրել, քանի որ նշված պատասխանատվության միջոցները դեռևս օրենքով հստակ սահմանված չեն: Նույնը վերաբերում է նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 66 հոդվածի պահանջներին:

**III.** Սահմանադրական դատարանում անհատական դիմումների հիման վրա գործերի քննությունը վկայում է, որ քիչ չեն այն դեպքերը, երբ դատական մարմինների կողմից խախտվում են մարդկանց՝ հատկապես ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներում ամրագրված իրավունքները: Այս վիճակը հիմնականում պայմանավորված է ոչ թե օրենքների նորմերի սահմանադրականության խնդրով, այլ օրենսդրական բացերով ու իրավական նորմի կիրառման հետ կապված խնդիրներով: Այդ մասին են վկայում նաև Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընդունած վճիռները:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ տվյալ իրավիճակներում լավագույն լուծումն այն է, երբ իր կոչմանը համապատասխան սահմանադրական դատարանն ապահովում է մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունը, վերականգնելով այն՝ ցանկացած իրավական ակտով այդ իրավունքները ոտնահարելու դեպքում: Ցավոք, վերջին սահմանադրական փոփոխություններով Հայաստանը որդեգրեց նախորդ դարի 80-ական թվականներին եվրոպական երկրներին բնորոշ՝ կոնկրետ սահմանադրական վերահսկողության համակարգ: Այսուհանդերձ, մինչև հետագա սահմանադրական բարեփոխումները, օրենսդիր մարմնի հատուկ ուշադրության առարկան պետք է լինի հատկապես դատավարական ընթացակարգերի այնպիսի բարեփոխումները, որպեսզի առավելագույնս երաշխավորվեն մարդկանց համար դատարանի մատչելիության և արդար դատավարության սահմանադրական իրավունքները: Այս հարցի առնչությամբ սահմանադրական դատարանը, մասնավորապես, կոնկրետ իրավական դիրքորոշում է արտահայտել «Քաղաքացի Արտակ Ջեյնայանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 26-րդ գլխի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով, որի մասին նշվել է սույն հաղորդման մեջ:

**IV.** Սահմանադրական դատարանում տարբեր գործերով իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ գործնականում

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳՈՒՄ**

դեռևս չի ապահովվել Սահմանադրության 117 հոդվածի 1-ին կետի պահանջների կատարումը: Միաժամանակ, մի շարք իրավական ակտեր (հատկապես դատական համակարգի վերափոխումներին առնչվող), ՀՀ միջազգային պարտավորությունների շրջանակներում չանցնելով անհրաժեշտ փորձաքննություն, սահմանադրականության հարցերով ստեղծում են նոր խնդիրներ: Համակարգային բարեփոխումների հատկապես երկրորդ փուլում նման հարցերն ավելի են կարևորվում, և Հայաստանի Հանրապետությունը պետք է առավել հետևողական մոտեցում դրսևորի ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխան իշխանությունների բաժանման ու հավասարակշռման և իրավունքի գերակայության սկզբունքների արմատավորման ուղղությամբ: Ներկայումս առավել քան հրատապ են դառնում ինչպես Սահմանադրության գերակայության երաշխավորման, այնպես էլ Սահմանադրության անմիջական գործողության ապահովման խնդիրները: Սահմանադրական ժողովրդավարության հաստատումը պահանջում է, որպեսզի Սահմանադրությունը դառնա ապրող իրողություն, ձևավորվի սահմանադրական այնպիսի մշակույթ, երբ հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում սահմանադրական արժեքները, նորմերն ու սկզբունքները կենսական նշանակություն ստանան:



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԹԻՎ 36 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ  
ՄԵԾԱՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԸՆՏՐՎԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» ԹԻՎ 36 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ  
18-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**29 հունիսի 2007թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 36 ընտրատարածքի պատգամավորության թեկնածու՝ սույն գործով դիմող Մ. Սաղաթելյանի, նրա ներկայացուցիչներ Գ. Մինասյանի և Ս. Սաղաթելյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Հայաստանի Հանրապետության թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Բ. Ստեփանյանի և պատասխանող կողմի ներկայացուցիչ՝ իրավաբան Վ. Գրիգորյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետի, 101 հոդվածի 9-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 և 74 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին թիվ 36 ընտրա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 17-ի թիվ 18-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 36 ընտրատարածքի պատգամավորության թեկնածու Մ. Սաղաթելյանի դիմումն է սահմանադրական դատարան:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2007թ. մայիսի 31-ի աշխատակարգային նիստում քննարկելով վերոհիշյալ դիմումը, որոշում է կայացրել՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31 հոդվածի 3-րդ մասի և 74 հոդվածի 4-րդ մասի գործն ընդունել քննության և գործով որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: Նշված որոշմամբ գործով զեկուցող է նշանակվել ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Չ. Դուկասյանը:

Գործի քննության ընթացքում պատասխանող կողմից պահանջվել և ուսումնասիրվել են բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրությունները, հանձնաժողովներին քվեաթերթիկների և քվեարկության ծրարների հատկացման ստացականները, թիվ 36/06, 36/14, 36/15, 36/16, 36/27, 36/34, 36/36, 36/40 ընտրական տեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովների գործավարության մատյանների արձանագրությունները:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի և նրանց ներկայացուցիչների բացատրությունները, ուսումնասիրելով նրանց կողմից ներկայացված փաստաթղթերը, հետազոտելով դիմումները և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Յ .**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններն անցկացվել են 2007 թվականի մայիսի 12-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 68 հոդվածում նախատեսված ժամկետում: Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 171, 31 և 36 հոդվածներով նախատեսված հիմքերով կազմավորվել է թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Ընտրատարածքը ներառում է թվով 59 ընտրական տեղամաս:

Թիվ 36 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով գրանցվել ու քվեաթերթիկներում ընդգրկվել է Ազգային ժողովի պատգամավորության 3 (երեք) թեկնածու: Ըստ թիվ 36 ընտրատարածքային ընտրական

հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության՝ ընտրողների ընդհանուր թիվը 53992 է, իսկ ընտրություններին մասնակցել է 36349 ընտրող: Թեկնածուների օգտին տրված ձայների թիվը 35609 է, որը բաշխվել է հետևյալ կերպ. Մ. Պետոյան՝ 13661, Մ. Սաղաթեյան՝ 7107, Մ. Վարազյան՝ 14 841: Անճշտությունների թիվը կազմել է 134:

Թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2007թ. մայիսի 17-ի 18-Ա որոշումով թիվ 36 ընտրատարածքից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավոր է ճանաչվել առավել կողմ ձայներ ստացած Մ. Վարազյանը:

2. Ըստ դիմող կողմի՝ թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ընդունել է անօրինական որոշում, քանի որ բավարար հիմքեր կային ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու համար: Դիմող կողմի հաշվարկով թիվ 36 ընտրատարածքում անճշտությունների ընդհանուր թիվը կազմել է 9632, որը ՀՀ ընտրական օրենսգրքի 116 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն հիմք պետք է հանդիսանար ընտրությունն անվավեր ճանաչելու համար:

Դիմող կողմը գտնում է նաև, որ պատասխանող կողմի ներկայացրած արձանագրությունների հիման վրա կատարված հաշվարկով նույնպես անճշտությունների թիվը գերազանցում է առավել թվով կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած երկու թեկնածուներին տրված ձայների տարբերությունը: Միաժամանակ մատնանշում է, որ տարբեր արձանագրություններում և քվեաթերթիկների բաշխման ստացականներում առկա են ընտրողների ընդհանուր թվի և հատկացված քվեաթերթիկների թվի առանձին տարբերություններ:

Դիմող կողմը գտնում է նաև, որ ընտրացուցակներում առկա են բազմաթիվ անճշտություններ, որոնք հնարավորություն չեն տալիս պարզելու ընտրողի հասցեն: Իրենց կարծիքով, այդ առնչությամբ իրենց ահազանգերին իրավասու մարմինները ձևական մոտեցում են ցուցաբերել:

Ըստ դիմողի՝ թիվ 32 տեղամասային ընտրական հանձնաժողովում որպես հանձնաժողովի անդամ ներգրավվել է Սանասար Ոսկանյանը, որը միաժամանակ հանդիսացել է համամասնական ընտրակարգով «Ազգային միաբանություն» կուսակցության կողմից առաջադրված պատգամավորության թեկնածու և համապատասխանաբար ընդգրկվել է թեկնածուների կուսակցական ցուցակում: Փաստորեն խախտվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 34 հոդվածի 4-րդ կետի պահանջը:

Միաժամանակ, դիմող կողմը չի վիճարկում թեկնածուների ստացած ձայների թիվը, վկայակոչելով միայն, որ 59 ընտրատեղամասերից միայն մեկում է թեկնածուներից մեկի ձայների շեղում գրանցվել (40 ձայնի չա-

փով)՝ իրենց վստահված անձանց տրված և ԸԸՀ-ի կողմից ներկայացված արձանագրությունների տվյալների միջև:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ ընտրության արդյունքներով ընդունված որոշումը վիճարկելու և ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմողի պահանջն անհիմն է, քանի որ ոչ ճիշտ հաշվարկներ է ներկայացրել սահմանադրական դատարան: Ըստ պատասխանողի՝ դիմող կողմն անճշտությունների չափը հաշվարկել է արձանագրությունների ոչ լրիվ տվյալների հիման վրա, անհասկանալի թվաբանական գործողությունների արդյունքում, առանձին դեպքերում մեխանիկական մոտեցում դրսևորելով, անտեսելով անճշտությունների չափի որոշման վերաբերյալ օրենսգրքի պահանջները:

Պատասխանող կողմը գտնում է նաև, որ առանձին տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից արձանագրությունները կազմելիս թույլ են տրվել մեխանիկական կամ թվաբանական սխալներ, որոնց վերացման հնարավորությունը նախատեսված է ՀՀ ընտրական օրենսգրքի 63 հոդվածով:

Պատասխանող կողմը ներկայացրեց այն հիմնավորումը, որ առաջնորդվելով նշված հոդվածի պահանջով և վերահաշվարկելով բոլոր 59 ընտրական տեղամասերում անճշտությունների իրական չափը, ստացել են, որ այն կազմում է 134, որը որևէ ձևով չէր կարող ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Ընտրացուցակների առնչությամբ պատասխանող կողմը գտնում է, որ իրավասու մարմինները ժամանակին պատգամավորության թեկնածուին տվել են հիմնավոր պատասխան:

Պատասխանող կողմը չհերքեց դիմող կողմի փաստարկը թիվ 32 ընտրատեղամասում համամասնական ընտրակարգով ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորության թեկնածուին տեղամասային ընտրական հանձնաժողովում ընդգրկված լինելու վերաբերյալ:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է. ՀՀ ընտրական օրենսգրքի 61 հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ «Թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի վստահված անձի, հանձնաժողովի անդամի կամ դիտորդի պահանջով նրան տրվում է տեղամասում քվեարկության մասնակիցների թվի վերաբերյալ, ինչպես նաև տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրություններից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով»: Մեծամասնական ընտրակարգով ընտրությունների համար ԿԸՀ-ն քաղվածքի

որևէ ձև չի սահմանել: Տեղամասային ընտրական հանձնաժողովները քաղվածքի փոխարեն թեկնածուների վատահված անձանց տրամադրել են արձանագրությունների ոչ լրիվ տվյալներով պատճեններ: Այդ պատճենների հիման վրա դիմող կողմը փորձել է անճշտությունների հաշվարկ կատարել, որը գործնականում անհնարին է և ընտրությունների իրական պատկերն արտացոլել չի կարող:

Միաժամանակ, ՀՀ ընտրական օրենսգրքի 63 հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ստուգվում է տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունը, և թվաքանակային սխալների առկայության դեպքում համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով: Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում»: Ելնելով այն հանգամանքից, որ ելակետային տվյալների հիման վրա անճշտությունների որոշումն իրականացվում է նաև համակարգչի միջոցով, այնուամենայնիվ, ԸԸՀ-ն պարտավոր էր կատարել օրենքի պահանջը և ստուգել արձանագրությունների բոլոր տվյալների վավերականությունը: Այս պահանջը թիվ 36 ԸԸՀ-ն, մասնավորապես, թիվ 36/06, 36/16, 36/27, 36/36, 36/40 տեղամասերի առնչությամբ սահմանված կարգին համապատասխան չի իրականացրել: Տեղամասային և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նման աշխատանքը, նրանց անդամների ցածր պատրաստվածությունը, թույլ տված մեխանիկական ու թվաքանակային սխալներն անվստահություն են ստեղծել ընտրության արդյունքների նկատմամբ:

Սահմանադրական դատարանը, քվեարկության արդյունքների ելակետային տվյալների, քվեաթերթիկների ու քվեարկության ծրարների՝ ըստ տեղամասերի բաշխման ստացականների, ինչպես նաև թիվ 36/06, 36/14, 36/15, 36/16, 36/27, 36/34, 36/36, 36/40 ընտրական տեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովների գործավարության մատյանների տվյալների հիման վրա պարզել է դիմողի առանձնահատուկ ուշադրության առարկա դարձած թիվ 36/08, 36/10, 36/12, 36/14, 36/15, 36/16, 36/20, 36/27, 36/29, 36/34, 36/35, 36/40, 36/46, 36/50 ընտրական տեղամասերում և ամբողջ ընտրատարածքում անճշտությունների իրական պատկերը:

Անճշտությունների հաշվարկման կարգը սահմանվում է ՀՀ ԸՕ-ի 62 հոդվածի 1-ին մասով, համաձայն որի.

«1. Տեղամասում անճշտությունների չափը հաշվարկելու համար՝

1) համադրվում է տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը (Ա)՝ մարված քվեաթերթիկների թվը (Գ),

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

քվեատուփի՝ վավեր (դ<sup>1</sup>) և անվավեր (դ<sup>2</sup>) քվեաթերթիկների թվի գումարի (Գ) հետ: Տարբերությունը՝ թվի բացարձակ արժեքով, նշվում է որպես առաջին անճշտության չափ:

2) համադրվում է ընտրողների ցուցակում ստորագրությունների թիվը (Բ)՝ քվեատուփի վավեր և անվավեր քվեաթերթիկների թվերի գումարի (Գ) հետ: Եթե քվեատուփի վավեր և անվավեր քվեաթերթիկների թվերի գումարը (Գ) մեծ է ընտրողների ցուցակում ստորագրությունների թվից (Բ), ապա տարբերությունը նշվում է որպես երկրորդ անճշտության չափ: Եթե քվեատուփի վավեր և անվավեր քվեաթերթիկների թվերի գումարը (Գ) փոքր է կամ հավասար ընտրողների ցուցակում ստորագրությունների թվին (Բ), ապա երկրորդ անճշտության չափը նշվում է 0:

3) համադրվում է օգտագործված քվեաթերթիկների ելունդների թիվը (Ե) քվեատուփի վավեր և անվավեր քվեաթերթիկների թվերի գումարի (Գ) հետ: Տարբերությունը՝ թվի բացարձակ արժեքով, նշվում է որպես երրորդ անճշտության չափ:

3<sup>1</sup>) համադրվում է սահմանված նմուշի ծրարների թիվը (Չ) քվեատուփի վավեր և անվավեր քվեաթերթիկների թվերի գումարի (Գ) հետ: Տարբերությունը՝ թվի բացարձակ արժեքով, նշվում է որպես չորրորդ անճշտության չափ:

4) Գումարվում են սույն կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված անճշտությունների թվերը: Այդ թվերի գումարը համարվում է տվյալ տեղամասում անճշտությունների չափ»:

Ինչպես նշվեց, ըստ դիմողի՝ անճշտությունների ընդհանուր թիվը սխալ է հաշվարկված և իրականում պետք է կազմեր ոչ թե 134 (ինչպես նշված է թիվ 36 ԸԸՀ-ի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրությունում), այլ՝ 9632: Դիմողի կողմից վիճարկվող այն տեղամասերում, որտեղ, մասնավորապես, վկայակոչվում են անճշտությունների մեծ չափեր, իրական պատկերն այսպիսին է.

- թիվ 36/08 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 591: Դիմողի կողմից ներկայացված արձանագրությունում առկա տվյալների հիման վրա (որոնք նույնական են պատասխանողի կողմից ներկայացված արձանագրության տվյալների հետ) օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում պատկերն այսպիսին է. 1-ին անճշտությունը կազմում է /5/, 2-րդ անճշտությունը՝ - 5, որն ըստ ԸՕ-ի 62 հոդվածի 2-րդ կետի պետք է նշվի 0, 3-րդ անճշտությունը կազմում է /5/, 4-րդ անճշտությունը՝ 0: Այսպիսով, թիվ 36/08 տեղամասում անճշտությունների չափը կազմում է 10: Դիմողի կողմից ներկայացված անճշտության չափն իր իսկ ներկայացրած տվյալների հիման վրա որևէ հաշվարկով հիմնավորված չէ,

- թիվ 36/10 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 225: Դիմողի կողմից ներկայացված արձանագրության տվյալների հիման վրա (որոնք նույնական են պատասխանողի կողմից ներկայացված արձանագրության տվյալների հետ) անճշտությունների իրական չափը 2 է (1-ին անճշտությունը կազմում է /1/, 2-րդ անճշտությունը՝ -1, որն ըստ ԸՕ-ի 62 հոդվածի 2-րդ կետի պետք է նշվի զրո, 3-րդ անճշտությունը կազմում է /1/, 4-րդ անճշտությունը՝ զրո),

- թիվ 36/12 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 129: Դիմողի կողմից ներկայացված արձանագրությունում առկա տվյալների հիման վրա դիմողը հնարավորություն ուներ հաշվարկելու միայն 2, 3 և 4-րդ անճշտությունները, քանի որ իր մոտ առկա արձանագրությունում բացակայում են 1-ին անճշտության հաշվարկման համար անհրաժեշտ երկու տվյալներ («Հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը (Ա)» և «Մարված (...) քվեաթերթիկների թիվը (Գ)» համապատասխանաբար 3-րդ և 5-րդ տողերում): Օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում պատկերն այսպիսին է.

1-ին անճշտության թիվը կազմում է 0, քանի որ 3-րդ տողում բացակայող «Հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը (Ա)» հնարավոր է լրացնել թիվ 36 ԸԸՀ-ից ստացված ստացականների տվյալների հիման վրա, որի համաձայն թիվ 36/12 ՏԸՀ-ին մեծամասնական ընտրակարգով ընտրությունների անցկացման համար տրամադրվել է 724 քվեաթերթիկ, իսկ մարված քվեաթերթիկների թիվը (Գ) ըստ ամփոփիչ արձանագրության 129 է: 2-րդ անճշտությունը կազմում է զրո, 3-րդ անճշտությունը՝ զրո, 4-րդ անճշտությունը՝ զրո: Այսպիսով, թիվ 36/12 տեղամասում անճշտությունների չափը կազմում է զրո,

- թիվ 36/14 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 4068: Դիմողի և պատասխանողի ներկայացրած փաստաթղթերի համադրումը թույլ է տալիս փաստել, որ որոշ տվյալներ դրանցում տարբերվում են: Պատասխանողն իր կողմից տրված պարզաբանումներում նշել է, որ 36/14 ընտրական տեղամասի արձանագրությունում որոշ տողերում (մասնավորապես՝ 2-րդ, 4-րդ և 5-րդ) լրացվել է ինչպես մեծամասնական, այնպես էլ համամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ համապատասխանաբար նշված տողերում ստացված թվերի գումարը: Հետագայում դրանք ուղղվել են ՀՀ ընտրական օրենսգրքի 63 հոդվածի 1-ին մասի պահանջների հիման վրա՝ հիմք ընդունելով ԸԸՀ-ում եղած ստացականներն ու գործավարության մատյանում առկա գրառումները, ինչը հաստատվել է սահմանադրական դատա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

րանի կողմից նշված ստացականների ու տեղամասային ընտրական հանձնաժողովի գործավարության մատյանում առկա գրառումների ուսումնասիրության արդյունքում: Այսպիսով, օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում անճշտությունների չափի իրական պատկերն այսպիսին է. 1-ին անճշտությունը կազմում է /32/, 2-րդ անճշտությունը՝ 13, 3-րդ անճշտությունը՝ /13/, 4-րդ անճշտությունը՝ 0: Այսպիսով, թիվ 36/14 տեղամասում անճշտությունների չափը կազմում է 58,

- թիվ 36/15 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 1118: Դիմողի և պատասխանողի ներկայացրած փաստաթղթերի համադրումը թույլ է տալիս փաստել, որ որոշ տվյալներ դրանցում տարբերվում են: Սակայն թիվ 36/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի գործավարության մատյանում առկա արձանագրային տվյալների ուսումնասիրությունը վկայեց, որ ԸԸՀ-ի կողմից ներկայացված արձանագրության տվյալները հիմնավոր են, մասնավորապես հաստատվել է, որ գրանցված ընտրողների թիվը կազմում է 975: Օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում անճշտությունների չափի իրական պատկերն այս ընտրատեղամասում այսպիսին է. 1-ին անճշտությունը կազմում է զրո, 2-րդ անճշտությունը՝ զրո, 3-րդ անճշտությունը՝ զրո, 4-րդ անճշտությունը՝ զրո,

- թիվ 36/16 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 207: Դիմողի և պատասխանողի ներկայացրած փաստաթղթերի համադրումը թույլ է տալիս փաստել, որ «Մարված (...) քվեաթերթիկների թիվը (Գ)» 5-րդ տողում դիմողի կողմից ներկայացված քաղվածքում նշված է 3, իսկ պատասխանողի կողմից ներկայացված արձանագրությունում ուղղում է կատարվել և նշվել 210: Սահմանադրական դատարանի կողմից թիվ 36/16 ՏԸՀ-ի գործավարության մատյանի արձանագրության ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ մարված քվեաթերթիկների թիվը կազմում է 210: Օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում անճշտությունների չափի իրական պատկերն այսպիսին է. 1-ին անճշտությունը կազմում է զրո, 2-րդ անճշտությունը՝ զրո, 3-րդ անճշտությունը՝ զրո, 4-րդ անճշտությունը՝ զրո,

- թիվ 36/20 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 1720: Դիմողի ներկայացրած փաստաթղթերի տվյալների հիման վրա նման թիվ հնարավոր չէ ստանալ: Օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում անճշտությունների չափի իրական պատկերն այսպիսին է. 1-ին անճշտությունը կազմում է՝ /Ա-(Գ+Դ)/=2005-(860+(44+1101))/=0, 2-րդ անճշտությունը կազմում է 0 (Դ-Բ=1145-1145=0), 3-րդ

անճշտությունը կազմում է 0 (Ե-Դ=1145-1145=0), 4-րդ անճշտությունը կազմում է 0 (Ձ-Դ=1145-1145=0),

- թիվ 36/27 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 100: Դիմողի և պատասխանողի ներկայացրած փաստաթղթերի համադրումը թույլ է տալիս փաստել, որ որոշ տվյալներ դրանցում տարբերվում են: Մասնավորապես տարբերվում են «Մարված (...) քվեաթերթիկների թիվը (Գ)» 5-րդ տողում նշված թվերը, որը դիմողի կողմից ներկայացված քաղվածքում նշված է 2, իսկ պատասխանողի կողմից ներկայացված արձանագրությունում ուղղում է կատարվել և նշվել 102: Սահմանադրական դատարանի կողմից թիվ 36/27 ՏԸՀ-ի գործավարության մատյանի արձանագրության ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ մարված քվեաթերթիկների թիվը կազմում է 102: Օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում անճշտությունների չափի իրական պատկերն այսպիսին է. 1-ին անճշտությունը կազմում է զրո, 2-րդ անճշտությունը՝ զրո, 3-րդ անճշտությունը՝ զրո, 4-րդ անճշտությունը՝ զրո:

Թիվ 36/27 տեղամասում անճշտությունները հաշվարկելիս դիմող կողմը ցուցաբերել է մեխանիկական մոտեցում և հաշվի չի առել, որ հանձնաժողովին տրամադրված 451 քվեարկության ծրարներից 102-ը չի օգտագործվել (որը երևում է նաև գործավարության մատյանի տվյալներից): Ոստի «Սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը (Ձ)-ն»՝ 12-րդ կետում պետք է հիմք ընդունել ոչ թե 451-ը, այլ 349-ը (վավեր և անվավեր քվեաթերթիկների ընդհանուր թիվը կամ 451-102): Այս տեղամասում անճշտությունների իրական չափը 0 է,

- թիվ 36/29 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 120: Դիմողի և պատասխանողի ներկայացրած փաստաթղթերի համադրումը թույլ է տալիս փաստել, որ դրանցում տարբերվում են միայն հաշվարկվող տվյալներ հանդիսացող թվերը: Մասնավորապես, տարբերվում են «Սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը (Ձ)»՝ 12-րդ և «Վավեր քվեաթերթիկների թիվը (դ1)» 13-րդ տողերում նշված թվերը (երկու թիվն էլ դիմողի ներկայացրած արձանագրության քաղվածքում նշված է 164, իսկ պատասխանողի կողմից ներկայացված արձանագրությունում՝ 124), որոնք ՏԸՀ-ի կատարած սխալ թվաբանական գործողությունների արդյունք են: Թիվ 36 ԸԸՀ-ի կողմից 36/29 տեղամասի ՏԸՀ-ի արձանագրությունն ընդունելիս այդ թվաբանական սխալները հայտնաբերվել են և օրենքով սահմանված կարգով ՏԸՀ-ի նախագահն ուղղել է: Թիվ 36/29 տեղամասի արձանագրությունում անճշտությունների թվերը ՏԸՀ-ի կողմից հաշվարկվել են զրո: Թիվ 36 ԸԸՀ-ի կողմից աղյուսակավորման արդյունքում անճշտության չափը մուտքագրվել է զրո: Ստուգման արդյունքում նույնպես անճշտության չափը կազմում է զրո,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- թիվ 36/34 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 687: Դիմողի և պատասխանողի ներկայացրած փաստաթղթերի համադրումը թույլ է տալիս փաստել, որ որոշ տվյալներ դրանցում տարբերվում են, մասնավորապես. «Մարված (...) քվեաթերթիկների թիվը (Գ)» 5-րդ տողում դիմողի կողմից ներկայացված քաղվածքում նշված է 1, իսկ պատասխանողի կողմից ներկայացված արձանագրությունում ուղղում է կատարվել և նշվել 687: Թիվ 36/34 ՏԸՀ-ի գործավարության մատյանի արձանագրության տվյալների ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ մարված քվեաթերթիկների թիվը կազմում է 687, գրանցված ընտրողների թիվն ըստ ստորագրությունների կազմում է 818 և օգտագործված քվեաթերթիկների ելունդների թիվը նույնպես կազմում է 818: Օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում անճշտությունների չափի իրական պատկերն այսպիսին է. 1-ին անճշտությունը կազմում է /1/, 2-րդ անճշտությունը՝ 1, 3-րդ անճշտությունը՝ /1/, 4-րդ անճշտությունը՝ 0: Այսպիսով, թիվ 36/34 տեղամասում անճշտությունների չափը կազմում է 3,

- թիվ 36/35 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 22: 36/35 տեղամասի արձանագրությունում անճշտությունների վերջնական թիվը ՏԸՀ-ի կողմից նշվել է 0, թիվ 36 ԸԸՀ-ի կողմից աղյուսակավորման արդյունքում մուտքագրվել է 0: Հաշվարկվող թվերի ճշտման պայմաններում պատասխանողի կողմից ներկայացված փաստաթղթում առկա տվյալների հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում անճշտությունների չափը կազմում է 17 (1-ին անճշտությունը կազմում է /4/, 2-րդ անճշտությունը՝ 13, որն ըստ ԸՕ-ի 62 հոդվածի 2-րդ կետի պետք է նշվի զրո , 3-րդ անճշտությունը՝ /13/, 4-րդ անճշտությունը՝ զրո),

- թիվ 36/40 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 319: Դիմողի և պատասխանողի ներկայացրած փաստաթղթերի համադրումը թույլ է տալիս փաստել, որ «Մարված (...) քվեաթերթիկների թիվը (Գ)» 5-րդ տողում դիմողի կողմից ներկայացված արձանագրությունում նշված է 4, իսկ պատասխանողի կողմից ներկայացված արձանագրությունում՝ 323: Թիվ 36/40 ՏԸՀ-ի գործավարության մատյանի տվյալների ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ մարված քվեաթերթիկների թիվը կազմում է 323: Օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում անճշտությունների չափի իրական պատկերն այսպիսին է. 1-ին անճշտությունը կազմում է զրո, 2-րդ անճշտությունը՝ զրո, 3-րդ անճշտությունը՝ զրո, 4-րդ անճշտությունը՝ զրո,

- թիվ 36/46 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 3,

մում է 43: Գլխավորի և պատասխանողի ներկայացրած փաստաթղթերի համադրումը թույլ է տալիս փաստել, որ դրանցում առկա բոլոր տվյալները նույնն են: Թիվ 36/46 տեղամասի արձանագրությունում անճշտությունների չափը ՏԸՀ-ի կողմից նշվել է զրո: Թիվ 36 ԸԸՀ-ի կողմից աղյուսակավորման արդյունքում մուտքագրվել է զրո: Օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում անճշտությունների չափի իրական պատկերն այսպիսին է. 1-ին անճշտությունը կազմում է /43/, 2-րդ անճշտությունը՝ զրո, 3-րդ անճշտությունը՝ զրո, 4-րդ անճշտությունը՝ զրո: Այսպիսով, թիվ 36/46 տեղամասում անճշտությունների չափը կազմում է 43,

- թիվ 36/50 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 85: Գլխավորի և պատասխանողի ներկայացրած փաստաթղթերի համադրումը թույլ է տալիս փաստել, որ դրանցում առկա բոլոր տվյալները նույնն են: Թիվ 36/50 տեղամասի արձանագրությունում անճշտությունների չափը ՏԸՀ-ի կողմից նշվել է 85: Թիվ 36 ԸԸՀ-ի կողմից աղյուսակավորման արդյունքում մուտքագրվել է 85: Օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում նույնպես անճշտությունների իրական չափը կազմում է 85 (1-ին անճշտության թիվը կազմում է /85/, 2-րդ, 3-րդ և 4-րդ անճշտություններինը՝ զրո):

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դիմող և պատասխանող կողմերը ճիշտ չեն հաշվարկել անճշտությունները հետևյալ տեղամասերում.

- թիվ 36/06 տեղամասում անճշտությունների իրական չափը 0 է,  
- թիվ 36/17 տեղամասում անճշտությունների չափն ըստ դիմողի կազմում է 6: Պատասխանող կողմի ներկայացրած արձանագրության մեջ հաշվարկը բացակայում է: Օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում անճշտությունների չափի իրական պատկերն այսպիսին է. 1-ին անճշտությունը կազմում է /14/, 2-րդ անճշտությունը՝ 14, 3-րդ անճշտությունը՝ /14/, 4-րդ անճշտությունը՝ զրո: Այսպիսով, թիվ 36/17 տեղամասում անճշտությունների չափը կազմում է 42,

- թիվ 36/28 ընտրատեղամասում թիվ 6 և 7 տողերի տվյալների մեխանիկական փոխատեղումը չի կարող դիտվել որպես անճշտությունների չափի մեծացման հիմք: Ելակետային տվյալների համադրման արդյունքում ակնհայտ է դառնում, որ այս ընտրատեղամասում անճշտությունների չափը 0 է:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- Դիմող կողմը գտնում է, որ թիվ 36/36 տեղամասում՝ ըստ պատասխանող կողմի արձանագրության, անճշտությունների չափը 697 է: Սակայն դարձյալ հաշվի չի առնվում, որ թե՛ իր վստահված անձին տրամադրված, թե՛ ԸԸՀ-ի ներկայացրած արձանագրություններում և թե՛ տվյալ ընտրատեղամասի տեղամասային ընտրական հանձնաժողովի գործավարության մատյանում չօգտագործված քվեարկության ծրարների թիվը 697 է: Ուստի Զ)-ն չէր կարող հավասար լինել 1711-ի, որը հանձնաժողովին հատկացված քվեարկության ծրարների թիվն է: Անճշտությունները հաշվարկելիս առնվազն հիմք պետք է ընդունվեր 1014 թիվը (վավեր և անվավեր քվեաթերթիկների ընդհանուր թիվը կամ 1711 - 697),

- թիվ 36/37 տեղամասի արձանագրությունում անճշտությունների վերջնական թիվը ՏԸՀ-ի կողմից նշվել է 145: Թիվ 36 ԸԸՀ-ի կողմից աղյուսակավորման արդյունքում մուտքագրվել է 0: Օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում անճշտությունների իրական չափը կազմում է 9, ընդ որում, 1-ին անճշտությունը կազմում է /5/, 2-րդ անճշտությունը՝ գրո, 3-րդ անճշտությունը՝ /4/, 4-րդ անճշտությունը՝ գրո,

- թիվ 36/51 տեղամասի արձանագրությունում անճշտությունների վերջնական չափը ՏԸՀ-ի կողմից ի սկզբանե նշվել է 126, այնուհետև ուղղվել է և նշվել 0: Թիվ 36 ԸԸՀ-ի կողմից աղյուսակավորման արդյունքում մուտքագրվել է գրո: Օրենքով սահմանված կարգով կատարված հաշվարկի արդյունքում անճշտությունների չափի իրական պատկերն այսպիսին է. 1-ին անճշտությունը կազմում է գրո, 2-րդ անճշտությունը՝ գրո, 3-րդ անճշտությունը՝ գրո, 4-րդ անճշտությունը՝ գրո:

Թիվ 36 ընտրատարածքի բոլոր ընտրական տեղամասերում անճշտությունների չափի օրենքով սահմանված կարգով հաշվարկը վկայում է, որ դրա ընդհանուր թիվը կազմում է 364, որը 3.2 անգամ փոքր է տվյալ ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով 1-ին և 2-րդ տեղերը գրաված թեկնածուների ձայների տարբերությունից և 21.3 անգամ փոքր է երրորդ ու առաջին տեղերը գրաված թեկնածուների ձայների տարբերությունից:

Նկատի ունենալով, որ դիմող կողմը ներկայացրեց առանձին տեղամասերում հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թվերի մասնակի տարբերություններ՝ ըստ արձանագրությունների և ըստ ստացականների, ապա անճշտությունների չափն հաշվարկվել է նաև ստացականներում ամփոփված տվյալների հիման վրա, և այն կազմում է 363:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ընտրողների

թվի վերաբերյալ տվյալներն ըստ արձանագրությունների և ըստ ստացականների համադրելի չեն, քանի որ ստացականներում և արձանագրություններում ընտրողների թվի որոշման հիմքերը տարբեր են: Մասնավորապես, արձանագրային տվյալներում արտացոլվում են նաև օրենքով նախատեսված կարգով ձևավորվող՝ ընտրողների լրացուցիչ ցուցակի տվյալները: Ուստի ընտրողների ընդհանուր թվի որոշման համար հիմք պետք է ընդունել արձանագրության տվյալները:

6. Ընտրացուցակների անճշտությունների վերաբերյալ դիմող կողմի հարցադրումների և ՀՀ ոստիկանության պաշտոնական տվյալների համադրումից հետևում է, որ որևէ քաղաքացի ընտրացուցակից դուրս չի մնացել, ընդգրկումը կատարվել է մի դեպքում ըստ նրանց հաշվառման վայրի (քաղաքացիների կողմից ներկայացված սեփականության վկայագրերի հիման վրա), մյուս կողմից՝ ըստ իրենց անձնագրերում նշված հաշվառման վայրերի հասցեների (երբ քաղաքացիները չեն ներկայացրել իրենց բնակության վայրերի հասցեների փոփոխման վերաբերյալ նոր սեփականության վկայագրեր): Գործում առկա չէ նաև որևէ փաստ, որը կվկայի այն մասին, որ դիմող կողմի մատնանշած որևէ քաղաքացի ի վիճակի չի եղել իրացնելու իր ընտրական իրավունքը: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի բաժնի և Արթիկի քաղաքապետարանի կողմից ժամանակին անհրաժեշտ քայլեր չձեռնարկելու պատճառով տարբեր սկզբունքներ են դրվել ընտրական ցուցակների կազմման հիմքում, որն ընտրացուցակների նկատմամբ անվստահության տեղիք է տվել:

7. Դիմողի այն փաստարկը, որ թիվ 36/32 տեղամասային ընտրական հանձնաժողովում որպես անդամ է ներգրավվել Մանասար Ոսկանյանը, որը միաժամանակ հանդիսացել է համամասնական ընտրակարգով «Ազգային միաբանություն» կուսակցության կողմից առաջադրված պատգամավորության թեկնածու, հաստատվեց գործի քննության ընթացքում: Չնայած այն բանին, որ տվյալ անձը մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրված անձանց հետ կուսակցական առնչություն չունի, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ոչ բավարար վերահսկողության պատճառով խախտվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 34 հոդվածի 4-րդ մասի պահանջը, համաձայն որի, ի թիվս այլ անձանց, պատգամավորության թեկնածուն նույնպես չի կարող լինել ընտրական հանձնաժողովի անդամ: Միաժամանակ, եթե նույնիսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն անվավեր ճանաչեր տվյալ տեղամասում

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

քվեարկության արդյունքները, ապա, հաշվի առնելով նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 40 հոդվածի 13-րդ մասի պահանջը, դա բավարար հիմք չէր կարող հանդիսանալ նույն օրենսգրքի 116 հոդվածի հիմքերով ընտրության արդյունքների վերաբերյալ այլ որոշում կայացնելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 74 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին թիվ 36 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 36 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 17-ի թիվ 18-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**29 հունիսի 2007 թվականի  
ՍԳՈ-704**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱԿՈՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 313 ՀՈԳՎԱԾԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**3 հուլիսի 2007թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող՝ քաղաքացի Ա. Հակոբյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արշալույս Հակոբյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ա. Հակոբյանի 05.03.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող Ա. Հակոբյանի եւ պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998թ. հուլիսի 28-ին եւ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածը սահմանում է.

«1. Խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կնքված գործարքը, ինչպես նաեւ այն գործարքը, որն անձն ստիպված է եղել կնքելու ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով, որից օգտվել է մյուս կողմը (ստրկացուցիչ գործարք), տուժողի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

2. Եթե գործարքն անվավեր է ճանաչվել սույն հոդվածի 1-ին կետում նշված հիմքերից մեկով, ապա մյուս կողմը տուժողին վերադարձնում է գործարքով իր ամբողջ ստացածը, իսկ բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում դրա արժեքը հատուցում է դրամով: Գործարքով մյուս կողմից տուժողի ստացած գույքը, ինչպես նաեւ մյուս կողմից նրան հասանելիքը բռնագանձվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության: Գույքը բնեղենով պետությանը հանձնելու անհնարինության դեպքում դրա արժեքը բռնագանձվում է դրամով: Բացի դրանից, մյուս կողմը տուժողին հատուցում է նրան պատճառած իրական վնասը»:

2. Ըստ վերջնական դատական ակտի՝ Ա. Վահրադյանը եւ Ա. Թումասյանը դիմողից 2002 թվականի սեպտեմբեր - նոյեմբեր ամիսներին վերցրել են 4900 ԱՄՆ դոլար գումար, որը չի վերադարձվել, եւ վերջինս կրել է վնասներ: Ա. Վահրադյանի մայրը՝ Ա. Ումրոյանը պարտավորվել է վերադարձնել պարտքի մի մասը, բայց հետագայում հրաժարվել է: Ուստի դիմողը հայց է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան՝ 4.414.850 դրամ գումարի բռնագանձման պահանջի մասին: Հակընդդեմ հայցով Ա. Ումրոյանը պահանջել է անվավեր ճանաչել պարտավորագիրը: Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006 թվականի ապրիլի 10-ի վճռով հայցը բավարարվել է մասնակի, իսկ հակընդդեմ հայ-

ցը մերժվել: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 4-ի վճռով եւս հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել: Ա. Ումրոյանը դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան, որն իր 26.10.2006թ. որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի 1-ին մասի հիմքով, Ա. Ումրոյանի պարտավորագիրն անվավեր է ճանաչել:

3. Քաղ. Ա. Հակոբյանը 05.03.2007թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան, գտնելով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 14 հոդվածի, 31 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 42 հոդվածի 2-րդ մասի եւ 47 հոդվածի 1-ին մասի պահանջներին, եւ դրանք անհրաժեշտ է անվավեր ճանաչել:

Դիմող կողմը մասնավորապես մատնանշում է, որ վիճարկվող իրավական ակտի՝ 313 հոդվածում բացահայտված չեն «չարամիտ համաձայնությամբ կնքված գործարք» եւ «ծանր հանցամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններ» հասկացությունները: Ըստ դիմող կողմի՝ «... նորմից դժվար է կռահել, թե ինչ չափանիշներով են որոշվելու ծանր հանցամանքներն ու ծայրահեղ ոչ ձեռնտու պայմանները, ինչ չափի եւ բնույթի պետք է դրանք համապատասխանեն, որպեսզի որակվեն «ծանր հանցամանքների բերում» եւ «ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններ»»: Դիմող կողմը գտնում է, որ այս նորմն ընդունելիս օրենսդիրը դրան իրավական որոշակիություն չի հաղորդել, եւ դրանք չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, իրավական որոշակիությունը բացակայում է նաեւ տուժողի հայցով դատարանի կողմից գործարքն անվավեր ճանաչելու ձեռնարկման մեջ:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը վկայակոչում է նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի թիվ 630 որոշման 11-րդ կետի 6-րդ պարբերությունում տրված սահմանադրական դատարանի դիրքորոշումը, ըստ որի՝ «Տվյալ օրենքը պետք է համապատասխանի նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձեռնարկված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Սահմանադրական դատարանի նշված իրավական դիրքորոշման հիման վրա դիմողը գտնում է, որ իր նկատմամբ կիրառված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի դրույթները չեն կարող ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին մասի իմաստով դիտարկվել որպես օրենք, ուստի այն հակասում է նաեւ ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին եւ 8 հոդվածի 1-ին մասին:

Ըստ դիմողի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքը սահմանափակվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի բովանդակությամբ, քանի որ սեփականատերը նախապես չգիտի իր դրամական միջոցներն այլ անձի հանձնելիս ինչ ծանր հանգամանքների էի ծայրահեղ ոչ ձեռնտու ինչ պայմանների առկայության դեպքում նա կգրկվի իր սեփականությունը հետ ստանալու իրավունքից, այսինքն՝ ապօրինի կերպով սահմանափակվում է նրա սեփականության իրավունքը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ դիմողի փաստարկները հիմնավոր չեն, եւ դիմումը ենթակա է մերժման հետեւյալ նկատառումներով:

Հայաստանի Հանրապետությունը համարվելով ռոմանագերմանական իրավական համակարգին հարող իրավական ավանդույթներ ունեցող երկիր, որտեղ դատարաններն առաջնորդվում են բացառապես օրենքներով, ենթադրվում է, որ օրենքները պետք է լինեն որոշակի եւ հնարավորինս կանխատեսելի: Բայց դա չի նշանակում, որ օրենքները պետք է կարգավորեն բոլոր մանրամասնությունները, իսկ դատարանները՝ մեխանիկորեն կատարեն դրանց հանձնարարականները:

Ըստ պատասխանողի՝ «Հասարակական հարաբերությունների դինամիկ զարգացման պայմաններում օրենսդրի համար բավականին դժվար է ստեղծել այնպիսի իրավական նորմեր, որոնք կգործեն երկարատեւ ժամանակահատվածում եւ համապարփակ կկարգավորեն բոլոր հասարակական հարաբերությունները՝ բացարձակ որոշակիությամբ: ...

Հետեւաբար, ոչ մի օրենք չի կարող հաշվի առնել իրավական կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների բազմազանությունը եւ հստակ կանոնակարգել քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների այս կամ այն վարքագիծը»:

Պատասխանող կողմը փաստում է նաև, որ այս առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է. «Որքան էլ նորմը հստակ ձեւակերպվի իրավունքի ցանկացած համակարգում ... դատական մեկնաբանման տարրն անխուսափելի է: Միշտ գոյություն կունենա խրթին դրվագների պարզաբանման եւ փոփոխվող հանգամանքներին հարմարվելու անհրաժեշտություն»: Հիշյալ առումով պատասխանող կողմը գտնում է, որ միանգամայն իրավացիորեն օրենսդիրը դատարանին ընձեռել է որոշում կայացնելու դիսպոզիտիվ հնարավորություն, ինչը պայմանավորված է վիճարկվող դրույթի կազուիստիկ (դիավաճաբանական) բնույթով:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի 1-ին մասը սահմանում է գործարքի ան-

վավերության այնպիսի հիմքեր, ինչպիսիք են խաբեությունը, բռնությունը, սպառնալիքը, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությունը կամ ծանր հանգամանքների բերումով անձի համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմանները:

Գործարքները քաղաքացիների կամ իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ եւ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցմանը: Քաղաքացիական օրենսդրության կարեւոր սկզբունքներից մեկն իրավահարաբերության մասնակիցների կամքի ազատ իրականացման սկզբունքն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3 հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ քաղաքացիները եւ իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքներ ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով եւ ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները եւ պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման: Քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների խախտված իրավունքների վերականգնումն ապահովելը, դրանց դատական պաշտպանությունը եւս օրենսդիրը դիտում է իբրեւ հիմնարար սկզբունք: Հենց այդ սկզբունքների իրագործմանն են նպատակաուղղված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ բաժնի 18-րդ գլխի «Գործարքների անվավերությունը» վերտառությամբ 2-րդ պարագրաֆի 303-317 հոդվածներում պարունակվող իրավանորմերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի 1-ին մասում հստակ շարադրված են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում դատարանը տուժողի հայցով կարող է անվավեր ճանաչել գործարքը: Դիմողի այն փաստարկը, որ վիճարկվող նորմը զուրկ է իրավական որոշակիությունից, քանի որ դրանում բացահայտված չեն «ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններ» հասկացությունը, հիմնավոր չէ: Նույնիսկ մեծ ցանկության դեպքում էլ, օրենսդրական տեխնիկայի առումով, անհնարին է նկարագրել բազմաթիվ ու բազմաբովանդակ բոլոր այն դեպքերը, երբ անձն, իր կամքին հակառակ, ստիպված է լինում կնքել իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով գործարք: Եվ ամենեւին էլ պատահական չէ, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածում նշված հիմքերով գործարքների անվավերության հարցի լուծումը նախատեսում է միայն դատական կարգով: Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում, ելնելով գործի հանգամանքներից, դատարանն է որոշում՝ արդյոք կնքված գործարքն ստրկացուցիչ է, թե՛ ոչ: Մասնավորապես, դատարանը գործի քննությամբ ձեռք բերված ապացույցներով գնահատում է, թե տեղի ունեցել է խաբեություն, բռնություն, սպառնալիք, կողմի ներկայա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ցուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնություն, ինչ հանգամանքներում է կնքվել գործարքը, այդ հանգամանքները ծանր են եղել, թե՛ ոչ, գործարքի պայմանները հայցվորի համար ծայրահեղ ոչ ձեռնտու են եղել, թե՛ ոչ: Այս հարցերը պարզելուց հետո միայն դատարանը կարող է հանգել եզրակացության՝ խախտվել է, արդյոք, կամքի ազատ արտահայտության եւ ի շահ իրեն իրավունքներ եւ պարտականություններ ձեռք բերելուն ուղղված գործողություններ կատարելու՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքը:

Ինչ վերաբերում է դիմող կողմի այն պնդմանը, թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 14 հոդվածի, 31 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 42 հոդվածի 2-րդ մասի եւ 47 հոդվածի 1-ին մասի պահանջներին, ապա պետք է նկատել, որ վիճարկվող հոդվածը ոչ միայն չի հակասում ՀՀ Սահմանադրության վերը նշված հոդվածներին, այլև կոչված է սահմանադրական այդ դրույթների իրական ապահովմանն այն առումով, որպեսզի քաղաքացիական իրավահարաբերություններում բացառվեն խաբեությունը, բռնությունը, սպառնալիքը, չարամիտ համաձայնությունը, ինչպես նաեւ ծանր հանգամանքներից օգտվելով՝ կողմի համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով գործարքների կնքումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածում սահմանված դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**3 հուլիսի 2007 թվականի  
ՍԳՈ-705**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-ԻՆ ՄԵՂՐԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ  
ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՎՐԱ ՀԻԴՐՈՒԼ ԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԵՎ  
ՇԱՀԱԳՈՐԾԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**10 հուլիսի 2007թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ Ա. Միմոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի մարտի 19-ին Մեղրիում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու եւ շահագործելու բնագավառում համագործակցության մասին համաձայնագ-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

րում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007 թվականի մարտի 19-ին՝ Մեղրիում: Համաձայնագրի նպատակն է արդյունավետ օգտագործել Մեղրի եւ Ղարաչիլար վայրերում Արաքս գետի հիդրոներուժը:

Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսվում է Մեղրիի եւ Ղարաչիլարի հիդրոէլեկտրակայանների կառուցումն սկսել 2007 թվականին եւ ավարտել վեց տարվա ընթացքում: Համաձայնագրի 4-րդ հոդվածով նախատեսվում է համատեղ ուսումնասիրության եւ շինարարական գոտում Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ սահմանային երթեւեկությունը դյուրացնելու նպատակով առանձին կանոնակարգի ստորագրում երկու ամսվա ընթացքում, որով սահմանվելու են Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանով երկու երկրների քաղաքացիների երթեւեկության, ինչպես նաեւ համատեղ ուսումնասիրության եւ շինարարական գոտու տարածք շինանյութի եւ սարքավորումների ներմուծման ձեւերը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության սկզբունքով, ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ՀՀ համապատասխան կազմակերպությունների միջոցով համագործակցել Իրանական կողմի հետ Արաքս գետի վրա /Մեղրի եւ Ղարաչիլար/ հիդրոէլեկտրակայանների կառուցման եւ շահագործման բնագավառում,
- ամրագրել Արաքս գետի հիդրոէներգետիկ ներուժն օգտագործելու՝ երկու պետությունների իրավունքը միջազգային պայմանագրերի շրջանակներում գործող միջազգային կազմակերպություններում եւ անհրաժեշտության դեպքում պաշտպանել այդ իրավունքը,
- ֆինանսավորել Մեղրիի հիդրոէլեկտրակայանի նախագծումը, կառուցումը եւ սարքավորումներով ապահովումը,
- ինքնուրույն կատարել Հայկական կողմի ընթացիկ աշխատանքները,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

այդ թվում՝ շինությունների, սարքավորումների, ամբարտակների եւ հիդրոկայանների շահագործման, պահպանման եւ վերանորոգման աշխատանքները, եւ խուսափել ցանկացած քայլից, որը կվնասի էլեկտրակայաններին եւ դրանց բնականոն գործունեությանը,

- փոխգործակցել Իրանական կողմի համապատասխան ներկայացուցիչների՝ ՀՀ տարածք անարգել մուտքն ու ելքն ապահովելու հարցում՝ այն դեպքերում, երբ Իրանական կողմի համար անհրաժեշտություն կառաջանա ստուգելու կամ վերանորոգելու ՀՀ տարածքում գտնվող իր շինությունները,

- հոգալ ՀՀ-ին պատկանող շինությունների վերանորոգման, պահպանման եւ շահագործման հետ կապված բոլոր ծախսերը,

- էլեկտրակայանների կառուցումը դյուրացնելու նպատակով օգտագործել ՀՀ ֆինանսական, տեխնիկական, ճարտարագիտական եւ շինարարական ներուժը, ինչպես նաեւ շինանյութերի ու սարքավորումների ձեռքբերման հարցում ՀՀ կարողությունները՝ ՀՀ-ում գործող կանոնների եւ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության ու Իրանի Իսլամական Հանրապետության էներգետիկայի նախարարության միջեւ փոխադարձ պայմանավորվածության համաձայն:

3. Կողմերը վերոհիշյալ համաձայնագրի մեկնաբանման կամ իրականացման ընթացքում ծագած տարաձայնությունները կլուծեն խորհրդակցությունների եւ դիվանագիտական բանակցությունների միջոցով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու եւ շահագործելու բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 հուլիսի 2007 թվականի  
ՍԳՈ-706**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ԿԱՀԻՐԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՓՈՆԱԳԱՐՁ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(46)2008

**Քաղ. Երևան**

**10 հուլիսի 2007թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 , 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի ապրիլի 15-ին Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ մաքսային բնագավառում համագործակցության եւ փոխադարձ աջակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Ա. Ավետիսյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ջ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007 թվականի ապրիլի 15-ին՝ Կահիրեում:

Համաձայնագրի նպատակն է բեռների, ուղեւորների փոխադրումների եւ փոստային առաքումների մաքսային հսկողության պարզեցումը եւ հսկողության մեթոդների կատարելագործումը, ինչպես նաեւ մաքսային ապօրինի գործունեության կանխարգելումը:

2. Համաձայնագիրը նախատեսում է մաքսային տարածքներով փոխադրումներն իրականացնել Կողմերի օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաեւ ճանաչել միմյանց մաքսային փաստաթղթերը, նույնականացման միջոցները եւ պաշտոնական այլ նշանները:

Համաձայնագրի շուրջ ծագած վիճելի հարցերը կկարգավորվեն մաքսային ծառայությունների բանակցությունների միջոցով:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է, մասնավորապես.

- հատուցել տեղափոխման ընթացքում տարանցիկ բեռների պակասելու, դրանց հասցված վնասների եւ ցանկացած այլ խախտումների համար,
- չպահանջել համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացած ծախսերի հատուցում,

- անհրաժեշտության դեպքում հոգալ պետական պաշտոնյաներ չհանդիսացող փորձագետների, վկաների եւ թարգմանիչների ծախսերը եւ վճարները,

- մաքսային հսկողություն իրականացրած մարմնի մերժած ապրանքները վերաարտահանել մյուս Կողմի տարածք,

- համագործակցել մաքսանենգությունը եւ մաքսային իրավախախտումները կանխարգելելու եւ հետաքննելու ուղղությամբ,

- լիազորել իր պաշտոնատար անձանց մյուս Կողմի տարածքում հանդես գալ որպես փորձագետ կամ վկա դատական կամ վարչական վարույթում,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- անհրաժեշտության դեպքում կիրառել թմրանյութերի եւ հոգեմեդիկամենտիկոզների «Վերահսկելի մատակարարում» մեթոդը,
- համագործակցել մշակութային արժեքների ապօրինի ներմուծման կամ արտահանման դեմ պայքարի ոլորտում,
- միմյանց տրամադրել տեղեկատվություն մաքսային հարցերի վերաբերյալ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2007 թվականի ապրիլի 15-ին Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ մաքսային բնագավառում համագործակցության եւ փոխադարձ աջակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 հուլիսի 2007 թվականի  
ՍԳՈ-707**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ  
(ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ) ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**10 հուլիսի 2007թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի ապրիլի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ վարկային համաձայնագրում (Սեւանա լճի բնապահպանական ծրագիր) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց .**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007 թվականի ապրիլի 26-ին՝ Հայաստանում, եւ ունի բնապահպանական նպատակ, այն է՝ Սեւանա լճին եւ լճի ավազանին հարող շրջաններում գտնվող հինգ քաղաքային համայնքներից Սեւանա լիճ ներհոսող կեղտաջրերի մաքրումն ու վերամշակումը, կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրման, ինչպես նաեւ նշված տարածքներով անցնող ջրահեռացման խողովակների վերանորոգման եւ փոխարինման միջոցով:

2. Սեւանի բնապահպանական ծրագիրն իրականացնելու համար Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը Հայկական կողմին՝ ի դեմս ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությանը, պարտավորվում է տրամադրել վարկ յոթ միլիոն եվրո գումարի չափով՝ երկու տրանշներով (փոխանցումներով). հինգ միլիոն եվրո (տրանշ Ա) եւ երկու միլիոն եվրո (տրանշ Բ) համապատասխանաբար:

3. Հայկական կողմը դրա դիմաց ստանձնում է մի շարք պարտավորություններ՝ կապված ինչպես բուն Ծրագրի իրականացման, այնպես էլ ֆինանսական միջոցների օգտագործման եւ տոկոսների վճարման հետ: Մասնավորապես, Ծրագրի իրականացման առումով նախատեսված է.

- վարկի միջոցները տրամադրել Ծրագիրն իրականացնողին (ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին),
- ապահովել սույն համաձայնագրի դրույթների պահանջների կատարումը եւ վարկի օգտագործումն ըստ նպատակի,
- առանց Բանկի համաձայնության չփոխանցել, չփոփոխել, չեղյալ չհայտարարել եւ չհրաժարվել ապագայում կնքվելիք Երկրորդային վարկի պայմանագրի որեւէ դրույթի կատարումից,
- պարտավորեցնել Ծրագիրն իրականացնողին՝ կատարել Ծրագրի համաձայնագրի շրջանակներում իր ստանձնած բոլոր պարտավորությունները՝ առանց բացառության,
- ապահովել, որպեսզի Վարկառուի ուղղակի կամ անուղղակի վերահսկողության տակ գտնվող Ծրագիրն իրականացնողի բաժանորդները կանխիկ եւ ամբողջությամբ վճարեն վերջինիս մատուցած ծառայությունների դիմաց,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- ապահովել բոլոր օրենսդրական, կարգավորող կամ այլ բնույթի գործողությունների կատարումը, որոնք անհրաժեշտ են Վարկային համաձայնագրի եւ Ծրագրի համաձայնագրի դրույթների ուժի մեջ մտնելու համար, այդ թվում նաեւ՝ ա) առաջարկություն անել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին սակագների բարձրացման վերաբերյալ, բ) Ծրագիրն իրականացնողի համար ստեղծել անհրաժեշտ բոլոր պայմանները՝ վերջինիս կողմից Ծրագրի համաձայնագրով եւ Երկրորդային վարկի համաձայնագրով նախատեսված պարտավորությունները պատշաճ կատարելու համար,

- Ծրագիրն իրականացնողին ապահովել վերջինիս կողմից իր շարունակական ծախսերը կատարելու համար պահանջվելիք բավարար միջոցներով, պայմանով, որ Վարկառուն սուբսիդավորումը կդադարեցնի (կամ կպարտավորեցնի վճարել Ջրային տնտեսության պետական կոմիտեին) 2010 թ. ֆինանսական տարվա սկզբից մինչեւ սույն համաձայնագրի դադարեցումը,

- չվաճառել, չփոխանցել, վարձակալության չտալ կամ այլ կերպով չօտարել Ծրագիրն իրականացնողի տնօրինության տակ գտնվող եւ Ծրագրի պատշաճ իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ամբողջությամբ կամ դրանց զգալի մասը, բացառությամբ Ծրագիրն իրականացնողի կողմից թափանցիկ կերպով անցկացված սեփականաշնորհման դեպքերի, եւ այլն:

Ֆինանսավորման առումով Հայկական կողմը փաստորեն պարտավորվում է.

- պահպանել վարկի ֆինանսավորման այնպիսի պայմաններ, որոնք սահմանում են օգտագործվող գումարի, կանխավճարի գումարի, մարման գումարի նվազագույն չափերը, ինչպես նաեւ տոկոսավճարների վճարման դրույքաչափն ու պարբերականությունը, ընդ որում, տրանշ Ա-ի տոկոսադրույքը ֆիքսված է, իսկ տրանշ Բ-ինը՝ փոփոխվող,

- վարկի գումարն օգտագործել՝ ապրանքներ ձեռք բերել, աշխատանքներ կատարել եւ ծառայություններ մատուցել խելամիտ գներով,

- Ծրագիրն իրականացնողին տրամադրել Գործառնական լրահատկացում՝ հետեւյալ նվազագույն չափերով. 1) 300.000.000 ՀՀ դրամ՝ 2007թ. ֆինանսական տարվա ընթացքում, 2) 800.000.000 ՀՀ դրամ՝ 2008թ. ֆինանսական տարվա ընթացքում, 3) 400.000.000 ՀՀ դրամ՝ 2009 թ. ֆինանսական տարվա ընթացքում,

- վարկը մարել 24 (քսանչորս) հավասար կամ հնարավորինս հավասար կիսամյակային մարումներով:

Համաձայնագիրը սահմանում է նաեւ վերջինիս ուժի մեջ մտնելու, կատեցման եւ դադարեցման կարգը, ժամկետներն ու պայմանները:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

4. Համաձայնագրի 1-ին հոդվածի 1.01 բաժնում արձանագրված է, որ 2006թ. մայիսի 1 թվագրված՝ Բանկի Ստանդարտ պայմանների «բոլոր դրույթները ներառվում են եւ կիրառելի են դառնում սույն Համաձայնագրի նկատմամբ նույն ուժով եւ ազդեցությամբ, եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին սույն Համաձայնագրում»: Այսինքն՝ նշյալ փաստաթուղթը փաստորեն դառնում է սույն համաձայնագրի բաղկացուցիչ մաս:

Մյուս փաստաթղթերը, որոնց հղումներ կան համաձայնագրում («Ծրագրի համաձայնագիրը», ինչպես նաեւ ապագայում կնքվելիք «Երկրորդային վարկի համաձայնագիրը», որով պայմանավորված է վարկի Բ տրանշի իրականացումը), իրենցից ներկայացնում են պայմանավորվածություններ Հայաստանի ջրմուղ-կոյուղի ընկերության հետ, հետեւաբար, միջազգային պայմանագրի կարգավիճակ չունեն եւ սահմանադրական դատարանի քննության առարկա չեն հանդիսանում:

5. Համաձայնագրում նախատեսված եւ ֆինանսավորվող Ծրագիրը կարեւորվում է ՀՀ Սահմանադրության 10 հոդվածում ամրագրված՝ շրջակա միջավայրի պահպանության՝ պետության պարտավորության կատարման առումով, ինչպես նաեւ 33.2. հոդվածում արձանագրված սահմանադրական նորմի՝ առողջությանը եւ բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու յուրաքանչյուրի իրավունքի ապահովման համատեքստում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2007 թվականի ապրիլի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ վարկային համաձայնագրում (Մեւանա լճի բնապահպանական ծրագիր) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 հուլիսի 2007 թվականի  
ՍԳՈ-708**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՌՈՒՉԱՆՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 407 ՀՈԳՎԱԾԻ  
4-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ 414.2. ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԳ ԵՎ 4-ՐԳ  
ԿԵՏԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**20 հուլիսի 2007թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմ Ռ. Մանուկյանի, նրա ներկայացուցիչ՝ փաստաբան Բ. Մինասյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ռուզաննա Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասի եւ 414.2. հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ կետերի դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթը Ռ. Մանուկյանի՝ 31.05.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի վիճարկվող դրույթները, որպես օրենսգրքի լրացումներ, ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. հուլիսի 7-ին՝ ՀՕ-152-Ն օրենքով:

2. Դիմողի կողմից վիճարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրականությունը:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի դրույթների սահմանադրականության վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 11-ի ՍԳՈ-691 որոշումը, ուստի, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի դրույթները, սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմն իր 2007թ. հունիսի 18-ի որոշմամբ մերժել է Ռ. Մանուկյանի դիմումի քննության ընդունումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի մասով:

Դիմողը սահմանադրական դատարան է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարանի վերջնական դատական ակտ հանդիսացող երկու որոշում: Առաջինով՝ 2006թ. նոյեմբերի 13-ին վճռաբեկ դատարանը որոշել է (ՎԲ-301/06) վերադարձնել ներկայացված վճռաբեկ բողոքը՝ կիրառելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ կետերի դրույթները: Երկրորդով՝ 2007թ. հունվարի 22-ին վճռաբեկ դատարանը որոշել է (ՎԲ-11/07) բողոքը թողնել առանց քննության՝ կիրառելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասի պահանջը:

Դիմողը վիճարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված դրույթների սահմանադրականությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Վճռաբեկ բողոք» վերառառությամբ 407 հոդվածի 4-րդ մասում սահմանված է՝ «Բողոքը թողնվում է առանց քննության նաեւ այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել»:

3. Գիմող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 3 (2-րդ մաս), 6 (2-րդ մաս), 18 (1-ին եւ 2-րդ մասեր), 19 (1-ին մաս) հոդվածներին՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

ա) վճռաբեկ դատարանը 2006թ. նոյեմբերի 13-ի իր որոշման մեջ նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի պահանջներից ելնելով՝ վճռաբեկ բողոքում հիմքեր չկան այն բավարարելու համար, իսկ 2007թ. հունվարի 22-ի որոշմամբ երկրորդ վճռաբեկ բողոքն անհիմն կերպով թողել է առանց քննության՝ պատճառաբանելով, որ վճռաբեկ դատարանն այդ հարցին արդեն անդրադարձել է եւ 13.11.2006թ. իր որոշմամբ դրան տվել է լուծում: Որպես վերջին որոշման հիմնավորում նաեւ նշվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասի համաձայն բողոքը թողնվում է առանց քննության այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել,

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 422 հոդվածի 3-րդ մասի համաձայն վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված, ապահովի օրենքի ճիշտ մեկնաբանությունը, նպաստի իրավունքի զարգացմանը: Իսկ 423 հոդվածի 2-րդ մասի պահանջով «որոշումը պետք է կայացվի հանուն Հայաստանի Հանրապետության»: 423 հոդվածի 6-րդ մասի պահանջով «որոշումը պետք է հրապարակվի դատական նիստում»: Չնայած օրենսգրքի նման պահանջներին, «վճռաբեկ դատարանը քրեական գործը չի ուսումնասիրել, դատական նիստ չի նշանակել, գործին մասնակցող անձանց չի կանչել, չի լսել իմ առարկություններն ու փաստարկները, որոշումը կայացրել է կաբինետային պայմաններում, որոշումը չի հրապարակել հանուն Հայաստանի Հանրապետության»:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ վիճարկվող 407 հոդվածի 4-րդ մասը վերաբերում է բողոքն առանց քննության թողնելու դեպքերից մեկին, երբ վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել: Բողոքն առանց քննության թողնելու նման հիմքի նախատեսումը կոչված է բացառելու վճռաբեկ դատարանի անհիմն ծանրաբեռնումը՝ կրկին անգամ անդրադառնալու այնպիսի հարցերի քննությանը, որոնց կապակցությամբ

արդեն իսկ արտահայտել է իր իրավական դիրքորոշումը: Նշված դրույթը չի հակասում ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին, քանի որ վճռաբեկ դատարանը բողոքն առանց քննության է թողնում այն դեպքում, երբ, նույնիսկ հաշվի առնելով դատական համակարգում վճռաբեկ դատարանի դերն ու նշանակությունը, անձն արդեն իրացրել է վճռաբեկ բողոք բերելու իր իրավունքը եւ բողոքում ներկայացված հարցերի առնչությամբ վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

Պատասխանող կողմը նաեւ գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի վիճարկվող դրույթները ոչ միայն չեն հակասում Սահմանադրությանը, այլ կոչված են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացմանը: Այս կետում նշված պայմանը, համաձայն որի՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե վերանայվող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը, ուղղակիորեն պայմանավորված է օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու՝ վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթի իրականացման անհրաժեշտությամբ եւ հնարավորություն է տալիս վճռաբեկ դատարանին հետետողական լինել ստորադաս դատարանների կողմից իր կայացրած որոշումների կատարման նկատմամբ, դրանով իսկ որոշակիորեն ապահովելով իրավական կանխատեսելիության եւ անձի իրավունքների պաշտպանության սկզբունքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշվում է, որ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե առկա են նոր երեւան եկած հանգամանքներ: Ըստ պատասխանող կողմի՝ նոր երեւան եկած հանգամանքների հետեւանքով գործերի նորոգումը դատավճռի օրինականության եւ հիմնավորվածության ստուգման, դատական սխալների ուղղման ու քրեական գործով ճշմարտության բացահայտմանն ուղղված կարեւոր ընթացակարգ է: Նոր երեւան եկած հանգամանքներով գործի նորոգման ընթացակարգի նախատեսումը ոչ միայն չի կարող հակասել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքին, այլ, ընդհակառակն, նշված իրավունքի իրացման լրացուցիչ միջոց է այն անձանց համար, ում օրինական շահերը շոշափող դատավճռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք կասկածի տակ են դնում կայացված դատավճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

5. Սույն գործով վիճարկվող օրենսգրքի նորմերը ներառված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ բաժնում: Բաժինը վերնագրված է՝ «Վարույթը վճռաբեկ դատարանում»: Դրանում նախատեսված են

վճռաբեկության կարգով դատավճիռների ու որոշումների վերանայման դեպքերը, նշված է վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, սահմանված են վճռաբեկ բողոք բերելու հիմքերը, վճռաբեկ բողոքի բովանդակությունը եւ մնացած այն բոլոր հարցերը, որոնք կազմում են վճռաբեկ դատարանի վարույթի բովանդակությունը: Նշված բաժնում տեղ գտած նորմերը եւ դրույթները փոխկապակցված են եւ լրացնում են միմյանց: ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի հետ կապված առանձին հոդվածների սահմանադրականությունը գնահատելու վերաբերյալ արտահայտել է իր իրավական դիրքորոշումները 11.04.2007թ. ՍԳՈ-691 որոշման մեջ:

6. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի՝ վիճարկվող 4-րդ մասում տեղ գտած դրույթը, համաձայն որի՝ բողոքը թողնվում է առանց քննության, եթե վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել, իրավագոր պահանջ է, քանզի բողոքն առանց քննության թողնելու նման հիմքի նախատեսումը կոչված է բացառելու կրկին անդրադառնալ այնպիսի հարցերի քննությանը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, երբ ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասում օգտագործվող՝ «բողոքում նշված հիմքով» եւ «նույն գործով» ձեւակերպումները ենթադրում են, որ նույնաբնույթ է համարվում կրկին ներկայացված այն բողոքը, որում նույն դիմողը միեւնույն առարկայի վերաբերյալ նույն պատճառաբանություններով ներկայացված բողոքի հիման վրա ձգտում է հասնել նպաստավոր որոշման:

Միջազգային իրավունքում հայտնի սկզբունքը՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (res judicata), ամրագրված է ինչպես միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ պետությունների՝ քրեական եւ քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը որպես իրավական որոշակիության արդյունք ենթակա է հարգանքի: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ոչ միայն 407 հոդվածի 4-րդ մասում, այլ նաեւ այլ բնույթի իրավահարաբերություններին առնչվող հոդվածներում նախատեսված է իրավունքի սուբյեկտի բողոքը կամ միջնորդությունն առանց քննության թողնելու իրավունքը (102 հոդվ. 2-րդ մաս, 103 հոդվ. 6-րդ մաս, 155 հոդվ. 3-րդ մաս, 381 հոդվ. 2-րդ մաս, 375.4 հոդվ. եւ այլն):

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասում վճռաբեկ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու հիմքի նախատեսումը չի հակասում ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին, քանի որ վճռաբեկ դատարանը բողոքն առանց քննության պետք է թողնի այն դեպքում, երբ արդեն իրացվել է վճռաբեկ բողոք բերելու անձի իրավունքը, եւ բողոքում ներկայացված հարցերի առնչությամբ վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշվում է, որ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝ «վերանայվող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը»: Այս դրույթը վճռաբեկ դատարանի կողմից օրենքների միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի իրականացման գործուն միջոցներից է: Այն հնարավորություն է տալիս վճռաբեկ դատարանին հետետողական լինել ստորադաս դատարանների կողմից իր կայացրած որոշումների կատարման նկատմամբ: Վճռաբեկ դատարանի նշված լիազորությունը կոչված է նաեւ որոշակիորեն ապահովելու արդարադատության ոլորտում իրավական կանխատեսելիության եւ անձի իրավունքների պաշտպանության սկզբունքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշվում է, որ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե առկա են նոր երեւան եկած հանգամանքներ: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408 հոդվածի՝ նոր երեւան եկած հանգամանքների հետեւանքով գործերի նորոգման խնդիր սովորաբար առաջանում է, եթե՝

- օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ որոշմամբ հաստատված է վկայի, տուժողի ցուցմունքների, թարգմանչի կատարած թարգմանության ակնհայտ սխալ կամ փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելը, ինչպես նաեւ իրեղեն ապացույցների, քննչական ու դատական գործողությունների արձանագրությունների եւ այլ փաստաթղթերի կեղծված լինելը, որոնք հանգեցրել են չհիմնավորված կամ անօրինական դատավճիռ կայացնելուն.

- օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ որոշմամբ հաստատված են դատավորների հանցավոր գործողությունները, որոնք նրանք թույլ են տվել տվյալ գործը քննելիս.

- դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ որոշմամբ հաստատված են գործի քննությունը կատարող անձանց այնպիսի հանցավոր գործողություններ, որոնք հանգեցրել են դատարանի չհիմնավոր-

ված եւ անօրինական դատավճիռ կամ գործը կարճելու վերաբերյալ որոշում կայացնելուն.

- ի հայտ են եկել դատավճիռ կամ որոշում կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչեւ այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը, կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաեւ ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել է:

Նոր երեսան եկած հանգամանքների ցանկն սպառիչ չէ: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը թույլ է տալիս նոր ի հայտ եկած հանգամանքների հիմքով նորոգել գործը նաեւ այլ դեպքերում ( հոդվ. 408, մաս 1-ին, կետ 4):

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական դատավարության օրենսգրքի 406, 407 եւ 408 հոդվածների համատեքստում նոր ի հայտ եկած հանգամանքների հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին դրույթը լուրջ երաշխիք է դատարանի դատավճռի օրինականությունը եւ հիմնավորվածությունն ստուգելու, դատական սխալն ուղղելու եւ քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասի եւ 414.2. հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ կետերի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**20 հուլիսի 2007թվականի  
ՍԳՈ-709**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԳԵՎՈՐԳ ԳԶՐԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 311 ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ԿԵՏԻ, 414.2. ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԳ ԿԵՏԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**24 հուլիսի 2007թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ Ն. Բաղդասարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գեորգ Գզրարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի, 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Գզրարյանի՝ 26.01.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող Գ. Գզարյանի, նրա ներկայացուցիչ՝ փաստաբան Ն. Բաղդասարյանի եւ պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հետազոտելով գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998թ. սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածը վերնագրված է. «Քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելը»: Նշված հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ դատարանը գործն ուղարկում է լրացուցիչ նախաքննության՝ «... 2) մեղադրողի միջնորդությամբ՝ երբ առկա են մեղադրանքը ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը 2006թ. հուլիսի 7-ին լրացվել է 414.2. հոդվածով, որը վերնագրված է. «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը»: Ըստ այդ հոդվածի՝ «Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝ 1) վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ... 3) ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետեւանքներ...»:

2. Քաղ. Գ. Գզարյանի բողոքի էությունը կայանում է նրանում, որ Գեղարքունիքի մարզի դատախազությունն իր նկատմամբ ՀՀ քր. օր-ի 179 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցված քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարան: Նշված դատարանը 13.06.2006թ., ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր.-ի 311 հոդվածի 2-րդ կետով, բավարարել է մեղադրողի միջնորդությունը եւ գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

26.07.2006թ. ՀՀ քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանը, քննության առնելով պաշտպանի վերաքննիչ բողոքը, որոշում է կայացրել՝ Գ. Ֆ. Գզարյանի վերաբերյալ քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքն առանց բավարարման թողնելու մասին՝ հետեւյալ պատճառաբանությամբ. «Զն-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նության առնելով պաշտպանի վերաքննիչ բողոքը եւ հիմնավորումները, մեղադրողի առարկությունը եւ միջնորդությունը գործը լրացուցիչ քննության վերադարձնելու մասին, ուսումնասիրելով գործի նյութերը եւ կայացված որոշման պատճառաբանությունները, վերաքննիչ դատարանը եկավ հետետության, որ գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին մեղադրողի միջնորդությունը եւ դատարանի կայացրած որոշումը հիմնավորված են եւ պատճառաբանված... հետեւաբար պաշտպանի բերած վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց բավարարման»:

20.09.2006թ. վճռաբեկ դատարանը, քննության առնելով պաշտպանի վճռաբեկ բողոքը, որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին՝ պատճառաբանելով հետեւյալը. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված բողոքում չկան հիմքեր եզրահանգելու, որ ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը կարող է առաջացնել ծանր հետեւանք, եւ որ վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Հետեւաբար, բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերով նախատեսված հիմքերը բացակայում են»:

3. Ըստ դիմողի՝ իր նկատմամբ կիրառված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 2-րդ մասին, 19 հոդվածի 1-ին մասին եւ 20 հոդվածի 3-րդ մասին, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 2-րդ մասին, 19 հոդվածի 1-ին մասին եւ 21 հոդվածին:

Դիմողը գտնում է, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, իսկ ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Նույն պահանջն է նախատեսված նաեւ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին մասում, ինչպես նա-

եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում:

Ըստ դիմողի՝ ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասում ամրագրված մրցակցության սկզբունքը նշանակում է, որ քրեական հետապնդումը, պաշտպանությունը եւ գործի լուծումը տարանջատված են, դրանք իրականացնում են տարբեր մարմիններ եւ անձինք: Դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում: Մրցակցության սկզբունքը բոլոր դեպքերում ենթադրում է, որ անձի հանցանքը հիմնավորելու համար անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելը եւ դատարանում մեղադրանքը պաշտպանելը հանդիսանում են մեղադրանքի կողմի գործառույթներ: Հետեւաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի հիմքով քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով եւ նախաքննության մարմնին լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու հանձնարարություն տալով՝ դատարանն իրականացնում է մեղադրանքի կողմի գործառույթներ, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Քաղ. Գ. Գգրարյանի կարծիքով, դատարանը քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ քրեական հետապնդման մարմնին հնարավորություն է ընձեռում երկարացնելու նախաքննության եւ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի ժամկետները: Բացի դրանից, ըստ վերաքննիչ դատարանի որոշման՝ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետն իրավունք է վերապահում դատարանին քրեական գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության՝ երբ առկա են ամբաստանյալի նկատմամբ առաջադրված մեղադրանքն ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր, քանի որ մեկ այլ անձի գործողություններում նույնպես կարող են առկա լինել հանցագործության հատկանիշներ, դրանով կասկածանքի տակ է դրվում նաեւ դատի չտրված անձի անմեղության հարցը, որի հետեւանքով խախտվում է ՀՀ Սահմանադրության 21 հոդվածով ամրագրված նաեւ այդ անձի անմեղության կանխավարկածի իրավունքը:

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Գլխավոր դատախազի, քաղաքացի Տ. Սահակյանի եւ ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության դիմումների հիման վրա՝ ՀՀ քր.դատ.օր.-ի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. ապրիլի 11-ի ՍԳՈ-691 որոշումը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Հաշվի առնելով վերոգրյալը եւ դեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 43 հոդվածի 1-ին եւ 4-րդ կետերով, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քր.դատ.օր.-ի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերով գործի վարույթը պետք է կարճել:

5. Պատասխանողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելը դատարանը կատարում է միայն եւ բացառապես մեղադրանքի կողմի միջնորդության հիման վրա: Բնականաբար, այստեղ խոսքը չի կարող վերաբերել դատարանի նախաձեռնությամբ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելուն: Ընդ որում, եթե մեղադրողը միջնորդում է մեղադրանքն ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքերով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու վերաբերյալ, ապա այդ միջնորդությունն ինքնին դատարանի համար չի կարող պարտադիր լինել: Ցանկացած միջնորդություն կողմի կամ դիմողի խնդրանք է դատարանին, որը քննության է առնվում եւ լուծվում պարտադիր կարգով (ՀՀ քր.դատ.օր.-ի 6 եւ 102 հոդվածներ):

Պատասխանողի կարծիքով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23 հոդվածի 4-րդ մասին համապատասխան դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով, այդ թվում քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին դատախազի միջնորդությամբ, եւ իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում եւ արտահայտում է միայն իրավունքի շահերը»: Այդ առումով դատարանը դատախազի միջնորդությամբ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ժամանակ մեղադրանքի գործառույթ չի կարող իրականացնել:

Պատասխանողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի չի նախատեսում լրացուցիչ նախաքննության ուղարկելու այնպիսի հիմք, ինչպիսին է նախաքննության բացերը լրացնելը: Այս պարագայում որեւէ հիմք չկա պնդելու, որ լրացուցիչ նախաքննության ինստիտուտը հակասում է մրցակցային դատավարության այն մոդելին, որը որդեգրել է Հայաստանի Հանրապետությունը:

Պատասխանողի կարծիքով՝ իր կողմից մատնանշված հիմքերից պարզ է դառնում, որ դատարանը խնդրո առարկա գործով իրականացրել է ոչ թե մեղադրանքի կողմի գործառույթ, ինչպես նշել է դիմողը, այլ, դեկավարվե-

լով օրենքով իրեն վերապահված իրավունքով, հարգել է մեղադրող կողմի միջնորդությունը եւ կայացրել որոշում քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին: Նշված պատճառաբանությամբ էլ պատասխանողը գտնում է, որ դիմող կողմի բերած հիմնավորումները եւ եզրահանգումը բավարար հիմք չեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետը ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 2-րդ մասին, 19 հոդվածի 1-ին մասին եւ 20 հոդվածի 3-րդ մասին հակասող ճանաչելու համար:

6. Ինչպես վերը նշվեց, դիմողը վիճարկում է ՀՀ քր.դատ.օր.-ի 311 հոդվածի 2-րդ կետի սահմանադրականությունը: Մինչդեռ քրեական գործը դատարանի կողմից լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը կարգավորվում է ոչ միայն վիճարկվող հոդվածի 2-րդ կետով, այլեւ ամբողջ հոդվածով, ինչպես նաեւ ՀՀ քր.դատ.օր.-ի 292 հոդվածի 5-րդ կետով, 297 հոդվածով, 363 հոդվածի 2-րդ մասով, 394 հոդվածի 5-րդ մասով, 398 հոդվածի 6-րդ մասով, 419 հոդվածի 2-րդ կետով, 421 հոդվածի 3-րդ մասով: Ուստի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքով, սահմանադրական դատարանը պարտավոր է պարզել նաեւ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի վերոհիշյալ դրույթների սահմանադրականությունը:

ՀՀ քր.դատ.օր.-ը դատարանի կողմից քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու նորմեր է նախատեսում սկսած առաջին ատյանի դատարանում գործը դատական քննության նախապատրաստելու փուլից մինչեւ վերաքննիչ եւ վճռաբեկ վարույթները: ՀՀ քր.դատ.օր.-ի 297 հոդվածը սահմանում է, որ գործը դատական քննության նախապատրաստելիս անհրաժեշտ դատավարական գործողություններ կատարելու համար քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին որոշում դատավորը կայացնում է այն դեպքում, երբ հետաքննության եւ նախաքննության մարմինների կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք չեն կարող վերացվել դատական քննության ընթացքում: Նույն հիմքով քրեական գործը դատական քննության փուլից լրացուցիչ նախաքննության ուղարկելու դրույթ է պարունակում ՀՀ քր.դատ.օր.-ի 311 հոդվածի 1-ին կետը:

Այսպիսով, ՀՀ քր.դատ.օր.-ը դատաքննության որևէ փուլում դատական տարբեր ատյանների դատարանների կողմից քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու երկու հիմք է նախատեսում: Դրանք են.

- երբ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք չեն կարող վերացվել դատաքննության ընթացքում,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- մեղադրողի միջնորդությամբ՝ երբ առկա են մեղադրանքը ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր:

Առաջին դեպքում՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների եւ այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա» (ՀՀ քր.դատ.օր.-ի 398 հոդված), եւ որոնք չեն կարող վերացվել դատաքննության ընթացքում:

Նշված հիմքով դատարանը քրեական գործը վերադարձնում է լրացուցիչ նախաքննության ինչպես կողմերի (կողմի) միջնորդությամբ, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ: Այսինքն՝ դատարանը հայտնաբերելով, որ գործով ապացույցները ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի էական խախտումներով, փոխանակ ՀՀ քր.դատ.օր.-ի 105 հոդվածի հիմքով, որը համահունչ է ՀՀ Սահմանադրության 22 հոդվածին, որպես ապացույց չօգտագործել դրանք եւ մյուս ապացույցների գնահատմամբ լուծել գործի ելքը, գործը վերադարձնում է լրացուցիչ նախաքննության: Դրանով իսկ դատարանը նախաքննության մարմնին հնարավորություն է տալիս «վերակենդանացնել» ձախողված մեղադրանքը:

Մյուս դեպքում, երբ առկա են մեղադրանքն ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր, դատարանը գործը վերադարձնում է լրացուցիչ նախաքննության՝ մեղադրողի միջնորդությամբ: Ավելի ծանր մեղադրանք ասելով՝ պետք է հասկանալ, որ առաջադրվելիք մեղադրանքի համար ավելի խիստ պատիժ է նախատեսվում, քան առաջադրվածի համար: Փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքը ենթադրում է քրեական օրենքի նույն դրույթով մեղադրանքը, սակայն բովանդակային նոր ձեւակերպմամբ (նոր փաստական հանգամանքները հերքելու ընթացակարգային հնարավորություն պետք է տրվի մեղադրյալին, այլապես կդիտվի նրա պաշտպանության իրավունքի խախտում):

Նման որոշման կայացման հնարավորությունը պայմանավորելով միայն մեղադրողի միջնորդության առկայությամբ՝ օրենսդիրը փորձ է արել դատարանին ձեռքբազատել մեղադրական թեքումից, սակայն, այնուամենայնիվ, խախտվել է քրեական դատավարության կարեւոր սկզբունքը, ըստ որի՝ դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում եւ արտահայտում է միայն իրավունքի շահերը (ՀՀ քր. դատ.

օր.-ի 23 հոդված), սկզբունք, որը նպատակաուղղված է ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության եւ անկողմնակալության ապահովմանը: Ընդ որում, դատավճիռ կայացնելիս դատարանի լուծման ենթակա հարցերը հստակ սահմանված են ՀՀ քր.դատ.օր.-ի 360 հոդվածում:

7. ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում եւ անկողմնակալ դատարանի կողմից: ՀՀ քր.դատ.օր.-ով նախատեսված կարգով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դատարանը դուրս է գալիս դատավարությունում անկողմնակալ իր դերի շրջանակներից եւ ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ: Դատարանը նաեւ կողմերի միջեւ հավասարության մեծարը խախտում է ի շահ մեղադրանքի կողմի, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ անձի դատական եւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի նման ձեռով կիրառումը պարունակում է նաեւ արդար դատաքննության տարրերից մեկի՝ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վտանգ:

Քրեական գործի լուծման ձգձգումն ընդհանրապես բացասաբար է անդրադառնում մեղադրյալի, ինչպես նաեւ տուժողի վրա: Սակայն մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից ավելի վտանգավոր է գործի քննության ողջամիտ ժամկետի խախտումն այն դեպքում, երբ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը: ՀՀ քր.դատ.օր.-ի 138 հոդվածը սահմանում է, որ քրեական գործով մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող գերազանցել մեկ տարին: Նույն հոդվածն ամրագրում է նաեւ, որ քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան: Այսինքն, գործը դատարանում գտնվելու ժամանակամիջոցում անձի՝ կալանքի տակ գտնվելու ժամկետը չի հաշվվում մինչդատական վարույթում օրենքով սահմանված առավելագույն ժամկետի՝ մեկ տարվա մեջ: Ստացվում է, որ դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու հետեւանքով անձն անազատության մեջ կարող է պահվել մեկ տարուց շատ ավելի երկար ժամանակ:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

8. ՀՀ Սահմանադրության 21 հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի կարեւոր բաղադրատարրերից է չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջը: Նշված պահանջի կատարումը եւ քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելը գործնականում անհամատեղելի են միմյանց հետ: Քրեական գործը նման կարգով լրացուցիչ նախաքննության ուղարկելու դեպքում ըստ էության շրջանցվում է նշված հոդվածում ամրագրված չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու սահմանադրական պահանջը:

9. Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտն ավելի շատ բնորոշ է եղել խորհրդային իրավակարգին, եւ տասնամյակներ շարունակ նման ձեւով այն կիրառած երկրներում առկա է դրանից հրաժարվելու միտում: Նշված կարգի մերժման անհրաժեշտությունը հիմնականում բացատրվում է քրեական դատավարության այնպիսի կարեւորագույն սկզբունքների հետ անհամատեղելիությամբ, ինչպիսիք են դատարանի անկողմնակալությունը, դատավարության կողմերի հավասարությունն ու մրցակցությունը:

Օրինակ, Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը 1999 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ անդրադառնալով դատարանի կողմից քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու հարցին, հակասահմանադրական է ճանաչել այդ ինստիտուտի գոյությունը: 2002 թվականի հուլիսի 1-ից Ռուսաստանի Դաշնությունում գործող նոր քր.դատ.օր.-ն այլեւս չի նախատեսում դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելը: Նոր օրենսգրքի 237 հոդվածը պահպանում է գործը դատախազին վերադարձնելու ինստիտուտը, սակայն միայն գործը դատական քննության նախապատրաստելու փուլում՝ վերանայելու համար այն հանգամանքները, որոնք խոչընդոտում են գործով դատական քննությունն սկսելուն (օրինակ, մեղադրական եզրակացությունը չի ստորագրվել համապատասխան դատախազի կողմից): Ի դեպ, նման նորմ պարունակում է նաեւ ՀՀ քր.դատ.օր.-ի 296 հոդվածը, ըստ որի 1-ին մասի՝ «Գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշում դատավորը կայացնում է այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին»: Ընդ որում, նման որոշման մեջ նշվում է նաեւ այն ժամկետը, որի ընթացքում դատախազը պետք է վերացնի մեղադրական եզրակացության թերությունները: Եթե մեղադրյալը գտնվում է կալանքի տակ, նշված ժամկետը չպետք է գերազանցի 3, իսկ մնացած դեպքերում՝ 7 օրը:

10. Սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելն անհամատեղելի է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի այնպիսի տարրերի հետ, ինչպիսիք են դատաքննությունն անկողմնակալ դատարանի կողմից եւ այն հավասարության ու մրցակցության սկզբունքների հիման վրա իրականացնելու պահանջները: Չնայած նրան, որ դատաքննության հավասարության եւ մրցակցության սկզբունքները հստակ ամրագրված չեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից՝ 6-րդ հոդվածում նշված «արդարացի լսումներ» հասկացության մեկնաբանությունների արդյունքում ձեւավորվել է հստակ նախադեպ, համաձայն որի՝ լսումների արդարացիության տարրերից են դատավարության կողմերի հավասարությունը եւ մրցակցային դատավարությունը, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ: Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջը համարելով դատավարության մրցակցության եւ հավասարության սկզբունքներ, միաժամանակ հետեւողականորեն իր վճիռներում բացահայտել է այդ սկզբունքների բովանդակությունը, որոնց համաձայն՝ «կողմերի հավասարությունը» նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությանը չեն ստեղծի անբարենպաստ վիճակ:

11. Գործը դատարանից լրացուցիչ նախաքննության վերադարձնելու՝ գործող քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգն անհամատեղելի է նաեւ մեր երկրում սահմանադրական փոփոխությունների արդյունքում կատարվող դատաիրավական բարեփոխումների տրամաբանության հետ, բարեփոխումներ, որոնք ուղղված են դատարանի անկախության եւ անկողմնակալության ապահովմանը, մեղադրական թեքումից նրա վերջնական ձերբազատմանը: Մասնավորապես, «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքը ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 2007թ. փետրվարի 22-ին, որում քննության առարկա խնդրի առնչությամբ հայեցակարգային նոր մոտեցում է որդեգրվել: Այդ օրենքի 26 հոդվածի 4-րդ մասում ամրագրված է. «Եթե առաջին ատյանի դատարանում մեղադրողը գտնում է, որ մեղադրանքը ենթակա է մեղմացման կամ խստացման, քանի որ դատական քննության ժամանակ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չէին մինչդատական վարությամբ, դատախազն իրավունք ունի միջնորդություն ներկայացնելու դատարան՝ արարքը վերաորակելու

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նպատակով դատական նիստը հետաձգելու վերաբերյալ: Դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու եւ նոր մեղադրանք առաջադրելու համար...»: Փաստորեն, օրենքի այս նոր դրույթը բացառում է դատարանի կողմից գործը լրացուցիչ քննության ուղարկելու գործող կարգը, եւ այս տրամաբանությունը կարող է դրվել նաեւ ՀՀ քր.դատ.օր.-ի բարեփոխման հիմքում: Բոլոր դեպքերում, եթե գործն ընդունվել է դատարանի վարույթ, ապա այն պետք է հանգուցալուծվի դատական նիստում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60, 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի վերաբերյալ Գ. Գզարյանի դիմումի մասով գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի դրույթները ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՀՀ Սահմանադրության 19 հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 1-ին կետի, ինչպես նաեւ 292 հոդվածի 5-րդ կետի, 297 հոդվածի, 363 հոդվածի 2-րդ մասի, 394 հոդվածի 5-րդ մասի, 398 հոդվածի 6-րդ մասի, 421 հոդվածի 3-րդ մասի դրույթները եւ 419 հոդվածի 2-րդ կետի լրացուցիչ նախաքննություն նախատեսող դրույթը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**24 հուլիսի 2007 թվականի  
ՍԳՈ-710**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՂԵՏԻ  
ՄԵՂՄԱՅՄԱՆ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՅԱԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ  
ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՐԱՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՏԱՄՊԵՐԵԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**7 սեպտեմբերի 2007թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Չ. Դուկասյանի, Ռ. Պապայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 , 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1998 թվականի հունիսի 18-ին ստորագրված՝ «Աղետի մեղմացման եւ օգնության ցուցաբերման նպատակով հեռահաղորդակցական ռեսուրսների տրամադրման մասին» Տամպերեի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան՝ մուտքագրված 23 հուլիսի 2007թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի՝ Հայաստա-

89 ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(46)2008

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարար Ա. Մանուկյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Տամպերեի կոնվենցիան ստորագրվել է 1998թ. հունիսի 18-ին: Կոնվենցիայի նպատակն աղետի մեղմացման եւ օգնության ցուցաբերման համար հուսալի եւ արագ հասանելի հեռահաղորդակցական ռեսուրսներ ապահովելն է եւ աղետների հետեւանքների մեղմացման համար միջազգային համագործակցությանը նպաստելը:

Կոնվենցիայով նախատեսված են աղետի մեղմացման եւ օգնության ցուցաբերման համար հեռահաղորդակցական օժանդակություն տրամադրելու եւ այն դադարեցնելու կարգն ու պայմանները, հեռահաղորդակցական օժանդակություն տրամադրելու գործին մասնակցող անձանց եւ կազմակերպություններին կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից տրամադրվող արտոնությունները, անձեռնմխելիությունները եւ առավելությունները, աղետի մեղմացման եւ օգնության ցուցաբերման նպատակով սահմանված ծախսերի եւ տուրքերի վճարման կամ փոխհատուցման կարգն ու պայմանները, կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերի կարգավորման կարգը եւ այլն:

2. Կոնվենցիայի դրույթների համաձայն Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

- աղետի մեղմացման եւ օգնության տրամադրման նպատակով հեռահաղորդակցական ռեսուրսների օգտագործմանը նպաստելու համար համագործակցել մյուս մասնակից պետությունների, ոչ պետական մարմինների եւ միջկառավարական կազմակերպությունների հետ,

- աղետի կանխարգելման, վերահսկման եւ մեղմացման նպատակով համագործակցել մասնակից պետությունների հետ՝ կատարելագործելու համար կառավարական կազմակերպությունների, ոչ պետական մարմինների եւ միջկառավարական կազմակերպությունների ունակությունները՝ սարքավորումների հետ վարվելաձեւի ու շահագործման համար վերապատրաստումների մեխանիզմներ եւ արտակարգ իրավիճակներում օգտագործվող հեռահաղորդակցական տեխնիկայի մշակման, նախագծման եւ պատրաստման համար ցուցումներ սահմանելու գործում,

- որպես հայցող մասնակից պետություն՝ ՀՀ ներպետական օրենսդրությանը համապատասխան, հեռահաղորդակցական օժանդակություն տրամադրելու նպատակով կոնվենցիայի համաձայն գործող եւ ՀՀ-ին ներկայացված եւ վերջինիս կողմից ընդունված՝ ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց եւ ՀՀ տարածքում կենտրոնակայան կամ մշտական գրանցում

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

չունեցող կազմակերպություններին իրենց գործառույթների պատշաճ իրականացման համար շնորհել անհրաժեշտ արտոնություններ, անձեռնմխելիություններ եւ առավելություններ,

- որպես հայցող մասնակից պետություն՝ իր հնարավորությունների սահմաններում տրամադրել տեղական սարքավորումներ եւ ծառայություններ հեռահաղորդակցական օժանդակության պատշաճ եւ արդյունավետ մատուցման համար, այդ թվում՝ երաշխավորել, որ կոնվենցիայի համաձայն իր տարածք ներկրված հեռահաղորդակցական տեխնիկական անհապաղ կլիցենզավորվի կամ կազատվի լիցենզավորումից՝ համաձայն ներքին օրենքների եւ կանոնակարգերի,

- երաշխավորել կոնվենցիայի համաձայն ՀՀ տարածք մուտք գործած անձնակազմի եւ ներկրված տեխնիկայի ու նյութերի պաշտպանությունը,

- սպահովել, որպեսզի կոնվենցիայի համաձայն տրամադրված տեխնիկայի ու նյութերի նկատմամբ սեփականության իրավունքը Կոնվենցիայով նախատեսված օգտագործման դեպքում մնա անփոփոխ,

- որպես հայցող մասնակից պետություն երաշխավորել նշված տեխնիկայի, նյութերի եւ գույքի արագ վերադարձը համապատասխան օժանդակող մասնակից պետությանը,

- որպես հայցող մասնակից պետություն՝ Կոնվենցիայի համաձայն տրամադրված հեռահաղորդակցական ռեսուրսները չտեղակայել կամ չօգտագործել այնպիսի նպատակներով, որոնք ուղղակի կերպով չեն առնչվում աղետների կանխատեսմանը, նախապատրաստմանը, արձագանքմանը, վերահսկմանը, դրանց հետեւանքների մեղմացմանը կամ օգնության ցուցաբերմանն աղետների ժամանակ եւ դրանցից հետո,

- որպես հեռահաղորդակցական օժանդակություն տրամադրող կամ ստացող մասնակից պետություն՝ կոնվենցիայի համաձայն օժանդակության դադարեցումից հետո շարունակել ենթարկվել կոնվենցիայի պայմաններին,

- հնարավորության դեպքում եւ ՀՀ ներպետական օրենսդրությանը համապատասխան՝ նվազեցնել կամ վերացնել աղետի մեղմացման եւ օգնության ցուցաբերման նպատակով հեռահաղորդակցական միջոցների օգտագործման, այդ թվում՝ հեռահաղորդակցական աջակցության տրամադրման հետ կապված՝ կոնվենցիայում սահմանված կանոնակարգային խոչընդոտները,

- ցանկացած այլ մասնակից պետության խնդրանքով եւ ՀՀ ներպետական օրենսդրությամբ ընձեռված հնարավորությունների շրջանակներում դյուրացնել աղետի հետեւանքների մեղմացման եւ օգնության ցուցաբերման նպատակով ՀՀ տարածք, այդ տարածքից դուրս կամ նրա միջով՝ հեռահաղորդակցական ռեսուրսների օգտագործման մեջ ներգրավված

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

անձնակազմի եւ համապատասխան տեխնիկայի, նյութերի ու տեղեկատվության փոխադրումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 1998 թվականի հունիսի 18-ին ստորագրված՝ «Աղետի մեղմացման եւ օգնության ցուցաբերման նպատակով հեռահաղորդակցական ռեսուրսների տրամադրման մասին» Տամպերեի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**7 սեպտեմբերի 2007 թվականի  
ՍԳՈ-711**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ԿԱՀԻՐԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱՔԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԳԱՐՁ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**7 սեպտեմբերի 2007թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ռ. Պապայանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի ապրիլի 15-ին Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջեւ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 2007 թվականի հուլիսի 18-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի՝ ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանի գրավոր բացատրությունները, հետա-

93 ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(46)2008

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

գոտելով պայմանագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Պայմանագիրն ստորագրվել է 2007թ. ապրիլի 15-ին Կահիրեում՝ Հայաստանի Հանրապետության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջեւ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու իրավական հիմքն ամրապնդելու նպատակով:

2. Կողմերը պարտավորվում են տրամադրել միմյանց իրավական օգնություն, եթե արարքը, որի համար հարցում է ներկայացվել, քրեորեն պատժելի է երկու Կողմերի օրենքներով: Կողմի հայեցողությանն է թողնված իրավական օգնության տրամադրումն այն դեպքերում, երբ արարքը, որի առնչությամբ հարցում է ստացվել, հայցվող կողմի օրենսդրությամբ քրեորեն պատժելի չէ: Պայմանագիրը տարածվում է հանցագործությունների կատարման առնչությամբ հետաքննությունների, քննությունների եւ դատական ընթացակարգերի վրա՝ համաձայն Կողմերի քրեական օրենսդրությունների:

3. Պայմանագրում նշված են իրավական օգնության շրջանակը, պայմանագրի նպատակների իրագործման համար պատասխանատու կենտրոնական մարմինները (Հայկական կողմի համար գլխավոր դատախազությունը՝ եթե գործերը գտնվում են նախաքննության փուլում, եւ արդարադատության նախարարությունը՝ եթե գործերը դատական վարույթում են կամ վճիռների կատարման փուլում, իսկ Եգիպտական կողմի համար՝ արդարադատության նախարարությունը), նկարագրված են հարցման ձեւն ու բովանդակությունը, հարցումների մերժման կամ հետաձգման հիմքերը:

4. Փոխադարձ կարգով Հայկական կողմը նաեւ պարտավորվում է.

- բացառել երկու Կողմերի մասնակցությամբ գործող միջազգային եւ տարածաշրջանային կոնվենցիաների համաձայն ահաբեկչության հանցագործությունների հարցերով իրավական օգնության մերժումը,

- գաղտնի պահել իրավական օգնության համար հարցումը եւ դրա բովանդակությունը, լրացուցիչ փաստաթղթերը եւ հարցման համաձայն կատարված որեւէ գործողություն,

- առանց հայցվող կողմի թույլտվության չօգտագործել համապատասխան տեղեկատվությունը կամ վկայություններն այլ նպատակով, հարցումները կատարել հայցվող կողմի օրենքներին եւ սույն պայմանագրի դրույթներին համապատասխան,

- իրավական օգնությունը տրամադրել ըստ հարցման մեջ նշված ձեւի եւ հատուկ ընթացակարգերի՝ այնքանով, որքանով դրանք չեն հակասում ՀՀ օրենքներին,

- իր ներքին օրենքներին համապատասխան ջանքեր գործադրել՝ պար-

զելու համար հարցման մեջ նշված անձանց եւ իրերի գտնվելու վայրն ու ինքնությունը:

5. Պայմանագրով երաշխավորվում է վկայություն տալու, փորձաքննություն անցկացնելու կամ այլ ընթացակարգային գործողություններ կատարելու համար հանդես եկող անձի անձեռնմխելիությունը՝ անկախ նրա քաղաքացիությունից: Եթե այդ անձը կալանավորված է կամ պատիժ է կրում ազատագրկման ձեռով, հայցվող կողմի համաձայնությամբ նա կարող է ժամանակավորապես փոխանցվել հայցող կողմին, ընդ որում, ոչ ավելի, քան 90 օր ժամկետով: Անձի փոխանցումը մերժվում է, եթե կալանավորված կամ պատիժ կրող անձը չի տալիս իր գրավոր համաձայնությունը, կամ եթե այդ անձի մասնակցությունն անհրաժեշտ է հայցվող կողմի տարածքում դատական ընթացակարգերում:

Պայմանագրի 6-րդ հոդվածը սահմանում է իրավական օգնություն տրամադրելու համար հարցումների մերժման կամ հետաձգման հիմքերն ու կարգը:

Կողմերը նաեւ պարտավորվում են համագործակցել հանցագործության գործիքների եւ եկամուտների բացահայտման ոլորտում՝ հիմք ընդունելով սույն պայմանագրի եւ ՄԱԿ-ի՝ 2000թ. Անդրազգային կազմակերպված հանցագործության դեմ կոնվենցիայի դրույթները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2007 թվականի ապրիլի 15-ին Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջեւ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

7 սեպտեմբերի 2007 թվականի  
ՍԳՈ-712



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ԿԱՀԻՐԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱՐԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ՄԱՍԻՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**7 սեպտեմբերի 2007թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Ռ. Պապայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի ապրիլի 15-ին Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջեւ հանձնման մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 2007թ. հուլիսի 18-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի՝ ՀՀ արդարադա-

տության նախարար Գ. Դանիելյանի գրավոր բացատրությունները, հետագոտելով պայմանագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ջ Ե Ց**.

1. Պայմանագիրն ստորագրվել է 2007թ. ապրիլի 15-ին՝ Կահիրեում: Պայմանագրի նպատակը հանցագործության դեմ պայքարում Կողմերի միջեւ համագործակցությունն առավել արդյունավետ կազմակերպելն է:

Պայմանագրում նախատեսված են հանձնման հիմքերը, հանձնումը մերժելու պարտադիր եւ կամընտրային հիմքերը, հանձնման հարցումը եւ դրանց կից փաստաթղթերը ներկայացնելու կարգը, հանձնման ենթակա անձի ժամանակավոր կալանքի, նրան երրորդ պետությանը վերահանձնելու պայմանները, հետաձգված կամ պայմանական հանձնման կարգը, պայմանագրի դրույթների կատարման նպատակների համար Կողմերի հաղորդակցման կենտրոնական մարմինների շրջանակը, պայմանագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերի լուծման կարգը:

2. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

- պայմանագրի դրույթներին եւ ՀՀ օրենքներին համապատասխան Եզիպտոսի Արաբական Հանրապետության հարցման հիման վրա հանձնել ՀՀ տարածքում փնտրվող ցանկացած անձի՝ հանձնման ենթակա հանցագործություն կատարելու համար նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու կամ այդպիսի հանցագործության կապակցությամբ կայացրած դատավճիռն ի կատար ածելու նպատակով,

- հանձնված անձի նկատմամբ չհարուցել վարույթ, նրան չձերբակալել կամ նրա անձնական ազատությունը ցանկացած այլ կերպ չսահմանափակել մինչեւ հանձնումը նրա կատարած հանցագործության համար, որն ուրիշ է, քան այն, որի համար նա հանձնվել է՝ բացառությամբ պայմանագրով նախատեսված որոշ դեպքերի,

- հանցագործության իրավական նկարագրությունը փոփոխվելու դեպքում, հանձնված անձի նկատմամբ վարույթ հարուցել կամ պատիժ սահմանել միայն այն դեպքում, եթե հանցագործությունն իր նոր նկարագրությամբ կարող է առաջացնել հանձնում պայմանագրի համաձայն եւ առնչվում է նույն փաստերին, որոնց հիման վրա հանձնումն իրականացվել է,

- մեկից ավելի պետությունների կողմից միեւնույն կամ տարբեր հանցագործությունների համար հանձնման վերաբերյալ հարցման միաժամանակ ներկայացման դեպքում, որպես հայցվող պետություն որոշումը կայացնել ազատորեն՝ նկատի ունենալով բոլոր հանգամանքները, հատկապես հանձնման ենթակա անձի քաղաքացիությունը, հետագայում փոխադարձ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

հանձնման հնարավորությունը, հարցումների ստացման ժամկետները, հանցագործությունների ծանրության աստիճանը եւ կատարման վայրը,

- հանձնման ենթակա անձի հանձնումը կամ ընդունումը կանխվելու դեպքում ապահովել, որպեսզի հանձնման ենթակա անձն ազատ արձակվի պայմանավորված օրվանից 30 օր հետո,

- ՀՀ օրենսդրությանը համապատասխան, առանց վնասելու երրորդ կողմի իրավունքները, առգրավել ու փոխանցել այն իրերը, որոնք կարող են պահանջվել որպես ապացույց այն հանցագործության առնչությամբ, որի համար հանձնման հարցում է արվել. այն իրերը, որոնք ձեռք են բերվել այն հանցագործության արդյունքում, որի համար հանձնման հարցում է արվել, եւ որոնք ձերբակալման ժամանակ գտնվել են հանձնման ենթակա անձի տնօրինության տակ կամ հայտնաբերվել են հետազայում, կամ որոնք առաջացել են հանցագործությունից ատացված եկամտի դիմաց,

- որպես հայցվող կողմ՝ կրել հանձնման հետ կապված ընթացակարգերի ծախսերը, իսկ որպես հայցող կողմ՝ հանձնման ենթակա անձի հանձնման հետ կապված տրանսպորտային տեղափոխման եւ տարանցման ծախսերը,

- պայմանագիրը կիրառել դրա ուժի մեջ մտնելուց հետո արված հարցումների նկատմամբ, եթե նույնիսկ համապատասխան արարքները կամ անգործությունը տեղի են ունեցել մինչեւ այդ օրը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2007 թվականի ապրիլի 15-ին Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջեւ հանձնման մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**7 սեպտեմբերի 2007 թվականի  
ՍԳՈ-713**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԽԱՐԻՍԽ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 17.12.1997Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ՝  
«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՄՆԱՎՈՐԵՑՄԱՆ (ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ)  
ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 13 ՀՈԳՎԱԾԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**11 սեպտեմբերի 2007թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42.1. հոդվածի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Խարիսխ գրուպ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել «Խարիսխ գրուպ» ՍՊԸ-ի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 08.06.2007թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի գրավոր բացատրությունները, հետազոտելով դիմումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

99 ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(46)2008

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. Դիմող՝ «Խարիսխ գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ա. Մարտիրոսյանի, վիճարկում է «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 5 հոդվածին:

2. «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ ԱԺ կողմից 17.12.1997 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 13.01.1998 թվականին, ուժի մեջ է մտել 10.02.1998 թվականից:

«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 13 հոդվածը փոփոխվել է ՀՀ ԱԺ կողմից 08.10.2002թ. ընդունված՝ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-423-Ն օրենքով: Դիմողի նկատմամբ տնտեսական դատարանի կողմից կիրառվել է եւ նրա կողմից վիճարկվում է վերոհիշյալ օրենքի 13 հոդվածը՝ 08.10.2002թ. խմբագրությամբ, որը սահմանում է մասնավորեցում իրականացնող պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները:

Իսկ ՀՀ Սահմանադրության 5 հոդվածը (2-րդ մաս) ամրագրում է, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

3. Դիմողը վիճարկելով հիշյալ օրենքի 13 հոդվածը՝ իր իրավունքների խախտման հիմնական պատճառ է համարում օրենքում մասնավորեցում իրականացնող պետական կառավարման լիազորված մարմնի՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, լիազորությունների սպառնիչ թվարկումը, ինչը, ըստ դիմողի, խոչընդոտում է Պետական գույքի կառավարման վարչությանը դիմողի հետ մտնելու հոդվածում չհիշատակված քաղաքացիաիրավական բնույթի հարաբերությունների մեջ:

4. Դիմողը վկայակոչում է ՀՀ քաղ. օր.-ի 128 եւ 129 հոդվածները՝ նշելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը (որպես ՀՀ անունից հանդես եկող եւ ՀՀ անունից մասնավորեցման պայմանագիր կնքող) իրավունք պետք է ունենա նաեւ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու պայմանագրում, ինչպես նաեւ լուծելու պայմանագիրը: Ըստ դիմողի՝ «Գնի նվազեցումն ըստ էության հանդիսանում է պայմանագրի փոփոխություն եւ լրացում...»:

5. Պատասխանող կողմը դիմողի կողմից վիճարկվող օրենքի վերաբերյալ նշում է. «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003թթ. ծրագրի

մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը, որը կիրառվել է հաշտության համաձայնագրում, ունեցել է գործողության հստակ ժամկետ՝ մինչև 2004 թվականի դեկտեմբերի 31-ը: Այսինքն՝ հաշտության համաձայնագրի ստորագրման պահին արդեն իսկ այդ դրույթը չի գործել, քանի որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 79 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտի գործողության ժամկետն անսահմանափակ է, եթե տվյալ իրավական ակտում կամ դրա գործողության մեջ դնելու մասին իրավական ակտում ուղղակի ժամկետ նախատեսված չէ»: Մինչդեռ օրենսդիրն այս դեպքում իրավական ակտի գործողության համար սահմանել է հստակ ժամկետ, որի ավարտից հետո այն չէր կարող գործադրվել:

Քանի որ Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կարող են կատարվել միայն օրենքների տեսքով՝ դրանք ընդունված մարմնի կողմից, հետևաբար, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն օրենքի գործողության ժամկետը երկարաձգելու համապատասխան իրավասություն չէր կարող ունենալ:

Պատասխանող կողմը համաձայն չէ դիմողի այն եզրահանգմանը, որ պայմանագրի գործողության դեպքում պայմանագրի կողմերը կարող են ցանկացած պահի փոփոխել, լրացնել կամ լուծել պայմանագիրը, այդ թվում՝ նվազեցնել պայմանագրով սահմանված գինը: Մասնավորապես, շեշտվում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437 հոդվածի 4-րդ կետով եւ 438 հոդվածի 1-ին կետով առկա են սահմանափակումներ, համաձայն որոնց՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր պայմաններին:

Պատասխանող կողմը վկայակոչելով նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 440 հոդվածի 2-րդ մասը՝ նշում է, որ պայմանագրի կնքումից հետո դրա գինը թույլատրվում է փոփոխել պայմանագրով կամ օրենքով նախատեսված դեպքերում եւ պայմաններով: Իսկ պետական գույքի սեփականաշնորհման մասին պայմանագրով դրա գինը փոփոխելու իրավունք կողմերին չի վերապահվել:

Ըստ պատասխանող կողմի՝ դիմող կողմի բերած հիմնավորումները եւ եզրահանգումները բավարար հիմք չեն «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածը ՀՀ Սահմանադրության 5 հոդվածին հակասող ճանաչելու համար:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանալով իշխանական լիազորություններով օժտված հանրային իրավունքի սուբյեկտ՝ այլ սուբյեկտներին համա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

հավասար իրավասություններով մասնակցում է մասնավոր իրավական հարաբերություններին: Պետությունը քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցում է անմիջականորեն, այսինքն՝ որպես մեկ միասնական ամբողջություն, բայց որպես այդպիսին (որպես պետական կառույցների ամբողջություն) այն ի վիճակի չէ անմիջական գործողություններով ձեռք բերել եւ իրականացնել քաղաքացիական իրավունքներ, ինչպես նաեւ ստեղծել եւ կատարել պարտականություններ: Նրա լիազորությամբ գործում են իրավաբանական անձ հանդիսացող կամ այդպիսիք չհանդիսացող կազմակերպությունները:

Իսկ այն դեպքերում, երբ պետական մարմինը հանդես է գալիս ՀՀ անունից, այդ մարմնի ներկայացմամբ իրավահարաբերություններին մասնակցում է Հայաստանի Հանրապետությունը, եւ իրավունքներ ու պարտականություններ են առաջանում ոչ թե տվյալ մարմնի համար, այլ պետության համար:

Փաստորեն, դիմողի այն պնդումը, որ Պետական գույքի կառավարման վարչությունը հանդես գալով ՀՀ անունից՝ ունի քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտների հետ համահավասար իրավունքներ եւ պարտականություններ, հիմնավոր է: Սա համահունչ է նաեւ ՀՀ Սահմանադրության 89 հոդվածի այն դրույթին, համաձայն որի՝ ՀՀ կառավարությունն է կառավարում պետական սեփականությունը: Սակայն դիմողը հաշվի չի առնում այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը որոշակի իմպերատիվ բնույթի սահմանափակումներ է նախատեսում քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ նաեւ պետական մարմինների համար:

Այսպես, ՀՀ քաղ. օր.-ի 438 հոդվածի համաձայն՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին: Քաղ. օր.-ի 440 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ. «1. Պայմանագրի կատարումը վճարվում է կողմերի համաձայնությամբ սահմանված գնով:

Օրենքով նախատեսված դեպքերում կիրառվում են լիազորված պետական մարմինների կողմից սահմանված կամ կարգավորված գները...»:

«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 24.1. հոդվածի համաձայն՝ պետական գույքի մասնավորեցման մասին որոշումն ընդունում է ՀՀ կառավարությունը, իսկ նույն օրենքի 12 հոդվածի համաձայն, ի թիվս այլոց, հաստատում է «փոքր» օբյեկտների տարածքի մեկ քառակուսի մետրի արժեքը, նրա հաշվարկման ուղղիչ գործակիցների նվազագույն եւ առավելագույն չափերը: Իսկ Պետական գույքի կառավարման վարչությանը գնային քաղաքականու-

թյան ոլորտում վերապահված է միայն «փոքր» օբյեկտների տարածքի արժեքի հաշվարկման ուղղիչ գործակիցների հաստատման լիազորությունը՝ ելնելով ՀՀ կառավարության հաստատած մեկ քառակուսի մետրի արժեքից եւ այդ գործակիցների նվազագույն եւ առավելագույն չափերից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս ոլորտում պայմանագրի գնի որոշման հարցը կարգավորվում է ՀՀ քաղ. օր.-ի 440 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ սահմանված կանոններով:

Իսկ պայմանագրի կնքումից հետո դրա գինը թույլատրվում է փոփոխել պայմանագրով կամ օրենքով նախատեսված դեպքերում եւ պայմաններով (համաձայն քաղ. օր.-ի 440 հոդվածի 2-րդ մասի), եւ եթե ՀՀ քաղ. օր.-ով կամ որեւէ այլ իրավական ակտով կողմերին հնարավորություն ընձեռվեր փոփոխել կամ նվազեցնել պայմանագրի գինը, ապա կողմերն այդ հնարավորությունից կարող էին օգտվել մինչեւ դատական ակտի ընդունումը՝ հաշվի առնելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի «Հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության հիման վրա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի վերանայման վարույթը» վերտառությամբ 36 գլխի 204 հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ «դատարանը վերանայում է միայն կայացրած վճռի այն մասը, որը վերաբերում է կողմերի հաշտության համաձայնությամբ սահմանված կատարման եղանակին, ժամկետին եւ կարգին»:

«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածը բովանդակում է մասնավորեցում իրականացնող պետական կառավարման լիազորված մարմնի հիմնական իրավասությունների ցանկը, որոնք իրենց բովանդակությամբ չեն բացառում կամ սահմանափակում ՀՀ Սահմանադրությամբ կամ այլ օրենքներով սահմանված այլ լիազորությունների իրականացման հնարավորությունը, չեն հակասում Սահմանադրությամբ նախատեսված իշխանությունների բաժանման, ինչպես նաեւ պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց լիազորությունները միայն Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրելու սկզբունքներին, չեն առաջացնում օրենսդրական բաց, եւ այդ լիազորություններն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 5 հոդվածով սահմանված նորմատիվ իրավական ակտով՝ օրենքով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածի առաջին մասով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.12.1997թ. ընդունված՝ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**11 սեպտեմբերի 2007 թվականի  
ՍԳՈ-714**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ  
ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՅԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**28 սեպտեմբերի 2007թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2005 թվականի մայիսի 16-ին Վարշավայում ստորագրված՝ Ահաբեկչության կանխարգելման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի՝ Հայաստանի Հանրապետության ազ-

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿՎԱԳԻՐ • 1(46)2008

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

գային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ Հ. Հարությունյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Կոնվենցիան ստորագրվել է 2005թ. մայիսի 16-ին Վարշավայում՝ ելնելով մասնակից պետությունների կողմից ահաբեկչության կանխարգելմանն ուղղված ջանքերի համախմբման անհրաժեշտությունից: Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան ստորագրել է 2005թ. նոյեմբերի 17-ին:

Կոնվենցիայի նպատակն է նպաստել ահաբեկչության կանխարգելմանն ուղղված Կողմերի ջանքերին՝ ահաբեկչության եւ մարդու իրավունքների, մասնավորապես կյանքի իրավունքի վրա դրա բացասական հետեւանքները կանխելու նպատակով, թե՛ ազգային, թե՛ միջազգային համագործակցության մակարդակում ձեռնարկվող քայլերի միջոցով՝ հաշվի առնելով Կողմերի միջեւ առկա բազմակողմ կամ երկկողմ պայմանագրերը եւ համաձայնագրերը:

2. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- ձեռնարկել անհրաժեշտ քայլեր ահաբեկչության հանցագործությունները եւ դրանց բացասական հետեւանքները կանխելու նպատակով ազգային մարմինների միջեւ համագործակցությունը զարգացնելու համար տեղեկատվության փոխանակման, անձանց եւ շինությունների ֆիզիկական պաշտպանության կատարելագործման, քաղաքացիական արտակարգ իրավիճակների համար վերապատրաստման եւ համակարգման ծրագրերի կատարելագործման ոլորտներում,

- նպաստել հանդուրժողականությանը՝ խրախուսելով միջկրոնական եւ միջմշակութային երկխոսությունը, ներգրավելով, համապատասխան դեպքերում, հասարակական կազմակերպությունները եւ քաղաքացիական հասարակության այլ տարրերը՝ նպատակ ունենալով կանխել լարվածությունը, որը կարող է նպաստել ահաբեկչական հանցագործությունների իրականացմանը,

- ընդունել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել կոնվենցիայում նշված ապօրինի եւ միտումնավոր ահաբեկչական հանցագործություն կատարելուն ուղղված հրապարակային սադրանքը, ահաբեկչական նպատակներով ապօրինի եւ միտումնավոր հավաքագրումը, ուսուցանումը ՀՀ օրենսդրությամբ քրեական հանցագործություն ճանաչելու համար,

- ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել,

ՀՀ իրավական սկզբունքներին համապատասխան, կոնվենցիայում հիշատակված հանցագործություններին մասնակցելու համար իրավաբանական անձանց քրեական, քաղաքացիական կամ վարչական պատասխանատվություն սահմանելու համար, ինչպես նաև երաշխավորել, որ նման պատասխանատվությունը չի ազդի հանցագործություններ կատարած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության վրա,

- երաշխավորել, որ կոնվենցիայի համաձայն քրեական պատասխանատվության սահմանումը, իրականացումը եւ կիրառումն իրականացվեն՝ հարգելով մարդու իրավունքներին առնչվող պարտավորությունները, մասնավորապես՝ խոսքի ազատության, միավորումներ կազմելու ազատության եւ դավանանքի ազատության իրավունքը՝ սահմանված Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, ինչպես նաև միջազգային իրավունքին համապատասխան ՀՀ ստանձնած այլ պարտավորություններում,

- ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել կոնվենցիայում հիշատակված հանցագործությունների նկատմամբ ՀՀ իրավագործությունը հաստատելու համար՝ այն դեպքերում, երբ հավանական հանցագործը գտնվում է ՀՀ տարածքում, եւ ՀՀ-ն չի հանձնում նրան այն մասնակից պետությանը, որի իրավագործությունը հիմնված է ՀՀ օրենքում հավասարապես առկա իրավագործության կանոնի վրա,

- ստանալով տեղեկատվություն այն մասին, որ անձը, որը կատարել է կոնվենցիայում հիշատակված հանցագործություն կամ կասկածվում է այն կատարելու մեջ, կարող է գտնվել ՀՀ տարածքում՝ ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ՀՀ օրենսդրությանը համապատասխան այդ տեղեկատվության մեջ պարունակվող փաստերը հետաքննելու համար,

- մասնակից մյուս պետություններին ցուցաբերել փոխադարձ առավելագույն աջակցություն կոնվենցիայում նշված հանցագործությունների քրեական հետաքննությունների կամ քրեական կամ հանձնման ընթացակարգերի առումով եւ այլն:

3. Կոնվենցիայով ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 3 եւ 9 հոդվածներին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

րանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2005 թվականի մայիսի 16-ին Վարչապետի ստորագրված՝ Ահաբեկչության կանխարգելման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**28 սեպտեմբերի 2007 թվականի  
ՍԳՈ-715**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱԼՔԵՐՏ ՄՈՎՍԵՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 57 ՀՈԳՎԱԾԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**23 հոկտեմբերի 2007թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝

դիմող՝ քաղ. Ա. Մովսեսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ալբերտ Մովսեսյանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ա. Մովսեսյանի՝ 19.04.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի՝ Ա. Մովսեսյանի և պատասխանողի՝ ՀՀ Ազգային ժողովի բացատրությունները, հե-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տագոտելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002 թվականի նոյեմբերի 19-ին և ուժի մեջ մտել 2003թ. ապրիլի 10-ից:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածը սահմանում է.

«Չստացված կենսաթոշակի գումարները վճարվում են անցած ժամանակահատվածի համար, սակայն կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսվան նախորդող երեք տարուց ոչ ավելի:

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքով չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են առանց ժամկետի սահմանափակման:

Նշված դեպքերում չստացված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ»:

2. Քաղաքացի Ա. Մովսեսյանը 1972-1985թթ. աշխատել է Երևանի թիվ 73 դպրոցում՝ որպես կերպարվեստի ուսուցիչ, միաժամանակ համատեղության կարգով նույն մասնագիտությամբ աշխատել է նաև Երևանի թիվ 49 դպրոցում: Նա 2006թ. օգոստոսի 4-ին դիմել է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի (ՍԱՊՀ) Էրեբունու տարածքային կենտրոն՝ աշխատանքի հատուկ պայմաններում աշխատելու և երկարամյա ծառայության համար տրվող մասնակի կենսաթոշակ նշանակելու, ինչպես նաև նշանակմանը նախորդող երեք տարիների համար չվճարված կենսաթոշակի գումարը միանվագ վճարելու խնդրանքով: ՀՀ ՍԱՊՀ Էրեբունու տարածքային կենտրոնը մերժել է Ա. Մովսեսյանին, և վերջինս դիմել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան՝ խնդրելով նշված կենտրոնին պարտավորեցնել իրեն մասնակի կենսաթոշակ նշանակել, ինչպես նաև նշանակմանը նախորդող երեք տարիների համար չվճարված կենսաթոշակի գումարը միանվագ վճարել: Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թ. դեկտեմբերի 4-ի վճռով հայցը բավարարվել է: ՀՀ ՍԱՊՀ Էրեբունու տարածքային կենտրոնի վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 23-ի վճռով Ա. Մովսեսյանի հայցը բավարարվել է մասնակիորեն: Ա. Մովսեսյանը դիմել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ, որն իր 29.03.2007թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Ա. Մովսեսյանը 19.04.2007թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ գտնելով, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 37 հոդվածի պահանջներին, և այն անհրաժեշտ է անվավեր ճանաչել:

Դիմողը մասնավորապես մատնանշում է, որ վիճարկվող իրավական ակտի 57 հոդվածն առաջացնում է իրավական անորոշություն և իրավակիրառական պրակտիկայում մեկնաբանվում է տարբեր կերպ:

Դիմողի կարծիքով, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածով սահմանված դրույթը ոչ հստակ է ձևակերպված և հնարավորություն չի տալիս միանշանակ հետևություն անել այն մասին, որ այն վերաբերում է թե կենսաթոշակ նշանակելու համար դիմում տալուց հետո չստացված կենսաթոշակի գումարը վճարելուն (ինչպես մեկնաբանել է վերաքննիչ դատարանը), թե Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված սոցիալական ապահովության իրավունք ձեռք բերելու համար անհրաժեշտ պայմանները վրա հասնելու և կենսաթոշակ նշանակելու համար դիմում ներկայացնելու միջև ընկած ժամանակահատվածում չստացված կենսաթոշակի գումարը վճարելուն (ինչպես մեկնաբանել է Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը):

Դիմողի կարծիքով, իր, ինչպես նաև Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի և Լեզվի պետական տեսչության մեկնաբանությամբ ու համոզմամբ, նշված օրենքի 57 հոդվածը չի վերաբերում արդեն իսկ նշանակված կենսաթոշակին, նման պահանջ չի դնում:

Ելնելով վերոհիշյալից, դիմողը գտնում է, որ նշված օրենքի 57 հոդվածի իրավական անորոշության հետևանքով խախտվում է իր կենսաթոշակի իրավունքը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ դիմողի փաստարկները հիմնավոր չեն, և դիմումը ենթակա է մերժման հետեւյալ նկատառումներով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86 հոդվածի 1-ին մասի համաձայն. «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

Նույն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Իրավական ակտի կառուցվածքը պետք է լինի կուռ՝ տրամաբանորեն միասնական, հաջորդական ու համակարգված»: Սինչ-դեռ, ըստ պատասխանողի՝ դիմողը «Պետական կենսաթոշակների մա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

սին» ՀՀ օրենքի 57 հոդվածը վերլուծում է՝ չառաջնորդվելով նույն օրենքի միասնական տրամաբանությամբ: Օրենքի այլ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ խոսքն այստեղ իրականում վերաբերում է նշանակված, բայց չստացված կենսաթոշակներին: Վիճարկվող օրենքի 50 հոդվածի համաձայն՝ կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր է համարվում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով դիմումն ընդունելու օրը, իսկ 51 հոդվածի համաձայն՝ կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից: Որևէ բացառություն վերոհիշյալ հոդվածներում սահմանված չէ: Բացի դրանից, օրենքի 57 հոդվածում օգտագործվում են «չստացված կենսաթոշակ» և «կենսաթոշակ վճարելու համար դիմելու» բառակապակցությունները:

Ըստ պատասխանողի, եթե այդ բառակապակցությունները մեկնաբանվում են տառացի, ապա «չստացված» բառը չի ներառում «չնշանակված» իմաստը, իսկ «կենսաթոշակ վճարելու համար դիմելը» իմաստային առումով տարբերվում է «կենսաթոշակ նշանակելու համար դիմելուց»: Այսպիսով, կենսաթոշակ կարող է ստացվել միայն դրա նշանակվելուց հետո, ինչպես և կենսաթոշակ վճարելու մասին դիմում կարելի է գրել միայն արդեն իսկ նշանակված, սակայն զանազան պատճառներով չստացված կենսաթոշակի համար:

Ելնելով վերոգրյալից, պատասխանողը գտնում է, որ դիմողի բերած հիմնավորումներն ու եզրահանգումը բավարար հիմք չեն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածը ՀՀ Սահմանադրության 37 հոդվածի պահանջներին հակասող ճանաչելու համար:

5. Զննությամբ պարզվեց, որ ըստ էության դիմողի կողմից վիճարկվում է ոչ թե «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածը՝ ամբողջությամբ, այլ հոդվածի 1-ին մասի դրույթը:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, հռչակելով իրեն որպես սոցիալական պետություն, ՀՀ Սահմանադրության 37 հոդվածով նախատեսում և երաշխավորում է յուրաքանչյուր անձի սոցիալական ապահովության իրավունքը, որն իր բովանդակության մեջ ընդգրկում է նաև կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ օրենքով սահմանված ձևերով ու ծավալով: Սահմանադրության 37 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով»:

Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայով (12 հոդված) և

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով (9 հոդված) Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է պարտավորություններ՝ երաշխավորելու մարդկանց սոցիալական ապահովության, ներառյալ սոցիալական ապահովագրության իրավունքը:

7. ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված պահանջները «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում իրացվել են հետևյալ կարգով: Օրենքի 11 հոդվածով սահմանվում են կենսաթոշակի հետևյալ տեսակները՝ ապահովագրական և սոցիալական: Դրանցից առաջինը նշանակվում է անձի աշխատանքային գործունեության և դրա ընթացքում արված պարտադիր սոցիալական ապահովության վճարների հիման վրա, իսկ երկրորդը՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում:

Օրենքի 50 հոդվածի 1-ին և 2-րդ մասերը նախատեսում են. «Կենսաթոշակը քաղաքացու գրավոր դիմումի հիման վրա նշանակում է կենսաթոշակային սոցիալական ապահովագրություն իրականացնող լիազոր մարմնի ստորաբաժանումը... ըստ Հայաստանի Հանրապետությունում նրա հաշվառման վայրի, իսկ հաշվառման վայր չունեցող անձին կենսաթոշակ նշանակվում է ըստ նրա փաստացի բնակության վայրի:

Կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր է համարվում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով դիմումն ընդունելու օրը»:

Այսինքն՝ ընդհանրապես կենսաթոշակի հետ կապված՝ անձի և իրավասու մարմնի միջև իրավահարաբերություններ առաջանալու համար որպես իրավաբանական փաստ օրենսդիրը դիտում է, ՀՀ կառավարության կողմից 29.05.2003թ. թիվ 793 որոշմամբ սահմանված կարգով, դիմում ներկայացնելը և այդ դիմումի հիման վրա կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ ընդունված անհատական իրավակիրառական ակտը:

Օրենքի 51 հոդվածի համաձայն կենսաթոշակը նշանակվում է՝

- 1) դիմելու օրվանից,
- 2) բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե կենսաթոշակի նշանակման դիմումը տրվել է այդ օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում,
- 3) կերակրողի մահվան օրվանից, եթե կենսաթոշակի նշանակման դիմումը տրվել է այդ օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում:

Նշված հոդվածի և 57 հոդվածի վիճարկվող դրույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ անձին կենսաթոշակ նշանակվում է դիմելու օրվանից՝ բացառությամբ 51 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքե-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

րի: Սակայն այս դեպքերում ևս օրենսդիրը սահմանում է որոշակի ժամկետ (եռամսյա և վեցամսյա ժամկետ): Իսկ մնացած դեպքերում, անկախ նրանից, թե կենսաթոշակի իրավունքը ծագելուց հետո որքան ժամանակ է անցել, կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից, և 57 հոդվածի վիճարկվող դրույթում «Չստացված կենսաթոշակի գումարները» արտահայտությունը վերաբերում է կենսաթոշակ նշանակելուց հետո որոշակի հանգամանքների բերումով չստացված կենսաթոշակի համար դիմում ներկայացնելուն և կենսաթոշակը վճարելուն:

8. ՀՀ Սահմանադրության 37 հոդվածի 2-րդ նախադասության համաձայն. «Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով»: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կենսաթոշակ կարող է ստացվել միայն դրա նշանակվելուց հետո, ինչպես և կենսաթոշակ վճարելու մասին դիմում կարելի է գրել միայն արդեն իսկ նշանակված, սակայն զանազան պատճառներով չստացված կենսաթոշակի համար: Ընդ որում, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածը չի սահմանափակում անձի՝ ՀՀ Սահմանադրության 37 հոդվածով նախատեսված իրավունքի լրիվ ծավալով իրացումը, հետևաբար, դիմողի փաստարկները հիմք չեն հանդիսանում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածը ՀՀ Սահմանադրության 37 հոդվածի պահանջներին հակասող ճանաչելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

23 հոկտեմբերի 2007 թվականի  
ՍԳՈ-716

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**Քաղաքացի Ալբերտ Մովսեսյանի դիմումի հիման վրա՝  
Ազգային Ժողովի կողմից 2002 թվականի նոյեմբերի 19-ին ընդունված՝  
Պետական կենսաթոշակների մասին ՀՀ օրենքի 57 հոդվածի՝  
Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը  
համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով՝  
ՀՀ սահմանադրական դատարանի 23 հոկտեմբերի 2007թ.  
ՍԳՈ-716 որոշման կապակցությամբ**

ՀՀ սահմանադրական դատարանի 23 հոկտեմբերի 2007թ. ՍԳՈ-716 որոշման կապակցությամբ ունեմ հետևյալ նկատառումները.

Գործի քննության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը չանդրադարձավ այն փաստին, որ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահ՝ Վ.Խաչիկյանի գրության համաձայն ներկայումս Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակները և պետական սոցիալական ապահովագրության այլ ծրագրերը վճարվում են «ՎՏԲ-Հայաստան բանկ», «Հայփոստ» ՓԲ ընկերությունների միջոցով վերջիններիս հետ կնքած ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա և Հիմնադրամի Վճարումների Ծառայության կողմից:

ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության միջև 2001 թվականի նոյեմբերի 28-ին կնքվել է պայմանագիր, որի համաձայն.«Պատվիրատուն» «Կատարողին» դրամական միջոցներ է հատկացնում «Կատարողին» սպասարկող բանկերում նրա անունով բացված հաշվարկային հաշիվների փոխանցելու միջոցով՝ ՀՀ տարածքում ՀՀ քաղաքացիներին տրվող կենսաթոշակները, երեխայի ծննդյան միանվագ նպաստները...»:

ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության միջև 2001 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 31.10.2005 թվականի համաձայնագրի «գ» ենթակետի համաձայն.«Կենսաթոշակառուներին կենսաթոշակի յուրաքանչյուր ամսվա վճարումը կատարել ֆինանսավորված գումարը «Կատարողի» մասնաճյուղերի ընթացիկ հաշիվներին ամրագրվելուց հետո 12 օրացույցային օրվա ընթացքում»:

Այնուհետև՝ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության միջև 2001 թվականի նոյեմբե-

րի 28-ին կնքված պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 11.12.2006 թվականի համաձայնագրի 3 կետի «բ» ենթակետի համաձայն.««գ» ենթակետում «12» թիվը փոխարինել«15» թվով»»:

Այնինչ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածի առաջին մասը սահմանում է.

«Յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է հաջորդ ամսվա ընթացքում՝ ըստ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակառուի փաստացի բնակության վայրի»:

Իսկ «Պետական կենսաթոշակի մասին»ՀՀ օրենքի 57 հոդվածի առաջին մասը սահմանում է.

«Չստացված կենսաթոշակի գումարները վճարվում են անցած ժամանակահատվածի համար, սակայն կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսվան նախորդող երեք տարուց ոչ ավելի»:

Այս օրենքի հիման վրա ընդունվել է ՀՀ կառավարության 29 մայիսի 2003 թվականի ««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին»» N793-Ն որոշումը, որում նույնպես կենսաթոշակ ստանալու համար ժամկետային սահմանափակում չկա:

Այսինքն ոչ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, ոչ էլ ՀՀ կառավարության թիվ 793 որոշումը կենսաթոշակառուի կենսաթոշակը ստանալու համար որևէ ժամկետային սահմանափակում չեն նախատեսում: Դեռ ավելին՝ օրենքը սահմանում է կենսաթոշակառուի իրավունքը՝ տվյալ ամսվա իր կենսաթոշակը ստանալ հաջորդ ամսվա ողջ ընթացքում: Ուստի ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության միջև 2001 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրով նախատեսված 12 կամ 15-օրյա ժամկետը սահմանափակում է կենսաթոշակառուի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքը:

ՀՀ սահմանադրական դատարանը չի անդրադարձել նաև վիճարկվող՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածով սահմանված 3 տարվա ժամկետին:

ՀՀ Սահմանադրության 36 հոդվածը սահմանում է.«Յուրաքանչյուր որ ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով»:

Իսկ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի երկրորդ մասը սահմանում է.«Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի»:

Այս հարցի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը տվել է իր իրավական դիրքորոշումը իր ՍԳ-Ո-649 որոշմամբ, որը սահմանում է.

«Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է նաև ըստ ԵՎ-րոպական դատարանի նախադեպային իրավունքի»:.

Մարդու իրավունքների ԵՎրոպական դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ կենսաթոշակի իրավունքը, եթե այն հիմնված է մուծումների վրա, որոշակի հանգամանքներում կարող է դիտվել որպես սեփականության իրավունք ((Azinas v. Cyprus ( Judgment, 20 June 2002))):

Դատարանն իր Gaygusuz v. Austria (16 September 1996, Reports of Judgments and Decisions 1996-IV, § 04.02.0804.02.0839-41) գործով կայացրած որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Սոցիալական վճարներ ստանալու իրավունքը կապված է ներդրված վճարների հետ, եթե նման ներդրումներ կատարվել են, ապա չի կարող մերժվել այդ անձի նկատմամբ թոշակի նշանակումը»:

Այսպիսով գտնում են, որ թե՛ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում, թե՛ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և «Հայխնայբանկ» ՓԲ ընկերության միջև կնքված պայմանագրում սահմանված ժամկետները սահմանափակում են կենսաթոշակառուի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սոցիալական ապահովության և սեփականության իրավունքները և ՀՀ սահմանադրական դատարանը այս հարցի վերաբերյալ պետք է արտահայտեր իր իրավական դիրքորոշումը:

**ՀՀ ՍԳ անդամ՝**

**Կ. Բալայան**

**29.10.2007թ.**



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**\* Նոյեմբերի 21-ին (2007թ.)** ՍԳ նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանում Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության ներկայացուցչության գրասենյակի նորանշանակ ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսին: Պարոն Հարությունյանը ծանոթացրեց ՍԳ գործունեությանը, սահմանադրական բարեփոխումներից հետո «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ նոր օրենքին, դրա պահանջներից բխող վերակառուցումներին եւ Սահմանադրությամբ ՍԳ դիմող սուբյեկտների շրջանակի ավելացման հետ կապված աշխատանքներին: Հյուրի խնդրանքով մանրամասնեց քաղաքացիների դիմումների քննության ընթացակարգը, օրինակներ ներկայացրեց քննության առնված գործերից ու համապատասխան որոշումներից: Երկուստեք հույս հայտնեցին, որ ՍԳ նման գործունեությունը պետք է որ զգալիորեն նվազեցնի Հայաստանից Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվելիք դիմումները:

Պարոն Հարությունյանը հաջողություն մաղթեց Կապինոսին իր առաքելության կատարման գործում, պատրաստակամություն հայտնելով, որ իր կողմից հնարավորինս կաջակցի ԵԱՀԿ-ՍԳ համագործակցությունն ավելի խորացնելու գործին՝ ի նպաստ Հայաստանում սահմանադրական արդարադատության ամրապնդմանը:

**\* Դեկտեմբերի 3-ին (2007թ.)** ՍԳ նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի մոնիտորինգի հանձնաժողովի համագեկուցող Ժորժ Կոլոմբիեին եւ նրան ուղեկցող պատվիրակությանը:

Հյուրը մասնավորապես հետաքրքրվեց ՍԳ դիմող քաղաքացիների դիմումների ընդունման ու քննության ընթացակարգով, առաջիկա նախագահական ընտրությունների հետ կապված օրենսդրական դաշտի ներկա վիճակով եւ ստացավ մանրամասն ու սպառիչ տեղեկություններ:

Երկուստեք հույս հայտնեցին, որ առաջիկա ընտրությունները կանցնեն օրենսդրության սահմաններում, որը կարելու է փոխվորակարության ուղին ընտրած երկրի համար:

**\* Հունվարի 29-ին** Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Եվրախորհրդի խորհրդարանական

վեհաժողովի դիտորդական առաքելության ղեկավար Ջոն Պրեսկոտին եւ նրա գլխավորած պատվիրակությանը: Հյուրերի խնդրանքով ՄԴ նախագահը ներկայացրեց սահմանադրական եւ օրենսդրական փոփոխությունների արդյունքում ընտրական իրավունքի դատական պաշտպանության առանձնահատկությունները եւ ներկայումս գործող կարգը Հայաստանի Հանրապետությունում:

*\* Հունվարի 31-ին* Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության ղեկավար, դեսպան Գեռտ-Արենսին՝ ընկերակցությամբ առաքելության իրավական վերլուծաբան Զերեն Գեյների:

Հյուրերը ՄԴ նախագահից պարզաբանումներ խնդրեցին ՀՀ սահմանադրական փոփոխությունների արդյունքում ընտրական վեճերի քննության առանձնահատկությունների եւ այդ հարցում Սահմանադրական դատարանին՝ ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 3.1 կետով (լուծում է Հանրապետության Նախագահի եւ պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը) վերապահված լիազորության մասին:

Զրույցի ընթացքում միաժամանակ անդրադարձ կատարվեց ընտրական իրավունքի դատական պաշտպանության ողջ համակարգին եւ այդ հարցում վարչական դատարաններին վերապահված նոր դերակատարությանը:

*ՄԴ մամուլի ծառայություն*

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71  
E-mail: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 15.02.2008 թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաչափը՝ 70x100 1/16  
Տպաքանակը՝ 500

*ՀՀ ՄԳ տեղեկագիրը ՀՀ  
քարչրագույն որակավորման  
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է  
այն նախատությունների արդյունքների  
տպագրման համար ընդունելի  
պարբերականների ցանկում*